
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2024թ. ապրիլի 2 – ի թիվ 18 - Ա որոշմամբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2024

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՄԱՍ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 4
ՄԱՍ 2. ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ 7
2.1.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ..... 7
2.2.ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐ 9
2.3.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ 10
2.4. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 15
2.4.1. Ազգային հաշիվների համակարգ 15
2.4.2. Արդյունաբերություն 16
2.4.3. Գյուղատնտեսություն և պարենային ապահովություն..... 19
2.4.4. Շինարարություն 21
2.4.5. Տրանսպորտ և կապ 22
2.4.6. Առևտուր և այլ ծառայություններ 23
2.4.7. Գներ և սակագներ 25
2.4.8. Աշխատանքի շուկա..... 29
2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ 32
2.6. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ 34
2.7. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 36
2.7.1. Սոցիալական ոլորտ 36
2.7.2. Բնապահպանություն 37
2.7.3. Տնային տնտեսությունների հետազոտություն 39
2.7.4. Ժողովրդագրություն..... 41
2.7.5. Որակի կառավարում..... 46
ՄԱՍ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ 53
ՄԱՍ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 60
ՄԱՍ 5. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 73
ՄԱՍ 6. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 75
ՄԱՍ 7. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 77
ՄԱՍ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ..... 78

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը» մշակվել է ի կատարումն «Պաշտոնական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածների և արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ[1] սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

«Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական հնգամյա ծրագրով» (այսուհետ՝ Հնգամյա ծրագիր) նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները մշակվել և իրականացվել են հաշվի առնելով երկրի ցուցանիշների՝ միջազգային վիճակագրական չափանիշների հետ համադրելիությունը, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով՝ ցուցանիշների հնարավոր կայուն պարբերականությունը, ինչպես նաև տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված միջոցառումների (աշխատանքների) իրագործման ենթատեքստով՝ պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների (ֆինանսավորման) հետ համաչափությունը:

Հնգամյա Ծրագրով սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների ենթատեքստով՝ Խորհրդի կողմից յուրաքանչյուր տարի հաստատվել են նաև տարեկան վիճակագրական ծրագրերը[2], որոնք համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի, ներառել են հետևյալ պարտադիր բաղադրիչները. տարածման ենթակա ողջ պաշտոնական վիճակագրությունը, պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից իրականացվելիք վիճակագրական հետազոտությունները, պաշտոնական վիճակագրություն արտադրողներին վարչական տվյալների կամ այլ աղբյուրների տվյալների տրամադրման բոլոր դեպքերը, պաշտոնական վիճակագրության հիմնական մշակումները, վիճակագրական ռեգիստրների վարման և մշակման միջոցառումները:

Ըստ այդմ, հիմք ընդունելով տարեկան վիճակագրական ծրագրերով սահմանված աշխատանքները (միջոցառումները), հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալն ըստ ծածկագրերի կազմել է 2364 (ըստ տարիների, 2019թ.՝ 473, 2020թ.՝ 477, 2021թ.՝ 469, 2022թ.՝ 472 և 2023թ.՝ 473), իսկ հաշվի առած դրանց հաճախականությունը՝ կազմել է 10419 միավոր (ըստ տարիների, 2019թ.՝ 2124, 2020թ.՝ 2061, 2021թ.՝ 2063, 2022թ.՝ 2076 և 2023թ.՝ 2095), որոնք բոլորն էլ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ծրագրերով սահմանված ժամկետներում և հաճախականությամբ:[3]:

---

[1] Ընդունված Խորհրդի՝ 2018թ. հոկտեմբերի 31-ին: Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126425:

[2] 2019, 2020, 2021, 2022 և 2023 թվականների տարեկան վիճակագրական ծրագրերը հաստատվել են Խորհրդի, համապատասխանաբար՝ 2018թ. նոյեմբերի 30-ի թիվ 70-Ն, 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 61-Ն, 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 23-Ն, 2021թ. դեկտեմբերի 21-ի թիվ 18-Ն և 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 09-Ն որոշումներով: Տե՛ս https://www.armstat.am/am/?nid=191&year=2023:

[3] Հիմք՝ վերը հիշատակված տարեկան ծրագրերի կատարման հրապարակված հաշվետվությունները («2019 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը»՝ հաստատված Խորհրդի 2020թ. փետրվարի 27-ի թիվ 08-Ա որոշմամբ, Երևան - 2020, «2020 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը»՝ հաստատված Խորհրդի 2021թ. մարտի 1-ի թիվ 06-Ա որոշմամբ, Երևան – 2021, «2021 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը»՝ հաստատված Խորհրդի 2022թ. մայիսի 18-ի թիվ 09-Ա որոշմամբ, Երևան – 2022, «2022 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը»՝ հաստատված Խորհրդի 2023թ. մարտի 14-ի թիվ 05-Ա որոշմամբ, Երևան – 2023 և «2023 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը»՝ գտնվում է հաստատման փուլում): Տե՛ս https://www.armstat.am/am/?nid=191&year=2023:

ՄԱՍ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղորդված է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով (մշակված «Պաշտոնական վիճակագրության մոդելային օրենք Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար» հիման վրա, Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, Նյու Յորք և Ժնև, 2016թ.) սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը և խարսխվում է ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների, Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի սահմանված սկզբունքների, Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտների և նորմերի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի մոդեռնիզացման ստանդարտների և գործիքների, Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջների, ինչպես նաև Եվրամիության (այսուհետ՝ ԵՄ) փորձագետների կողմից (Եվրոպական հանձնաժողով՝ Եվրոստատ, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիա, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ Արմստատ) և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատման արդյունքների (2018թ.) և Եվրոստատի փորձագետների կողմից ոլորտային գնահատումների դրույթների վրա:

Վիճակագրությունը ցանկացած երկրում մշտապես «դատապարտված» է գտնվելու (զբաղվելու) վիճակագրական տեղեկություն սպառողների (օգտագործողների), սկզբնական վիճակագրական տեղեկություններ տրամադրողների և հարկատուների կողմից վիճակագրությանը հատկացվող քրոնիկ անբավարար ռեսուրսների հակադրության «եռանկյունու» կենտրոնում (որոնց հակումներն ու շահերը տարաբևեռ են), և դրանով պայմանավորված՝ վիճակագրությունը գործ ունի ոչ թե երկընտրանքային փիլիսոփայության մենեջմենթի, այլ բազմընտրանքային մատրիցայով բնութագրվող փիլիսոփայությամբ մենեջմենթի հետ: Մյուս կողմից՝ վիճակագրությունը գործ ունի ևս մեկ բարդ եռանկյունու հետ, որի հակադիր բևեռներն են ժամանակը, ցուցանիշների ամբողջականությունը և որակը, ինչը գիտական վիճակագրության առանձնահատկություններից է (այն դատապարտված է երևույթի վերաբերյալ կիրառելու գիտական աբստրահում, հաշվի առնել վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկվածների կոմունիկացիոն (մասնագիտական) ունակությունները և տեղեկատվության արդիականության մասին օգտագործողների պատկերացումները):

Հաշվետու ժամանակաշրջանում նշված բազմագործոն (մատրիցային) խնդիրների լուծման հիմնական ուղղություններից է եղել վիճակագրական տեղեկության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրությունը և դրա հիման վրա՝ վիճակագրական հրապարակումների կատարելագործումը, հատկապես առցանց ռեժիմով, կարճ ժամանակահատվածում վիճակագրական տեղեկության նկատմամբ օգտագործողների ընթացիկ պահանջարկի հնարավորինս բավարարումը: Տվյալների արժանահավատության ապահովման ոլորտում

որդեգրվել և հնարավորինս իրագործվել է սկզբնական, անվանական տվյալների գաղտնիության սկզբունքի վրա խարսխված՝ «տեղեկատվության տրամադրող - վիճակագիր» երկխոսային համակարգում փոխադարձ վստահության և գործընկերության հարաբերությունների ձևավորման վարքագիծը: Տեղեկատվության օպերատիվության ապահովումը ենթադրում է օգտագործողներին պահանջվող որակի և ծավալի տեղեկությունների տրամադրում՝ սահմանված ժամկետներում, մշակված ձևով (առցանց, կրիչներով, թղթային և այլն): Սակայն այդ բնագավառում Արմստատը, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվել է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) ռեալ սահմանափակումների հետ:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, ինչպես նաև հիմք ընդունելով Հնգամյա ծրագրով սահմանված դրույթներն ու խնդիրները և դրանց հիմքում դրված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները, հաշվետու ժամանակահատվածում վիճակագրության զարգացումն իրականացվել է հետևյալ հիմնական միջոցառումային ծրագրերի շրջանակում.

1) վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով Արմստատի միջազգային համագործակցության շարունակում և ընդլայնում.

2) վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով տեղեկությունների տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքների շարունակում (մասնավորապես ըստ ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), որոնք ենթադրում են նաև Արմստատի պաշտոնական կայքի անխափան շահագործում և տեղեկությունների կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում.

3) վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ ներկայում գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքների շարունակում՝ տեղեկությունների որակի, ամբողջականության և արժանահավատության վրա հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու, ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածության հնարավորինս նվազեցման նպատակով.

4) տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կոդավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման, ինչպես նաև պաշտոնական վիճակագրությունում արդեն իսկ ներդրված ու կիրառվող դասակարգիչների արդիականացման շարունակական ապահովում.

5) բիզնես-ռեգիստրի տվյալների բազայի (տնտեսավարող սուբյեկտների մասով)

համալրում, արդիականացում և ամբողջականացում և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում տեղեկությունների հավաքման ընտրանքային եղանակների կիրառմանն ու ընդլայնմանը.

6) վարչական ռեգիստրների միջոցով տեղեկությունների հավաքման մեխանիզմի կիրառման ընդլայնում՝ հաշվի առնելով տարեկան վիճակագրական ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը.

7) տեղական (համայնքային) վարչական ռեգիստրների (ներառյալ՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմի ու բովանդակության կատարելագործում և ընդլայնում.

8) գենդերային (ըստ սեռի) վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքների շարունակում.

9) ցուցանիշների մշակման յուրաժամանակության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկությունների էլեկտրոնային եղանակովհավաքման ուղղությամբ միջոցառումների իրականացում.

10) պաշտոնական վիճակագրության նկատմամբ վստահության բարձրացում՝ կատարելագործելով վիճակագրության համապատասխան իրավական դաշտն ու տվյալների տարածումը, առավել խորն ուսումնասիրելով օգտագործողների պահանջները և կարիքները, վիճակագրության լայնորեն օգտագործմանը նպաստում, այդ թվում՝ որոշումներ ընդունելիս, մշտադիտարկում և գնահատականներ իրականացնելիս.

11) երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրերի, ժողովածուների և այլն) թողարկման շարունակում, ինչպես նաև դրանց կազմի, բովանդակության ու թեմատիկ ընդգրկման կատարելագործում՝ վիճակագրական տեղեկության օգտագործողների պահանջարկի առավել ամբողջական բավարարման նպատակով.

12) վիճակագրական տեղեկության օգտագործողների համար Արմստատի պաշտոնական կայքից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմի կատարելագործում:

Հաշվետու ժամանակաշրջանում, Արմստատի վարքագիծն ամբողջապես խարսխվել է վերոնշյալ ռազմավարությունների վրա:

ՄԱՍ 2. ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հաշվի առնելով Հնգամյա ծրագրով սահմանված՝ վիճակագրության զարգացման ռազմավարական ուղղությունները, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ընդհանուր գործառութային հետևյալ հիմնական միջոցառումները (աշխատանքները).

2.1. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է Խորհրդի 99 նիստ (այդ թվում՝ 2019թ.-ին՝ 16, 2020թ.-ին՝ 15, 2021թ.-ին՝ 16, 2022թ.-ին 37 և 2023թ.-ին՝ 15): Նիստերի ընթացքում քննարկվել է 309 հարց (այդ թվում՝ 2019թ.-ին՝ 68, 2020թ.-ին՝ 52, 2021թ.-ին՝ 53, 2022թ.-ին 59 և 2023թ.-ին՝ 77) և արդյունքում ընդունվել 396 որոշում (այդ թվում՝ 2019թ.-ին՝ 117, 2020թ.-ին՝ 63, 2021թ.-ին՝ 49, 2022թ.-ին՝ 49 և 2023թ.-ին՝ 118), որից՝ 194 նորմատիվ բնույթի (այդ թվում՝ 2019թ.-ին՝ 61, 2020թ.-ին՝ 32, 2021 թ.-ին՝ 19, 2022թ.-ին 13 և 2023թ.-ին՝ 69) և 202 անհատական (այդ թվում՝ 2019թ.-ին՝ 56, 2020թ.-ին՝ 31, 2021 թ.-ին՝ 30, 2022 թ.-ին 36 և 2023թ.-ին՝ 49) որոշում:

1. «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների պահանջների կատարման, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության բնագավառը կարգավորող իրավահարաբերությունների հստակեցման ու կանոնակարգման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հետևյալ հիմնական միջոցառումները.

1) ի կատարումն Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի պահանջի՝ Խորհրդի հաստատմանն է ներկայացվել 2019 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 13-Ա որոշումը[1], որով հաստատված հաշվետվությունն արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը (Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 09.04.2018թ., ազգային վիճակագրական համակարգի հայեցակարգային մոտեցումները և զարգացման գերակա ուղղությունները սահմանվել են Հնգամյա վիճակագրական ծրագրով (Օրենքի 15-րդ հոդված):).

[1] Տես՝ https://www.armstat.am/file/doc/99513608.pdf

2) ի կատարումն Օրենքի հոդված 11-ի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթների, մշակվել և վիճակագրական տեղեկատվության թվով 128 օգտագործողների (այդ թվում՝ պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, հասարակական միություններ, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն) կարծիքին էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» Խորհրդի որոշման նախագիծը: Նախագիծը միաժամանակ զետեղվել էր Արմստատի պաշտոնական կայքում՝ արձագանքման ակնկալիքով:

«Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագիրը» ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Որոշումն ընդունվել է Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 23-ի նիստում[2]:

3) շարունակվել են վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման, ամբողջականացման, ինչպես նաև արդեն իսկ ընդունված ու կիրառվող իրավական ակտերի՝ օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ընդհանուր առմամբ, հարկ է փաստել, որ պաշտոնական վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտն արդեն իսկ ձևավորված է, և շարունակվում է դրա կատարելագործմանը միտված գործունեությունը.

4) Խորհրդի անհատական որոշումներով կարգավորվել են վարչական ռեգիստրներից վիճակագրական տվյալների ստացման նպատակով վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերի, հետազոտությունների հարցաթերթերի հաստատմանը, միջազգային վիճակագրական համագործակցությանն առնչվող տարաբնույթ և այլ ընթացիկ աշխատանքային հարցեր.

5) «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացվել է Արմստատի տվյալների հավաքման առցանց համակարգի ռեսպոնդենտի պորտալի (այսուհետ՝ Պորտալ) ներդրումը, որի հասանելիությունն ապահովվում է e-reporting.armstat.am կայքի միջոցով: Խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ Պորտալը հանդիսանում է ռեսպոնդենտների՝ վիճակագրական տվյալներ տրամադրողների, կողմից վիճակագրական տվյալների ներկայացման եղանակներից մեկը, ինչը հնարավորություն է ընձեռում անհրաժեշտ վիճակագրական տվյալները ներկայացնել նաև առցանց եղանակով:

[2] Տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186099

2.2. ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐ

ԱՄՀ վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ՝ ՏՏԸՀ (1997 թվականի դեկտեմբեր) և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ՝ ՏՏՀՍ (1996 թվականի մարտ): Թվարկվածներից ՏՏԸՀ-ին ՀՀ-ն անդամագրվել է դեռևս 2001 թվականի մարտի 29-ին:

Արմստատի, ՀՀ ֆինանսների նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ-ն անդամակցեց ՏՏՀՍ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), կատարելով կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՏՏՀՍ-ն պարունակում է մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ https://dsbb.imf.org/: Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայում ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) անգլերենով ՏՏՀՍ-ի տվյալների կատեգորիաների մասով ՀՀ վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է Արմստատի կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ https://armstat.am/nsdp/:

Արմստատի պաշտոնական կայքէջի «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» հատվածի «Մեթատվյալներ» ենթահատվածում զետեղված են նաև մեթատվյալների հայերեն տարբերակները:

ՏՏՀՍ-ն ներառում է 22 խումբ ցուցանիշներ, որոնք ընդգրկված են իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներում: Այդ ցուցանիշների արդիականացումն իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ առնվազն տարեկան կտրվածքով: Տվյալների արդիականացման ժամկետները ներկայացված են Արմստատի կողմից վարվող նախապես տարածման օրացույցի էջում՝ https://armstat.am/nsdp/arc/:

2009 թվականի փետրվարի 10-ին ԱՄՀ-ի պաշտոնական կայքում (https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2016/12/31/Armenia-Report-on-Observance-of-Standards-and-Codes-FATF-Recommendations-for-Anti-Money-23522) զետեղվել է Հայաստանի վերաբերյալ ԱՄՀ-ի Ստանդարտների և կոդերի պահպանման զեկույցը, որը ներառում է

տվյալների որակի գնահատման ձևաչափի օգտագործմամբ մանրամասն գնահատումը:

2023թ. սեպտեմբերից Արմստատը, համագործակցելով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԲ հետ, նախաձեռնել է ԱՄՀ ՏՏՀՍ Պլյուսին (որը ներկայում համարվում է պաշտոնական վիճակագրության ամենախիստ ստանդարտը) անդամագրվելու գործընթացը:

2.3. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ

Հաշվետու ժամանակաշրջանում, տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված վարչական ռեգիստր հանդիսացող պետական մարմիններից, մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից (այսուհետ՝ ԱՆԻԱՊՌԳ) և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) ստացվել են իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և այլնի վերաբերյալ տվյալներ, որոնք որպես բիզնես ռեգիստրի համար կիրառվող անուղղակի աղբյուրների տեղեկություններ օգտագործվել են բիզնես ռեգիստրի արդիականացման նպատակով: Բացի այդ, Արմստատի մարզային ու Երևան քաղաքի վարչություններից, ինչպես նաև վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել, ստուգաճշտվել և ամփոփվել են վիճակագրական մշտադիտարկումներում առկա վիճակագրական միավորների վերաբերյալ տեղեկությունները, որոնք ևս կիրառվել են բիզնես ռեգիստրի արդիականացման նպատակով՝ որպես տվյալների ուղղակի աղբյուրներ: Արդյունքում, արդիականացվել են հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող տարիներին տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների անվանական, հասցեական, ինչպես նաև տնտեսական գործունեության տարեկան արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես՝ տնտեսական գործունեության իրականացման վայրի, գտնվելու վայրի, տնտեսական գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակի, շրջանառության և այլնի վերաբերյալ: Այսպես, 2019թ.-ին արդիականացվել են շուրջ 79300, 2020թ.-ին՝ 91000, 2021թ.-ին՝ 93400, 2022թ.-ին՝ 110400 և 2023թ.-ին՝ 126900 գործող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները:

Բիզնես ռեգիստրի վարման ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ՊԵԿ-ի ու Արմստատի միջև իրականացված քննարկումների արդյունքում մշակվել և ՀՀ կառավարության 08.12.2021թ.-ի թիվ 1458-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ հարկային գաղտնիք համարվող տեղեկությունները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին տրամադրելու կարգը», որով կարգավորվում են ՀՀ ՊԵԿ-ի կողմից

տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ հարկային գաղտնիք համարվող տեղեկությունները Արմստատին տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Մշակվել և Խորհրդի 05.05.2021թ.-ի թիվ 13-Ա որոշմամբ հաստատվել է «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման» նոր կարգ, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված/հաշվառված և գործող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և այլնի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի, ձևավորման, արդիականացման, ինչպես նաև դրանում պահվող տեղեկությունների օգտագործման հետ կապված հարաբերությունները:

3. Կատարելագործվել են բիզնես ռեգիստրի վերաբերյալ հավաքված/ստացված տեղեկությունների համադրման և ստուգաճշտման գործիքակազմերը: Այդ նպատակով ՀՀ ՊԵԿ-ին և ԱՆԻԱՊՌԳ-ին հետադարձ պաշտոնական գրություններով ներկայացվել են նրանցից ստացված տվյալներում բացահայտված անճշտությունների, ամբողջականության խախտումների, գործող դասակարգիչներին չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկությունները:

4. Արդիականացվել են բիզնես ռեգիստրից ելքային տվյալների ստացման գործիքակազմերը:

5. Ռեսպոնդենտների հետ տարվող աշխատանքների դյուրացման նպատակով արդիականացվել է Արմստատի պաշտոնական կայքի «Վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ընթացակարգ» բաժնի բովանդակությունը, որում հաշվետու ժամանակաշրջանում ներառվել է ռեսպոնդենտի կողմից ներկայացման ենթակա հաշվետվությունների փնտրման համակարգն ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի:

6. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցմանը միտված շարունակական իրականացվող աշխատանքների արդյունքում, ի հաշիվ վիճակագրական հաշվետվությունների ձևերում ներառված հարցերի քանակի և հաշվետվությունների ներկայացման պարբերականությունների կրճատման, հաշվետու ժամանակաշրջանի վերջում ռեսպոնդենտների ծանրաբեռվածության ցուցանիշը 2018թ.-ի նկատմամբ կրճատվել է 5.75, իսկ բազիսային՝ 2010թ.-ի նկատմամբ՝ 57.2 տոկոսային կետով:

Բիզնես ռեգիստրի արդիականացված տվյալների շտեմարանի տեղեկությունների օգտագործման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ամսական պարբերականությամբ նախապատրաստվել են ամփոփ տվյալներ ԱՆԻԱՊՌԳ-ի միասնական գրանցամատյանում տնտեսավարող սուբյեկտների սկզբնական գրանցումների վերաբերյալ, որոնք հրապարակվել են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը տեղեկատվական ամսական զեկույցներում:

2. Տարեկան պարբերականությամբ նախապատրաստվել և հրապարակվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագիրը, ինչը բովանդակում է տնտեսավարողների քանակի, վարձու աշխատողների թվաքանակի ու աշխատավարձի, շրջանառության, ավելացված արժեքի, ինչպես նաև բիզնես

ժողովրդագրության ցուցանիշների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը: Ընդ որում, 2023թ.-ին հրապարակված տեղեկագրում նշված ցուցանիշները համալրվել են տնտեսավարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հաշվարկված հարկերի վերաբերյալ նոր ցուցանիշներով:

3. Բիզնես ռեգիստրի տվյալներն ըստ անհրաժեշտության օգտագործվել են Արմստատի կողմից իրականացված համատարած հաշվառումների և ընտրանքային դիտարկումների (հետազոտությունների) անցկացման նպատակով: Բացի այդ բիզնես ռեգիստրի տվյալներն օգտագործվել են նաև վիճակագրական տեղեկություններ օգտագործողների և միջազգային կազմակերպությունների կողմից Արմստատին ներկայացված տեղեկության հարցումներին պատասխանելու նպատակներով:

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկության դասակարգման և ծածկագրման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվետու ժամանակաշրջանում Արմստատի կողմից շարունակվել են դասակարգիչների մշակման, ներդրման ու կիրառման աջակցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, մասնավորապես.

1. Շարունակվել են դասակարգիչների կիրառման աջակցման աշխատանքները՝ ինչպես տնտեսավարող սուբյեկտների (այդ թվում՝ ռեսպոնդենտների), այնպես էլ շահագրգիռ՝ վարչական ռեգիստր վարող պետական մարմինների շրջանում:

2. «Տնտեսական գործունեության տեսակների (այսուհետ՝ ՏԳՏԴ-ի խմբ. 2-ի)» 5-րդ՝ ազգային նիշի մակարդակում իրականացվել են անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ, որի արդյունքում մանրամասնեցվել են նոր տնտեսական գործունեության տեսակներ՝ շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա:

3. Եվրոպական համայնքի «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի 2008թ. վերանայված տարբերակի» (այսուհետ՝ ԱԴԳՏ) հիման վրա մշակվել է «Մեծածախ և մանրածախ առևտրի ծառայություններ, ավտոտրանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգման ծառայություններ (9-նիշ մակարդակով) դասակարգիչը»՝ հաշվի առնելով նաև ոլորտի ազգային առանձնահատկությունները:

4. ԱԴԳՏ հիման վրա մշակված «Արդյունաբերական արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակով) դասակարգչի» ազգային նիշերի մակարդակում իրականացվել են փոփոխություններ ու լրացումներ:

5. «Ազգային հաշիվների համակարգ-2008» (այսուհետ՝ ԱՀՀ-2008) սահմանումներին համապատասխան և պայմանավորված հիմնական ֆոնդերի միօրինակ կոդավորման պահանջով, մշակվել է «Հիմնական ֆոնդերի վիճակագրական դասակարգիչը»:

6. «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգչում» իրականացվել են փոփոխություններ ու լրացումներ ԱՀՀ-2008-ի մեթոդաբանական դրույթներին

համապատասխան՝ հաշվի առնելով նաև բյուջետային համակարգի մասին ազգային օրենսդրության առանձնահատկությունները:

7. ԱՀՀ-2008-ի մեթոդաբանական դրույթներին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները մշակվել և սահմանված կարգով հաստատվել է «Ֆինանսական ակիտվների դասակարգիչը»:

8. Կրթության միջազգային ստանդարտ դասակարգչի (այսուհետ՝ ԿՄՄԴ-2011) հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով կրթության ոլորտի ազգային առանձնահատկությունները, այդ թվում՝ վիճակագրության մշակման, արտադրության ու տարածման գործընթացներում կիրառման նպատակով մշակվել և սահմանված կարգով հաստատվել է «Կրթության ազգային դասակարգիչը»:

9. Պայմանավորված ՏԳՏԴ խմբ. 2-ի 2020թ. վերանայված տարբերակի հաստատմամբ, մշակվել և սահմանված կարգով հաստատվել է «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 1-ին և 2-րդ խմբագրությունների տնտեսական գործունեության տեսակների ու դրանց ծածկագրերի անցումային բանալիների համեմատական աղյուսակը»:

10. Եվրասիական տնտեսական միության վիճակագրական դեպարտամենտի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության հիման վրա, վիճակագրական տեղեկության մշակման, ամփոփման, համադրման, տարածման ու միջազգային մակարդակում փոխանակման գործընթացների իրականացման համար մեթոդաբանական հենք ստեղծելու անհրաժեշտությամբ պայմանավորված, մշակվել և սահմանված կարգով հաստատվել է «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ-2017) 4-րդ նիշ, ԱԴԳՏ 6-րդ նիշ և ՏԳՏԴ խմբ.2-ի 4-րդ նիշ մակարդակների միջև անցումային բանալիների համեմատական աղյուսակը»:

11. Եվրոստատի համապատասխան մեթոդաբանական հենքով Եվրասիական տնտեսական միության վիճակագրական դեպարտամենտի կողմից ընդունված ու կիրառվող մեթոդաբանության հիման վրա, վիճակագրական տեղեկատվության հավաքման, մշակման, ամփոփման, համադրման, տարածման ու միջազգային մակարդակում փոխանակման գործընթացների իրականացման նպատակով մշակվել և սահմանված կարգով հաստատվել են «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորումն՝ ըստ ՏԳՏԴ խմբ.2-ի», «Տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորումն՝ ըստ ՏԳՏԴ խմբ.2-ի», «Զանգվածային տեղեկատվության միջոցների ու կոնտենտի ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորումն՝ ըստ ՏԳՏԴ խմբ.2-ի»:

12. Պայմանավորված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում 2020-2023 թթ.-ի ընթացքում իրականացված մի շարք փոփոխություններով ու լրացումներով, Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ փոփոխությունների

ու լրացումների է ենթարկվել և սահմանված կարգով հաստատվել «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչը»:

13. ՄԱԿ վիճակագրական հանձնաժողովի 49-րդ նստաշրջանում որպես միջազգային ստանդարտ ընդունված «Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգչի» (COICOP-2018, այսուհետ՝ ԱՍԸՆԴ) հիման վրա մշակվել է համանուն դասակարգչի ազգային տարբերակի նախագիծ: Նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է շահագրգիռ պետական մարմիններում, սակայն դրա սահմանված կարգով հաստատման գործընթացը հետաձգվել է՝ պայմանավորված միջազգային մակարդակում ԱՍԸՆԴ -ում նախատեսվող փոփոխությունների ու լրացումների իրականացմամբ:

14. Եվրասիական տնտեսական միության վիճակագրական դեպարտամենտի կողմից ընդունված ու կիրառվող համապատասխան մեթոդաբանության հիման վրա, վիճակագրական տեղեկատվության մշակման, ամփոփման, համադրման, տարածման ու միջազգային մակարդակում փոխանակման գործընթացների իրականացման համար մեթոդաբանական հենք ստեղծելու անհրաժեշտությամբ պայմանավորված, մշակվել և սահմանված կարգով հաստատվել է «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի դասակարգչային հավաքական խմբավորումը՝ համաձայն «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգչի» և «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի»»:

15. Եվրասիական տնտեսական միության վիճակագրական դեպարտամենտի կողմից ընդունված ու կիրառվող համապատասխան մեթոդաբանության հիման վրա մշակվել և սահմանված կարգով հաստատվել են «Բարձր տեխնոլոգիական մակարդակի տնտեսական գործունեության տեսակների դասակարգչային հավաքական խմբավորումն ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի», «Գիտելիքահեն տնտեսական գործունեության տեսակների (ծառայությունների) դասակարգչային հավաքական խմբավորումն ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի» և «Բարձր տեխնոլոգիական ապրանքների հավաքական խմբավորումն ըստ ԱՏԳ ԱԱ-ի»

16. 2017-2023թթ.-ի ընթացքում հաստատված «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչների» համադրելիությունն ապահովելու նպատակով իրականացվել է վարչատարածքային միավորների ծածկագրերի միջև անցումային բանալիների մշակում:

2.4. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2.4.1. Ազգային հաշիվների համակարգ

Հայաստանում ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանությունը խարսխված է ԱՄՀ-ի, ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի Եվրոպական հանձնաժողովի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից համատեղ մշակված և որպես միջազգային համընդհանուր ստանդարտ ընդունված «Ազգային հաշիվների համակարգ» և «Եվրոպական հաշիվների համակարգ» միջազգային մեթոդաբանությունների հիմքերի վրա:

2019-2023թթ.-ի ընթացքում իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

• ԱՀՀ-2008» և «Եվրոպական հաշիվների համակարգ-2010» միջազգային մեթոդաբանությունների համաձայն կազմվել են 2017-2021թթ.-ի համար ողջ տնտեսության, ինչպես նաև տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների մակարդակով Հայաստանի ազգային հաշիվների համակարգի տարեկան հաշիվները, ինչպես նաև 2017-2023թթ.-ի եռամսյակային հաշիվները:

• «ԱՀՀ-2008 մեթոդաբանական հենքով համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) արժեքի և շարժընթացի հետընթաց վերանայումների աշխատանքների իրականացում» միջոցառման համատեքստում 2022 թվականից սկսած Հայաստանի եռամսյակային ազգային հաշիվների ցուցանիշների սեզոնային ճշգրտումն իրականացվում է ԱՄՀ-ի «Եռամսյակային ազգային հաշիվներ 2017» ձեռնարկի կողմից առաջարկվող X13-ARIMA-SEATS մեթոդով և «JDemetra+ 2.2.2» ծրագրով, որը ներդրվել է Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրների բարեկեցության և կայունության ճապոնական ֆոնդի և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) տեխնիկական աջակցությամբ՝ բարելավելու սեզոնային ճշգրտման գործող ընթացակարգերը և համապատասխանեցնելու դրանք Եվրոպական վիճակագրական համակարգի 2015 թվականի ուղեցույցի դրույթներին: Այդ մեթոդի կիրառմամբ վերանայվել են ՀՆԱ եռամսյակային տվյալները սկսած 2013թ.-ից:

• «ԱՀՀ-2008-ի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների հաշվարկների կատարելագործման նպատակով տեղեկատվության աղբյուրների համալրում և կատարելագործում» միջոցառման շրջանակում ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային կտրվածքով ստացվում և օգտագործվում են առավել մանրամասն և նոր տվյալներ վարչական աղբյուրներից (ՀՀ ԿԲ, ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ՊԵԿ):

• Շարունակվել են ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) տարեկան տվյալների (2017-2021թթ.) մշակման աշխատանքներն ըստ ենթահատվածների՝ վերահսկողական հատկանիշով դասակարգման. պետական կազմակերպություններ (կորպորացիաներ), ազգային մասնավոր

կազմակերպություններ (կորպորացիաներ), օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ (կորպորացիաներ):

• Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրությունը շարունակվել է վարվել ՏԳՏԴ-ի խմբ. 2-ին և ԱՀՀ-2008»-ով սահմանվող դասակարգումներին համապատասխան:

• Իրականացվել են աշխատանքներ «չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման ուղղությամբ՝ Եվրոստատի «աղյուսակային մոտեցման» սկզբունքի կիրառմամբ:

• «Ազգային հաշիվների համակարգում «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակների կազմման աշխատանքների իրականացում՝ լրացուցիչ ռեսուրսների հնարավոր ներգրավմամբ» միջոցառման շրջանակում ԱԶԲ Գիտելիքի և օժանդակության տարածաշրջանային տեխնիկական աջակցության (KSTA 9624 & 9646-REG) ծրագրի շրջանակում 2019թ. հոկտեմբերից Արմստատին ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է տեխնիկական աջակցություն, որը ներառում էր 2017-2018թթ. ռեսուրսներ-օգտագործում աղյուսակների (SUT) կազմումը:

• Շարունակվել են աշխատանքները ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների գնահատման (ՀՀ ԿԲ-ի հետ համատեղ), ազգային հարստության բաղադրիչների, այդ թվում՝ հիմնական միջոցների առկայության և շարժի վերաբերյալ վիճակագրության, հիմնական միջոցների սպառման գնահատման, «սպառողի ծախսերի մեթոդի» կիրառմամբ «սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկվող վարձակալության արժեքի» գնահատման, համախառն ավելացած արժեքի՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող կազմակերպությունների չափերի և տնտեսական գործունեության տեսակների վիճակագրության, տարածքային ՀՆԱ-ի գնահատման վարման և կատարելագործման ուղղությամբ:

2.4.2. Արդյունաբերություն

Հաշվետու ժամանակաշրջանում արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության վարումն իրականացվել է ՏԳՏԴ-ի խմբ. 2 և ԱԴԳՏ դասակարգիչներին համապատասխան:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, տարեկան) Արմստատի մարզային ու Երևան քաղաքի վարչություններից ստացվել, համադրվել, ստուգաճշտվել և ամփոփվել են վիճակագրական մշտադիտարկման դաշտում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված արդյունաբերությունն ու էներգետիկան բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, ք. Երևանի և մարզերի, տնտեսական գործունեության տեսակների և արտադրատեսակների, ինչպես նաև տարեկան պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Շարունակվել են արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության ցուցանիշների մասով վիճակագրական տեղեկության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրման ու գործող ցուցանիշների համակարգի կատարելագործման աշխատանքները՝ տարեկան վիճակագրական ծրագրերի նախագծերում կատարելով համապատասխան փոփոխություններ:

Բնեղեն արտահայտությամբ արդյունաբերական արտադրանքի վիճակագրության բարելավման նպատակով ռեսպոնդենտների հետ տարվել են աշխատանքներ ԱԴԳՏ հիման վրա «Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակով) դասակարգչի» ներդրմամբ պայմանավորված հաշվարկների իրականացման ուղղությամբ, որի արդյունքում դասակարգչի ազգային նիշերի մակարդակում իրականացվել են համապատասխան փոփոխություններ ու կատարվել լրացումներ: Մասնավորապես, 2021թ. ընթացքում «Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակ)» դասակարգչում ավելացվել են վիճակագրական տեղեկության օգտագործողների և ռեսպոնդենտների կողմից հայցվող մի շարք նոր արդյունաբերական արտադրատեսակներ (տե՛ս Խորհրդի 2021թ. ապրիլի 5-ի թիվ 11-Ա որոշումը, https://www.armstat.am/file/doc/type_of_activity_9-digit.pdf հղումը, ծածկագրեր՝ 11.01.10.851 - 11.01.10.854, 11.03.10.710 - 11.03.10.790, 13.92.29.100 - 13.92.29.120, 13.92.29.200, 20.15.80.100, 20.15.80.200, 20.20.14.600, 32.12.11.510 - 32.12.11.590):

ՏԳՏԴ-ի խմբ. 2-ով սահմանված գործունեության տեսակներին համապատասխան իրականացվել են վիճակագրության մշտադիտարկման դաշտում նոր ընդգրկվող արդյունաբերական տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրմանն օժանդակելու և վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման աշխատանքներ: Ընդ որում, ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով իրականացվել է դիտարկման նոր մոտեցում՝ տարեկան առնվազն 24 մլն ՀՀ դրամ արդյունաբերական արտադրանքի ծավալ ունեցող տնտեսավարողները (շեմը սահմանված է Խորհրդի 11 փետրվարի 2020թ. թիվ 06-Ա որոշմամբ) դիտարկելով համատարած ամսական և տարեկան պարբերականությամբ, իսկ տարեկան մինչև 24 մլն ՀՀ դրամ արդյունաբերական արտադրանքի ծավալ ունեցողները՝ միայն տարեկան պարբերականությամբ:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ որոշ արտադրատեսակների արտադրության գծով շարունակվել է իրականացնել չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատումը՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Ամսական պարբերականությամբ ամփոփ տվյալները զետեղվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում, վիճակագրական տեղեկագրերում, իսկ տարեկան տվյալները՝ տարեգրքում, վիճակագրական ժողովածուներում: Իրականացվել են նաև Արմստատբանկի ոլորտային տվյալների դինամիկ շարքերի արդիականացման աշխատանքներ:

Ամսական պարբերականությամբ արդիականացվել են նաև պաշտոնական կայքում առկա «Տվյալների բազաներ» բաժնի (տե՛ս https://www.armstat.am/am/?nid=13 հղումը) «Այլ տվյալների բազաներ» ենթաբաժնի «Արդյունաբերություն» հատվածի տվյալները:

Սահմանված ժամկետում Ազգային հաշվետվողական հարթակ են վերբեռնվել ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ»-ի էներգետիկայի ոլորտին առնչվող ցուցանիշները:

ՀՀ ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցության նախապայմանների ապահովմամբ պայմանավորված, ինչպես նաև վիճակագրական տեղեկության օգտագործման ավելի լայն հնարավորությունների

ընձեռման նպատակով ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտով սահմանված ցուցանիշների գծով իրականացվել է տվյալների և դրանց մեթատվյալների պարբերական արդիականացման աշխատանքների ապահովում (մասնավորապես՝ ամսական կտրվածքով ապահովվել է «Արդյունաբերության իրական աճի շղթայական ինդեքս» ցուցանիշի ներմուծումը):

Կազմվել են ոլորտի «Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածք»-ի (SIMS) թվով 3 աղյուսակներ:

Վիճակագրական տվյալների հավաքման առցանց համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ 2023թ. ընթացքում վերանայվել են թվով 4 վիճակագրական հաշվետվությունների ձևերը ու դրանց լրացման հրահանգները:

Բարելավվել և ամբողջականցվել է վարչական տեղեկությունը ՀՀ էներգետիկ հաշվեկշիռների կազմման ուղղությամբ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ներկայիս՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ ՏԿԵՆ) հետ կնքված համաձայնագրի շրջանակում ՀՀ էներգահաշվեկշռի կազմման նպատակով տվյալների տրամադրմանն ուղղված Ձև թիվ 1-էներգետիկա (տարեկան) «Էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» վիճակագրական հաշվետվական ձևով արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի ոլորտի սուբյեկտներից հավաքվել և ամփոփվել են իրենց կողմից արտադրված, գնված, ըստ առանձին ուղղությունների սպառված էներգակիրների և այլնի վերաբերյալ տեղեկությունները, իրականացվել է անհրաժեշտ տեղեկության տրամադրում, որոնց հիման վրա ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից կազմված 2018-2022թթ. ՀՀ էներգահաշվեկշիռները հրապարակվել են:

Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման և հավաքվող ցուցանիշների արդիականացման նպատակով շարունակվել է միջազգային համագործակցությունը:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում ապահովվել է վիճակագրական տեղեկատվության փոխանակումը միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի 3 հարցաթերթ, ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության (UNIDO) 2 հարցաթերթ, Եվրոմիության վիճակագրական ծառայության (EUROSTAT), Էներգիայի միջազգային գործակալության (IEA) 11 հարցաթերթ, Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (OECD) 5 հարցաթերթ, Շաքարի միջազգային կազմակերպության 1 հարցաթերթ, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) 1 հարցաթերթ, Բրիտանական երկրաբանական հետազոտության 1 հարցաթերթ և այլ), վիճակագրական ծառայությունների, ինչպես նաև ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ (այդ թվում նաև՝ ամենամսյա, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների ձևերի էլեկտրոնային փոստով փոխանակումը):

2.4.3. Գյուղատնտեսություն և պարենային ապահովություն

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և ձկնաբուծության վիճակագրության վարումն իրականացվել է ՏԳՏԴ-ի խմբ. 2 և ԱԴԳՏ դասակարգիչներին համապատասխան:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և ձկնաբուծության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքվել և մշակվել են թվով 17 վիճակագրական հաշվետվություններով, 5 հարցաթերթերով, ինչպես նաև վարչական աղբյուրներից ստացված թվով 9 տեղեկանքներով:

Գյուղատնտեսության վիճակագրության ցուցանիշների (արտադրված բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի ծավալի, միջին բերքատվության, տնտեսություններում արտադրված արտադրանքի իրացման՝ ըստ ուղղությունների և դրանց արտադրության վրա կատարված ընթացիկ ծախսերի վերաբերյալ և այլն) ամբողջականության և որակի ապահովման նպատակով շարունակվել են ընտրանքային դիտարկումները՝ ընդգրկելով 186 համայնք/գյուղական բնակավայր, 12090 անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ:)

Հաշվետու ժամանակաշրջանում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, մարզերի և համայնքների հետ համատեղ անցկացվել են գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի համատարած հաշվառումներ, իսկ հունիսի 1-ի դրությամբ՝ համայնքների հետ նաև ցանքատարածությունների համատարած հաշվառումներ:

Շարունակվել է վարչական աղբյուրներից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, անասնաբուծությունը և ձկնաբուծությունը բնութագրող ցուցանիշների ստացումը եռամսյակային պարբերականությամբ, իսկ համայնքներից՝ բուսաբուծությունը բնութագրող ցուցանիշների ստացումը՝ ամսական պարբերականությամբ: Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեից ստացվել են նաև տվյալներ՝ անտառների, անտառային հողերի, անտառապատման և անտառավերականգնման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում, ըստ անհրաժեշտության, ցուցաբերվել է մեթոդաբանական աջակցություն գյուղատնտեսության ոլորտում վարչական ռեգիստրներ վարող մարմիններին:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են գյուղատնտեսության ոլորտը բնութագրող հիմնական վիճակագրական ցուցանիշներն ըստ հանրապետության և մարզերի, որոնք արտացոլվել են վիճակագրական ժողովածուներում, տարեգրքերում, տեղեկագրերում (յուրաքանչյուր տարի թվով 4), մամուլի հաղորդագրություններում և տեղեկատվական ամսական զեկույցներում, ինչպես նաև Արմստատբանկում:

Լրամշակվել են ոլորտին վերաբերող որակի թվով 9 հռչակագրերը:

Վիճակագրական տվյալների հավաքման առցանց համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ վերանայվել են գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտներին վերաբերող վիճակագրական հաշվետվական ձևերը:

Համաձայն ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 29-ի թիվ 1514-Ն «Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականին հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու ժամկետներ, 2023 թվականին փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու տարածքներ և ժամկետներ հաստատելու, 2024 թվականի հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման աշխատանքներին օժանդակելու նպատակով հանրապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին» որոշման (այսուհետ՝ Որոշում) ՀՀ-ում 2023թ. հոկտեմբերի 11-31-ը ներառյալ Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթափ և Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բամբակաշատ ու Նոր Արմավիր բնակավայրերում անցկացվել է փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում (ԳՀՀ): ՀՀ-ում 2023թ. փորձնական և 2024թ. հերթական ԳՀՀ նախապատրաստման և անցկացման կազմակերպման շուրջ տարվող աշխատանքների շրջանակում կազմվել են ԳՀՀ հարցաթերթը և լրացման ուղեցույցը: Իրականացվել են հարցաթերթի էլեկտրոնային տարբերակի (CAPI համակարգչային ծրագրի միջոցով) ստեղծման, ինչպես նաև հարցազրուցավարներին հարցաթերթի լրացման ուսուցման և հրահանգավորման աշխատանքներ: Փորձնական ԳՀՀ արդյունքների հիման վրա լրամշակվել են ԳՀՀ հարցաթերթը և լրացման ուղեցույցը: Վերը նշված աշխատանքների շրջանակում պատրաստվել և Խորհրդի որոշմամբ հաստատվել է նաև ԳՀՀ վարչության կանոնադրությունը, ինչպես նաև իրականացվել են ԳՀՀ առնչվող այլ աշխատանքներ:

Պարենային ապահովություն

Պարենային ապահովության վիճակագրության վարման նպատակով մշակվել, արտադրվել և տարածվել են պարենային ապահովությունը բնութագրող մակրոտնտեսական, պարենամթերքի արտաքին առևտրի, գների և գների ինդեքսների, սոցիալական և ժողովրդագրական ոլորտների, աշխատանքի վիճակագրության, երեխաների խնամքի և պաշտպանության միջոցառումների, գյուղատնտեսության, գյուղատնտեսական հողերի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների, բույսերի կարանտինի և պաշտպանության միջոցառումների, ագրոօդերևութաբանական տեղեկության, անտառպահպանության, անտառպաշտպանության և անտառվերականգման միջոցառումների և ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների պարենի մատչելիության, աղքատության և պարենի օգտագործման վերաբերյալ ցուցանիշները, որոնք եռամսյակային պարբերականությամբ հրապարակվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրերում:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները և մեթոդաբանությունը՝ ըստ տարիների կազմվել են առանձին ապրանքախմբերի ազգային

պարենային հաշվեկշիռները, ինչը հնարավորություն է ընձեռել գնահատել պարենի առկայության, մատչելիության և յուրացվելիության, պարենի ինքնաբավության աստիճանը բնութագրող ցուցանիշները ՀՀ-ում:

Պարենային ապահովության վիճակագրության ցուցանիշների որակի ապահովման առումով, արդիականացվել են մեթոդաբանական մոտեցումները, որոնք ապահովում են համադրելիություն միջազգային կառույցների (մասնավորապես ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության) և այլ երկրների նմանատիպ մեթոդաբանությունների հետ:

2.4.4. Շինարարություն

Հաշվետու ժամանակաշրջանում շինարարության վիճակագրության վարումն իրականացվել է ՏԳՏԴ-ի խմբ. 2 և ԱԴԳՏ դասակարգիչներին համապատասխան:

Պարբերաբար արդիականացվել են շինարարության վիճակագրության հաշվետվական ձևերը (թվով 8), որոնք համապատասխանեցվել են նաև առցանց ձևաչափով տվյալների հավաքման պահանջներին:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, տարեկան) մշակվել և ամփոփվել են շինարարությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի և Երևան քաղաքի, ֆինանսավորման աղբյուրների, տնտեսական գործունեության տեսակների: Վիճակագրական ցուցանիշների ամբողջականության և որակի ապահովման նպատակով, Արմստատը շրջագայությունների միջոցով պարբերաբար իրականացրել է բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի շինարարության դիտարկումներ՝ բացահայտելով դրանց պատրաստվածության աստիճանը:

Հաշվառման դաշտի ամբողջականացման և ցուցանիշների որակի ապահովմամբ պայմանավորված իրականացվել է չդիտարկվող (չհաշվառվող) շինարարության ծավալների գնահատման նպատակով դիտարկումների մեխանիզմների շարունակական կատարելագործում (օբյեկտների լուսանկարահանումներ և այլն):

Խորհրդի 2019թ. ապրիլի 12-ի թիվ 11-Ա որոշմամբ հաստատվել է «ՀՀ վիճակագրական կոմիտեի Երևան քաղաքի շինարարության դիտարկման դաշտում ընդգրկված վիճակագիրների աշխատանքների իրականացման կարգը» և «Անհատական բնակելի շենքերի ամսական դիտարկման թերթիկը»:

Շինարարության վիճակագրական ցուցանիշների ամբողջականության և որակի բարելավման տեսանկյունից, աշխատանքներ են իրականացվել համապատասխան վարչական ռեգիստրների (ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Երևանի քաղաքապետարան, համայնքապետարաններ) հետ՝ շինարարության թույլտվությունների ռեգիստրների (ռեեստրների) ձևավորման, ինչպես նաև շինարարության ընթացքում գտնվող և արդեն իսկ ավարտված

(համաձայն համապատասխան փաստագրման ակտերի) շենք-շինությունների կառուցման վերաբերյալ տեղեկության ստացման նպատակով:

«Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT ծրագրի շրջանակում իրականացվել է անհատական բնակարանային շինարարության հետազոտությունը, որի նպատակով պատրաստվել և Խորհրդի 2020 թվականի հունվարի 16-ի թիվ 01-Ա որոշմամբ հաստատվել են «Անհատական բնակարանային շինարարության» հետազոտության հարցաթերթը և դրա լրացման ցուցումները:

Շարունակվել են շինարարության վիճակագրության ցուցանիշների մասով վիճակագրական տեղեկության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրման և գործող մեթոդաբանության՝ ցուցանիշների, հասկացությունների, տեղեկությունների հավաքման աղբյուրների, տարածման ձևաչափերի և այլնի կատարելագործման աշխատանքները՝ դրանք արտացոլելով տարեկան վիճակագրական ծրագրերում:

Ոլորտը բնութագրող վիճակագրական տվյալները հրապարակվել են վիճակագրական ժողովածուներում, տարեգրքերում, տեղեկագրերում, տեղեկատվական ամսական զեկույցներում, ինչպես նաև Արմստատբանկում:

Իրականացվել են ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) ներդրման, ինչպես նաև դրա հենքով «շինարարական» վիճակագրական արտադրանքի համար օգտագործողին (Եվրո SDMX (վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակում) մեթատվյալների կառուցվածք (ESMS)) և արտադրողին (Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտ (ESQRS)) ուղղված որակի հաշվետվությունների կազմման աշխատանքներ:

Լրամշակվել են ոլորտին վերաբերող որակի հռչակագրերը:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում ապահովվել է վիճակագրական տեղեկության փոխանակումը միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես, սահմանված կարգով և ժամկետներում ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին և Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովին է ներկայացվել թվով 15 էլեկտրոնային սխեմա՝ ոլորտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

2.4.5. Տրանսպորտ և կապ

ՏԳՏԴ խմբ. 2-ի դասակարգիչներին համապատասխան բիզնես ռեգիստրի տեղեկատվական բազայի միջոցով տրանսպորտի և կապի ոլորտների վիճակագրության վարման նպատակով աշխատանքներ են իրականացվել հաշվառման դաշտերի պարբերաբար արդիականացման, ամբողջականացման ուղղությամբ:

Ավտոմոբիլային տրանսպորտի գծով շարունակվել է իրականացվել չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատումը՝ օգտագործելով վարչական ռեգիստրներից ստացված տվյալները:

Տրանսպորտի և կապի ոլորտի վիճակագրության մեթոդաբանության գործող միջազգային չափանիշներին ու ստանդարտներին համադրելիության ապահովման և հավաքվող ցուցանիշների արդիականացման, հստակեցման, պարզեցման, ինչպես նաև ռեսպոնդենտների ծանրաբեռնավածությունը նվազեցնելու նպատակով 2019-2023 թվականներին վերանայվել են ոլորտի վիճակագրական հաշվետվական ձևերը: Մասնավորապես՝ փոփոխության են ենթարկվել ոլորտի 19 վիճակագրական հաշվետվական ձև, ուժը կորցրել է 1 վիճակագրական հաշվետվական ձև: Իսկ 2023 թվականին, պայմանավորված տվյալների հավաքման առցանց համակարգի ներդրմամբ՝ փոփոխություններ են կատարվել տրանսպորտի և կապի ոլորտի հաշվետվական ձևերում:

Սահմանված հաճախականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի և ք. Երևանի, տնտեսական գործունեության տեսակների, տրանսպորտի տեսակների: Ամսական և եռամսյակային պարբերականությամբ ամփոփ տվյալները զետեղվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում, իսկ տարեկան տվյալները՝ տարեգրքերում, վիճակագրական ժողովածուներում, ինչպես նաև Արմստատբանկում:

Սահմանված ժամկետում Ազգային հաշվետվողական հարթակ են վերբեռնվել ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ»-ի տրանսպորտի ոլորտին առնչվող ցուցանիշները:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում ապահովվել է վիճակագրական տեղեկատվության փոխանակումը միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես, սահմանված կարգով և ժամկետներում ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին և Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովին է ներկայացվել թվով 12 էլեկտրոնային սխեմա՝ ոլորտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

2.4.6. Առևտուր և այլ ծառայություններ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է ՏԳՏԴ-ի խմբ. 2-ին և ԱԴԳՏ դասակարգիչներին համապատասխան վիճակագրության վարումը, այդ թվում՝ այդ դասակարգիչներում տեղ գտած փոփոխություններին և լրացումներին համապատասխանեցումը:

Վիճակագրական տվյալների հավաքման առցանց համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ վերանայվել են ոլորտի վիճակագրական հաշվետվական ձևերը:

Իրականացվել են ոլորտի վիճակագրության մեթոդաբանական, վիճակագրական բիզնես ռեգիստրի տեղեկատվական բազայի հենքով վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման, տվյալների մշակման, արտադրության և տարածման վիճակագրական գործընթացների բարելավման աշխատանքներ՝ առաջնորդվելով միջազգային չափանիշներով և ստանդարտներով:

Պայմանավորված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման ուղղությամբ մշտապես իրականացվող աշխատանքների անհրաժեշտությամբ, ինչպես նաև հաշվի առնելով Հարկային օրենսգրքում 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունները, կապված միկրոձեռնարկատիրության սուբյեկտների տնտեսական գործունեության վերաբերյալ հարկային պարտավորությունների՝ հարկային հաշվետվությունների ամսական/եռամսյակային պարբերականությամբ հավաքման դադարեցման հետ, հաշվարկվել են ոլորտի մշտադիտարկման դաշտում ընդգրկված ռեսպոնդենտների տարեկան շրջանառությունների շեմեր, որոնք հիմք են հանդիսացել ռեսպոնդենտներից հաշվետվությունների հավաքման նոր ձևաչափի համար: Ըստ այդմ, սկսած 2020թ. ապրիլից դադարեցվել է վիճակագրական հաշվետվությունների ձևերով վիճակագրական տվյալների ուղղակի հավաքումը միկրոձեռնարկատիրության այն սուբյեկտներից, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցել 24 մլն. դրամը: Խնդրո առարկա սուբյեկտների գործունեության վերաբերյալ շրջանառության ծավալները համալրվել են վարչական աղբյուրից՝ ՀՀ ՊԵԿ-ից Արմստատին տրամադրված տվյալներով:

Շարունակվել է SS և ֆինանսական ծառայությունների ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքումը համապատասխան վարչական ռեգիստրներից:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են Արմստատի տվյալների բազայի՝ մասնավորապես Արմստատբանկում առկա ոլորտային տվյալների ժամանակային շարքերի արդիականացման աշխատանքներ: Մասնավորապես, դրանք վերաբերել են առևտրի և ծառայությունների վիճակագրության ոլորտը բնութագրող ցուցանիշների կազմի բարելավմանը (PX-Edit ծրագրային փաթեթի միջոցով):

Վերանայվել և արդիականացվել են առևտրի և ծառայությունների ոլորտների թվով 7 (3-ը առևտրի ոլորտի, 4-ը ծառայությունների ոլորտի) Որակի հռչակագրերը և «Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդել»-ի (GSBPM) թվով 3 (1-ը առևտրի ոլորտի, 2-ը ծառայությունների ոլորտի) աղյուսակները:

Կազմվել են ոլորտի «Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածք»-ի (SIMS) աղյուսակները՝ «Առևտրի շրջանառության ինդեքսները» և «Ծառայությունների ծավալների ինդեքսները» խորագրերով:

2022թ. մայիսից Համաշխարհային բանկի աջակցությամբ և Եվրոպական Միության ֆինանսավորմամբ «Տնտեսական կառավարում, գործարար միջավայր և արդարադատության բարեփոխումներ» թեմայով ծրագրի շրջանակում իրականացվել է ՏՀՏ հետազոտություն առցանց ձևաչափով: Հետազոտության նախապատրաստման շրջանակում ուսումնասիրվել է ՏՀՏ ոլորտի՝ ԵՄ և միջազգային մեթոդաբանությունը, ինչպես նաև միջազգային պրակտիկայում կիրառվող հետազոտությունների իրականացման գործիքակազմը, մշակվել և Խորհրդի որոշմամբ հաստատվել է հետազոտության հարցաթերթը: Փորձարկվել է հետազոտության իրականացման համար նախատեսված Համաշխարհային բանկի կողմից մշակված ծրագրային փաթեթը:

2023 թվականին իրականացված «Տնտեսավարող սուբյեկտների կողմից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» հետազոտության շրջանակում հավաքվել են տվյալներ տնտեսավարող սուբյեկտների կողմից

ինտերնետ հասանելիության ու օգտագործման, գործնական նպատակներով շարժական ինտերնետ կապի, կայքէջի և սոցիալական մեդիայի օգտագործման, էլեկտրոնային առևտրի, կազմակերպության ներսում տեղեկատվության էլեկտրոնային եղանակով տրամադրման, ամպային հաշվողական ծառայությունների կիրառման, իրերի համացանցի և արհեստական բանականության վերաբերյալ: Հետազոտության արդյունքների ամփոփ տվյալների ելքային աղյուսակը և մեթատվյալները՝ «Որակի հռչակագրի» ձևաչափով հրապարակվել են Արմստատի կայքում, մասնավորապես ելքային աղյուսակները զետեղվել են «Տվյալների բազաներ» բաժնի (տե՛ս https://www.armstat.am/am/?nid=13 հղումը) «Այլ տվյալների բազաներ» ենթաբաժնի «Առևտուր և այլ ծառայություններ» հատվածի ներքո:

Տեղեկատվության փոխանակման միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում շարունակվել է էլեկտրոնային սխեմաներով (հարցաթերթերով) ոլորտի ցուցանիշների տրամադրումը միջազգային շահագրգիռ կառույցներին:

2.4.7.Գներ և սակագներ

Գործող մեթոդաբանության համաձայն հաշվարկվել են հետևյալ գների ինդեքսները.

Սպառողական գներ (սակագներ) և ինդեքսներ

- սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) հաշվարկվել և հրապարակվել է ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ ԱՍԸՆԴ 12 հատվածների (2-նիշ դասակարգում), 44 խմբերի (3-նիշ դասակարգում), 94 դասերի (4-նիշ դասակարգում) և 190 ենթադասերի (5-նիշ դասակարգում)),
- 2019թ. հունվարից սկսած ՀՀ սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար գնադիտարկման գործընթացը հնարավոր է եղել իրականացնել Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ ձեռք բերված գրասալիկների (պլանշետների) միջոցով ք. Երևանի, իսկ 2019թ. մայիսից՝ Գյումրի և Վանաձոր քաղաքների սպառողական շուկաներում, իսկ 2020թ. հունվարից՝ նաև մյուս գնադիտարկման սպառողական շուկաներում,
- 2019թ. դիտարկված՝ շուրջ 8000 ապրանք-ծառայությունների ներկայացուցիչների քանակը, որոնց գների դիտարկման հիման վրա հաշվարկվել են 450 անվանում ապրանք-ծառայությունների միջին գներ (սակագներ), իսկ 2023թ. 425 անվանում ապրանք-ծառայությունների միջին գների հաշվարկման համար դիտարկվել են 9500 անվանում ապրանք-ծառայություններ,
- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքները, տարեկան կտրվածքով արդիականացվել են ՀՀ ՍԳԻ-ի ապրանքների և ծառայությունների գնադիտարկման համար ընտրված տեսակները և հաշվարկվել են սպառողական զամբյուղի տարեկան կշիռները:

Արդյունաբերողների արտադրանքի գներ և ինդեքսներ

- 2019թ. արդյունաբերողների արտադրանքի գների դիտարկումն իրականացվել է արդյունաբերական ոլորտի 440 բազային տնտեսավարող սուբյեկտներում՝ 534 անվանում արտադրանքի (2 485 արտադրանք-ներկայացուցիչներ) գծով, իսկ 2023 թվականին՝ համապատասխան 549 բազային տնտեսավարող սուբյեկտներ՝ 640 անվանում արտադրանքներ (3 000 արտադրանք-ներկայացուցիչներ),
- արդյունաբերական արտադրանքի տարեկան, ինչպես նաև ամսական արտադրության ծավալների հիման վրա յուրաքանչյուր տարի իրականացվել է արդյունաբերական կազմակերպությունների ընտրանք:

Գյուղատնտեսական արտադրանքի գներ և ինդեքսներ

- Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից իրացված արտադրանքի քանակների և միջին գների դիտարկումը և միջին գների հաշվարկն իրականացվել է ՀՀ մարզերի 186 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 7440 գյուղացիական տնտեսություններում՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման քանակների ու գների ամենամսյա հետազոտության հիման վրա,
- 2019 թվականին իրականացվել է գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքսի ցանկի օպտիմալացում՝ հետազոտվող 59 անվանում արտադրանքների փոխարեն 2023 թվականին դիտարկվել է 58 անվանում,
- 2019 թվականին գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսի հաշվարկման համար ցանկի արդիականացմամբ պայմանավորված հետազոտվող 67 անվանում արտադրության միջոցների փոխարեն 2023 թվականին դիտարկվել են 58-ը:

Բեռնափոխադրումների սակագներ և ինդեքսներ

- բեռնափոխադրումների սակագների ինդեքսը հաշվարկվել է ամսական և եռամսյակային կտրվածքով (ըստ հանրապետության, տրանսպորտի տեսակների՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային),
- ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ստացված հասույթների մասին տվյալների հիման վրա իրականացվել է նշված ոլորտի կազմակերպությունների տարեկան ընտրանք:

Արտաքին առևտրի գներ և ինդեքսներ

- ամսական պարբերականությամբ հաշվարկվել են ներմուծման և արտահանման գների (միջին արժեքի) ինդեքսներ հետևյալ 4 ուղղություններով՝ «ըստ բոլոր երկրների», «ըստ ԱՊՀ երկրների», «ըստ այլ երկրների», «ըստ Եվրամիության երկրների»,
- տարբեր ժամանակաշրջանի նկատմամբ ամսական և եռամսյակային պարբարեկանությամբ իրականացվել են ՀՀ արտաքին առևտրի, ըստ ԵԱՏՄ անդամ և ոչ անդամ պետությունների, ինչպես նաև ըստ Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս և Ղազախստան գործընկեր երկրների գների (միջին արժեքի) ամփոփ ինդեքսների հաշվարկներ,

♦ 2023 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ներկայացված իրավաբանական անձանց բեռնամաքսային հայտարարագրերի տարեկան ցուցանիշների ճշգրտված տվյալների բազայի հիման վրա իրականացվել է ՀՀ արտաքին առևտրի, ըստ ԵԱՏՄ անդամ և ոչ անդամ պետությունների, ինչպես նաև ըստ Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս և Ղազախստան գործընկեր երկրների գների (միջին արժեքի) ամփոփ ինդեքսների վերահաշվարկներ 2020-2022 թվականների համար:

Շինարարության գներ և ինդեքսներ

♦ Ֆինանսների նախարարության համապատասխան վարչության կողմից ներկայացված ցուցանիշների հիման վրա ամսական և եռամսյակային պարբերականությամբ և տարբեր ժամանակաշրջանների նկատմամբ հաշվարկվել են գների ինդեքսները շինարարության ոլորտում:

Միջազգային համադրումների ծրագիր

Միջազգային համադրումների ծրագրի Գլոբալ փուլերի շրջանակներում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում 2019 և 2021 թվականների տվյալներով իրականացվել են ՀՀ սպառողական շուկայի շուրջ 2400 ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև ներդրումային ապրանքների եռամսյակային, ոչ շուկայական ծառայությունների և բնակֆոնդի համապատասխան ծառայությունների մասով գնադիտարկումներ: Ստացված տվյալները համապատասխան ձևաչափերով ներկայացվել են ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե:

2020թ. հունվարից սկսած իրականացվել են ԱՍԸՆԴ-ի «Պայմանական հաշվարկված վարձավճար բնակարանի սեփականատիրոջ համար» հատվածում ներառված ծառայությունների տեսակների սակագների դիտարկում և միջին գների հաշվարկ: 2020 թվականի մարտից՝ եռամսյակային պարբերականությամբ, հաշվարկվել և հրապարակվել է ԱՍԸՆ դասակարգչի «Պայմանական հաշվարկված վարձավճար բնակարանի սեփականատիրոջ համար» հատվածի գների ինդեքսը:

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հաշվարկման համար (ըստ պարենային զամբյուղի ապրանքացանկի 11 անվանումների և տնային տնտեսությունների փաստացի հետազոտության արդյունքների հիման վրա) իրականացվել են եռամսյակային կտրվածքով միջին հանրապետական գների հաշվարկ:

ԱՄՀ-ի առաջարկված ձևաչափով Արմստատ-ի պաշտոնական կայքում հրապարակվել է «Covid-19 համաճարակի պայմաններում ՀՀ սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար ապրիլին կիրառված սպառողական գների հավաքման առանձնահատկությունները» մամուլի հաղորդագրությունը:

ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջների և սահմանված ժամանակացույցի համաձայն, ներկայացվել և վերբեռնվել են ՀՀ ՍԳԻ-ի և ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի ամենամսյա ցուցանիշները ԱՄՀ կայքի համապատասխան էջում:

Իրականացվել է Համաշխարհային բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» պայմանագրի շրջանակում՝ Արդյունաբերողների ներքին և արտաքին շուկաներում իրացված արտադրանքների

գների ինդեքսների փորձնական հաշվարկման համար հետազոտության հաշվետվական ձևի և դիտարկման մեթոդաբանության մշակում, պիլոտային հետազոտության արդյունքում հավաքված վիճակագրական տվյալների վերլուծություն և գնադիտարկման հետ կապված մեթոդաբանական օժանդակության տրամադրում: Համակարգվել են երկու ինդեքսների հաշվարկման համար կազմված համակարգչային փաթեթների աշխատանքները:

Կազմվել և Արմստատի պաշտոնական կայքում հրապարակվել են «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում» ամենամյա ժողովածուի հայերեն և անգլերեն տարբերակները:

ՀՀ գների վիճակագրության համակարգում Անշարժ բնակելի գույքի գների ինդեքսների ներդրման համար ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ կենտրոնական բանկի և Արմստատի միջև կազմվել և եռակողմ ձևաչափով ստորագրվել է համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր, ինչի ներքո ձևավորվել է եռակողմ աշխատանքային խումբ՝ համապատասխան աշխատանքների իրականացման համար:

ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ ԿԲ-ի և Արմստատի համատեղ մասնակցությամբ 2023 թվականի հուլիսի 10-21-ը ԱՄՀ-ի առաքելության «Data for Decisions» (D4D) վստահության հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվել է Անշարժ բնակելի գույքի գների ինդեքսի (RPPI) մշակման աշխատանքներում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով ուսուցողական սեմինար: Կազմվել է աշխատանքային քարտեզ՝ հետագա աշխատանքների իրականացման համար:

Արմստատի գների վիճակագրական համակարգում սպառողական գների ինդեքսի սեզոնային ճշգրտումների մեթոդաբանության ներդրման նպատակով ԱԶԲ Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրների բարեկեցության և կայունության Ճապոնիայի ֆոնդի տեխնիկական աջակցության «Տվյալների նոր աղբյուրներում և տեխնոլոգիաներում նոր վիճակագրական աղբյուրների ձևավորում և կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում իրականացվել է հաշվարկման ծրագրային փաթեթի ուսուցողական սեմինար:

Եվրո SDMX մեթատվյալների կառուցվածքի (ESMS) պահանջներին համապատասխան կազմվել է ՀՀ ՍԳԻ-ի SDMX մեթատվյալների տարբերակը:

Ամենամսյա պարբերականությամբ համապատասխան ձևաչափով և սահմանված ժամկետներում իրականացվել է բոլոր հաշվարկվող գների ինդեքսների ցուցանիշների արդիականացում Արմստատբանկի տվյալների շտեմարանում:

Վիճակագրական տվյալների հավաքման առցանց համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ վերանայվել են գործող վիճակագրական հաշվետվական ձևերը:

2.4.8. Աշխատանքի շուկա

Հաշվետու ժամանակաշրջանում, սահմանված հաճախականությամբ, իրականացվել են աշխատանքի վիճակագրության ոլորտի նախատեսված վիճակագրական աշխատանքները:

Շարունակվել են աշխատանքի վիճակագրության հիմնականում բոլոր ոլորտների և ենթաոլորտների հիմնադրութային մեթոդաբանական, ինչպես նաև վիճակագրության մշակման, արտադրության և ամփոփման վիճակագրական գործընթացների բարելավման աշխատանքները՝ առաջնորդվելով միջազգային ուղեցույցներով, մեթոդաբանական ձեռնարկներով՝ հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները և համապատասխան ռեսուրսներով ապահովվածությունը:

Շարունակվել են ՀՀ ՊԵԿ-ի, որպես վարչական ռեգիստրի, եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազայի հիման վրա վիճակագրական նպատակով ստացված տեղեկությունների օգտագործումը: Լրամշակվել և բարելավվել են տվյալների ստուգման, ամփոփման, նոր ցուցանիշների հաշվարկման, ամսական բազաների միասնական շտեմարանում ինտեգրման ալգորիթմները:

Վերանայվել են աշխատանքի վիճակագրության թվով 5 հաշվետվությունների ձևերը:

2019-2023թթ. Աշխատուժի հետազոտության (ԱՀ) տվյալների բազայից մշակվել են նոր ցուցանիշներ՝ օգտագործողների պահանջարկի բավարարման և աշխատանքի շուկայի վիճակագրության համակողմանի վերլուծության նպատակով: Նույն նպատակով՝ 2019-2023թթ. ԱՀ անվանազերծված միկրոտվյալների բազաները զետեղվել են ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքում՝ հետազոտողներին հնարավորություն ընձեռելով կատարել թեմային առնչվող վերլուծություններ:

ԱՀ շրջանակում բարելավվել է նաև ներքին և միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրական գնահատման մեթոդաբանությունը, հաշվարկվել են մի շարք նոր ցուցանիշներ:

Աշխատանքի շուկայի վիճակագրության արտադրությունն ըստ ԱՀ արդյունքների աղյուսակավորվել և հրապարակվել է զուգահեռաբար 15-74 տարիքային միջակայքի և 15 և բարձր տարիքի բնակչության կտրվածքներով:

2019թ. «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ՀԲ ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Աշխատանքի շուկայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում բարելավվել է հետազոտության հարցաթերթը՝ այդ թվում նաև աշխատանքային միգրացիային առնչվող մասով, մեթոդաբանությունը, աշխատանքի շուկայի ցուցանիշների ցանկը համալրվել է ոլորտի մարտահրավերներն ու հնարավորություններն արտացոլող նոր ցուցանիշներով, 2018թ.-ից սկսած ԱՀ ընտրանքային կշիռներն առաջին անգամ ճշգրտվել/կալիբրացվել են ըստ ՀՀ մշտական բնակչության ընթացիկ հաշվառման ցուցանիշների:

2020թ. «ՄԱԿ Կանայք»-ի «Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացում» ծրագրի շրջանակում ԱՀ 2018թ. միկրոտվյալների հիման վրա առաջին անգամ հաշվարկվել է ժամային վարձատրության գենդերային խզվածքի (ճեղքվածքի)՝ ըստ անհատական և

աշխատանքային բնութագրիչների չճշգրտված և ճշգրտված ցուցանիշները (unadjusted and adjusted gender pay gap), իրականացվել է բազմաչափ ռեգրեսիոն վերլուծություն և դրա հիման վրա հրապարակվել է երկլեզու զեկույց՝ «Հայաստանի աշխատաշուկայում վարձատրության գենդերային խզվածքի և գենդերային անհավասարության վերլուծություն» խորագրով:

2021թ. Արմստատի, ՄԱԿ Կանայք-ի «Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում» ծրագրի և «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» ԵՄ տարածաշրջանային ծրագրերի շրջանակում 2021թ. իրականացվել է Ժամանակի օգտագործման փորձնական հետազոտություն՝ տեղայնացնելու Եվրոստատի կողմից առաջարկվող HETUS-2018 ձեռնարկի մեթոդաբանությունը և գործիքակազմը, ՄԱԿ-ի կողմից առաջարկվող Ժամանակի օգտագործման վիճակագրության գործունեությունների միջազգային դասակարգիչը (ICATUS-2016) և փորձարկելու Ժամանակի օգտագործման հետազոտության վիճակագրական ստանդարտ բիզնես-գործընթացը:

2021թ. Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ՀԲ ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Գենդերային վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ 4 185 տնային տնտեսությունների 15-59 տարեկան 2 872 կանանց շրջանում իրականացվել է Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն (ՍՊԸՀ), որի արդյունքներով հրապարակվել է երկլեզու վերլուծական զեկույց-հաշվետվություն: Հետազոտության արդյունքների հիման վրա համալրվել են ԿԶՆ 5.2.1 և 5.2.2 ցուցանիշները, որոնք տեղ են գտել նաև ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի (CEDAW) իրականացման վերաբերյալ Հայաստանի 7-րդ զեկույցում:

2023թ. Արմստատի և ՄԱԿ-Կանայք համագործակցության շրջանակում Ժամանակի օգտագործման ազգային (համապետական), լայնամասշտաբ հետազոտության (ԺՕՀ) իրականացման համար անց է կացվել Հայաստանի 198 հաշվային տեղամասերի քաղաքային և գյուղական բնակավայրերի ավելի քան 13400 տնային տնտեսությունների/կացարանների հասցեների ցուցակագրում: 2023թ. հոկտեմբերից մեկնարկել է լայնամասշտաբ ԺՕՀ, որի վերջնաժամկետը 30.06.2024թ.-ն է: Պատրաստվել և հրապարակվել են ԺՕՀ մեկնարկը և դրա նպատակը լուսաբանող մամուլի հաղորդագրություն և էլեկտրոնային բացիկներ:

ԺՕՀ-ը հնարավորություն կտա առաջին անգամ հաշվարկել ԿԶՆ 5.4 թիրախի 5.4.1. ցուցանիշը՝ «Չվարձատրվող տնային և խնամքի աշխատանքի վրա ծախսված ժամանակի համամասնությունն ըստ սեռի, տարիքի և տեղի»: Ցուցանիշի հաշվարկի ապահովման արդյունքում կամրապնդվեն կառավարության կարողությունները՝ ազգային և միջազգային մակարդակով տեղեկացնելու, մշտադիտարկելու և զեկուցելու ԿԶՆ 5.4 նպատակի իրականացման մասին՝ ճանաչելու և գնահատելու չվճարվող տնային և խնամքի աշխատանքները:

Վերը թվարկված բոլոր միջոցառումները նպաստել են ԿԶՆ աշխատանքի և գենդերային վիճակագրական ցուցանիշների մեթոդաբանությունների բարելավմանը, բացակայող ցուցանիշների հաշվարկման հնարավորությունների ընդլայնմանը: Շարունակվել են

աշխատանքի/աշխատուժի գնի, աշխատուժի գնի ինդեքսի վիճակագրության բարելավման աշխատանքները՝ բարձացնելու արդյունքային ցուցանիշների որակը և միջազգային համադրելիությունը:

Միջազգային համադրումների ծրագրի շրջանակում իրականացվող գնային հարաբերությունների կազմման և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման աշխատանքների հերթական շրջափուլի իրականացման համար ՄԱԿ-ի, ՀԲ, Եվրոստատի, ԱՊՀ վիճակագրական կոմիտեի կողմից մշակված հարցաշարով և մեթոդաբանությամբ թվով 22 պետական հիմնարկներից հավաքվել և ամփոփվել են ըստ որոշակի մասնագիտությունների (պաշտոնների) վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասին վիճակագրական տվյալները:

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ՀՀ պետական և համայնքների բյուջեների վերաբերյալ վարչական վիճակագրություն իրականացնող մարմնից (ՀՀ ֆինանսների նախարարություն) համապատասխան բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալների (հաշվարկված ԱՄՀ «Կառավարության ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների ու հասկացությունների հիման վրա) ստացման, ամփոփման և հրապարակման աշխատանքները: Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարությունից եռամսյակային պարբերականությամբ ստացվել, մշակվել, արտադրվել և տարածվել են նաև ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ տեղեկություններ ըստ վարկառուների, պարտքի գործիքների և ռեզիդենտության, ինչպես նաև եռամսյակային հաճախականությամբ՝ ըստ պարտքի գործիքների և պետական պարտքի գծով կատարված գործառնությունների:

Ֆինանսական միջնորդության հատվածի վիճակագրության վարման շրջանակում, ՀՀ ԿԲ-ից (որպես համապատասխան բնագավառի վարչական վիճակագրություն իրականացնող մարմնի), պարբերաբար ստացվել, ամփոփվել և հրապարակվել են դրամավարկային և բանկային համակարգի, վիճակագրական տեղեկություններ դրամավարկային ու բանկային համակարգի, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի, գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների, արժութային դիլերների, փոխանակման կետերի և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի գործունեության հիմնական ցուցանիշների, ֆինանսական շուկայում ձևավորված ամենօրյա և ամսական միջին փոխարժեքների վերաբերյալ:

Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրության բնագավառում կատարելագործվել են գործող վիճակագրական հաշվետվական ձևերը, դրանք համապատասխանեցնելով ՀՀ-ում գործող օրենքներին և միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին:

Արդիականացվել են ֆինանսների վիճակագրության ոլորտի Որակի հռչակագրերը և «Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդել»-ի (GSBPM) աղյուսակները: Մշակվել են ոլորտի Մեթատվյալները (ESMS), այդ թվում՝ «Պետական ֆինանսների վիճակագրության» և «Ֆինանսական կազմակերպություններ (ապահովագրական կազմակերպություններ, կենսաթոշակային ֆոնդեր, վարկային կազմակերպություններ, գրավատուն, ներդրումային ընկերություններ)» -ի համար:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին ՀՀ անդամակցության շրջանակում, ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել են ՀՀ կենտրոնական և ընդհանուր կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ՀՀ ԿԲ-ից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և վերբեռնվել Արմստատի կողմից ՏՏՀՍ-ի ձևաչափով վարվող Հայաստանի ազգային ամփոփ տվյալների էջում:

Հաշվի առնելով «Ազգային հաշիվների համակարգ-2008» միջազգային ստանդարտի մեթոդաբանության, ինչպես նաև ՀՀ օրենսդրության համապատասխան դրույթները, առաջարկություն է ներկայացվել վերանայել ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգչի (ՀԴ-001-2016) Պետական կառավարում հատվածը, քանի որ ՀՀ-ում սոցիալական ապահովությունը չի իրականացվում առանձին ինստիտուցիոնալ միավորի կողմից, այլ ընդգրկված է պետական կառավարման համապատասխան մակարդակներում: Արդյունքում «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգչում» իրականացվել են համապատասխան փոփոխություններն ու լրացումները:

Ֆինանսական հաշիվների կազմման նպատակով, տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների համադրման և առավել արժանահավատ տվյալի ընտրման գործընթացի արդյունավետ կազմակերպումն ապահովելու համար առաջին անգամ պատրաստվել և կատարելագործվել են «Ումից-Ում (FWTW)» աղյուսակները:

ՀՀ ՊԵԿ-ից ստացված տվյալների հիման վրա՝ կատարելագործվել են ռեսպոնդենտներից ստացված տվյալների ստուգաճշտման գործընթացները:

2.6. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Համաձայն Արմստատի և ՀՀ ԿԲ միջև 2010 թվականի դեկտեմբերի 17-ի ստորագրված երկկողմանի փոխըմբռնման հուշագրի դրույթների, Արմստատը կազմել է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ» և «Ծառայություններ» բաժինների որոշ հոդվածները, ինչպես նաև վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վերաբերյալ վերջնական ցուցանիշները: Նշվածի հիման վրա, ՀՀ ԿԲ-ն տրամադրել է Արմստատին՝ Արմստատի հրապարակումներում և տվյալների բազաներում զետեղելու համար:

Աշխատանքներ են իրականացվել արտաքին և փոխադարձ առևտրի հաշվառման դաշտի բարելավման և ցուցանիշների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ՝ համաձայն «Ապրանքների արտաքին առևտրի վիճակագրություն. Հասկացություններ և սահմանումներ, 2010» ձեռնարկի դրույթների և ԵԱՏՄ անդամ պետությունների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության և փոխադարձ առևտրի վիճակագրության վարման միասնական մեթոդաբանության և ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքնային անվանացանկի:

Աշխատանքներ են իրականացվել օտարերկրյա (ներառյալ՝ օտարերկրյա ուղղակի) ներդրումների, ինչպես նաև ծառայությունների միջազգային առևտրի հաշվառման դաշտի բարելավման և ցուցանիշների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ: Մշակվել և ներդրվել է «Ծառայությունների միջազգային առևտրի մասին» հաշվետվական ձևը և դրա լրացման հրահանգը համաձայն «Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրության ձեռնարկ, 2010» դրույթների:

Համաձայն Արմստատի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի 2020թ.-ից իրականացվել են աշխատանքներ զբոսաշրջության հաշվառման դաշտի բարելավման ուղղությամբ, որի արդյունքների հիման վրա վերանայվել են 2020թ. ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: Ոլորտի տվյալների սկզբնաղբյուրը հանդիսանում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման (այսուհետ՝ ՍԷԿՏ) տեղեկատվական շտեմարանը:

Շարունակվել են Արմստատի կայքում զետեղված ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների (արտահանում և ներմուծում՝ ըստ ապրանքի ծագման երկրի և առևտուր անող երկրի հատկանիշների) տեղեկատվական շտեմարանների ամսական կտրվածքով արդիականացման աշխատանքները:

Ամսական և տարեկան պարբերականությամբ արդիականացվել են արտաքին և փոխադարձ առևտրի տվյալների շտեմարանները, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ՝ ՀՀ վճարային հաշվեկշռի, ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, ՀՀ համախառն արտաքին պարտքի, միջազգային զբոսաշրջության և օտարերկրյա ներդրումների (միայն տարեկան պարբերականությամբ) տվյալների շտեմարանները:

ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջների և սահմանված

ժամանակացույցի համաձայն, ներկայացվել և վերբեռնվել են արտաքին և փոխադարձ առևտրի ամենամսյա, ՀՀ վճարային հաշվեկշռի, ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, ՀՀ համախառն արտաքին պարտքի եռամսյակային ցուցանիշները ԱՄՀ կայքի համապատասխան էջում:

2.7. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2.7.1. Սոցիալական ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկությունը հավաքվել է 75 վիճակագրական հաշվետվությունների ձևերով (1-ը՝ ամսական, 5-ը՝ եռամսյակային, 9-ը՝ կիսամյակային, 1-ը՝ հնգամյա, 59-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները հավաքվել են 9 վիճակագրական հաշվետվությունների ձևերով (1-ը՝ եռամսյակային և 8-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Իրականացվել են Արմստատբանկի տվյալների շտեմարանի սոցիալական վիճակագրությանն առնչվող հատվածի արդիականացման աշխատանքներ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2021 թվականին» և «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2022 թվականին» վիճակագրական ժողովածուներից տվյալների ժամանակագրական շարքերն ամբողջությամբ տեղափոխվել են Արմստատբանկ տվյալների շտեմարան:

Սոցիալական ոլորտի վիճակագրության կատարելագործման համատեքստում իրականացվել է համագործակցություն սոցիալական վիճակագրության տարբեր ոլորտների վարչական ռեգիստրներ վարող նախարարությունների և գերատեսչությունների հետ, արդիականացնելով տվյալ ոլորտի վիճակագրության ինչպես սկզբնական վիճակագրական, այնպես էլ ամփոփ վարչական հաշվետվական ձևերը: Հավաքվող վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին և դասակարգմանը համապատասխանեցնելու, վիճակագրական տեղեկության օգտագործողների պահանջարկն ամբողջությամբ բավարարելու նպատակով, վերանայվել են գիտության, իրավական, սոցիալական սպասարկման և մշակույթի ոլորտներին առնչվող վիճակագրական հաշվետվությունների ձևերը և համապատասխան փոփոխություններ կատարվել ներառված ցուցանիշների կազմում:

Առողջապահության նախարարության հետ համատեղ արդիականացվել է «Մարդու իմունային անբավարարության վիրուսի և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի մասին» վարչական ամփոփ հաշվետվության ձևը և ներդրվել է նոր՝ «Կորոնավիրուսային հիվանդության մասին» վարչական ամփոփ հաշվետվության ձևը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ արդիականացվել են «Ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների մասին», «Երեխայի ծննդյան միանվագ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և չաշխատող անձին տրվող մայրության նպաստների մասին» «Որդեգրման մասին», «Ընտանիքում բռնության դեպքերի մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին», «Թրաֆիքինգի զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի մասին» վարչական ամփոփ հաշվետվական ձևերը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ արդիականացվել են կրթության ոլորտի հինգ հաշվետվական ձևերը: «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վիճակագրական տեղեկությունների մշակման, արտադրության և տարածման գործընթացներում կրթության ոլորտի ազգային առանձնահատկություններն արտահայտելու նպատակով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ մշակվել է Կրթության ազգային դասակարգիչը՝ «Կրթական հաստատություններում սովորողների և ուսանողների թվաքանակի ու շարժի ընդհանրացված ցուցանիշներն ըստ կրթության միջազգային ստանդարտ դասակարգումների» հիման վրա:

Իսլանդիայի ազգային վիճակագրական ինստիտուտի հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ մի շարք ցուցանիշների (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հարցաշար, հետազոտությունների և մշակումների վիճակագրության տվյալների հոսքը համալսարաններից և գիտահետազոտական հաստատություններից, գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների թիվը, աշխատանքների ծավալը և աշխատողների թվաքանակը, ներքին և արտաքին ծախսերը, նշյալ հաստատություններում հետազոտություններով և մշակումներով զբաղվող աշխատողների թվաքանակը (ինչպես աշխատողների թվաքանակը, այնպես էլ՝ լրիվ դրույքով համարժեքները), գիտատեխնիկական աշխատանքների ծավալն ըստ տեսակների, ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների, հետազոտողների թվաքանակը և այլն) և համապատասխան հաշվետվական ձևի ու լրացման հրահանգի արդիականացման և միջազգային չափանիշների հետ ներդաշնակեցման ուղղությամբ: Նշված փոփոխությունները հաստատվել են Խորհրդի 2022թ. դեկտեմբերի 22-ի թիվ 12-Ն որոշմամբ:

2.7.2. Բնապահպանություն

Պաշտոնական վիճակագրական հաշվետվությունների հավաքման առցանց համակարգի ներդրմամբ պայմանավորված, ինչպես նաև վիճակագրական տեղեկության օգտագործողների համար հետաքրքրություն ներկայացնող նոր ցուցանիշներ ներառելու, վիճակագրական տեղեկության որակի բարձրացման և ամբողջականացման, ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու, ներկայացվող վիճակագրական փաստաթղթերի ցուցանիշների հստակեցման նպատակով շահագրգիռ կառույցների հետ վերանայվել և որոշ մասնագիտական փոփոխություններ ու լրամշակումներ են կատարվել ոլորտի հաշվետվական ձևերում:

Վարչական ռեգիստրների ձևավորման և կատարելագործման աշխատանքների շրջանակում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վարչական ռեգիստրներից ստացվել է տեղեկություն ՀՀ

ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման և ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ:

Տվյալների ամբողջականացման նպատակով Արմստատը շարունակել է համագործակցությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ քաղաքային բնակավայրերի կանաչ տարածքների վերաբերյալ նոր վիճակագրական հաշվետվության ներդրման ուղղությամբ:

Իրականացվել են մթնոլորտային արտանետումների սատելիտային հաշիվների (օդի հաշիվների) կազմման և ներդրման աշխատանքներ, որոնք համահունչ են Եվրոպական Միություն-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) ներքո Հայաստանի վիճակագրական համակարգի՝ Եվրոպական վիճակագրական համակարգում կիրառվող նորմերի և գործելակերպերի հետ համապատասխանեցման պահանջին: Հաշիվները կազմվել են 2017թ. համար: Կազմված օդի հաշիվներին փորձագիտական գնահատական տալու և դրանց բարելավմանն աջակցելու համար ԱՋԲ փորձագետները «Նոր վիճակագրական ռեսուրսների և կարողությունների զարգացում տվյալների նոր աղբյուրներում և տեխնոլոգիաներում» ծրագրի շրջանակում տրամադրել են խորհրդատվական օժանդակություն:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք» ծրագրի շրջանակում եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան ձևավորվել է բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարան, ինչպես նաև էկոպորտալ, որտեղ տեղադրված ցուցանիշները արդիականացվում են՝ հղում տալով Արմստատբանկում «Շրջակա միջավայր» բաժնի ցուցանիշներին, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված ստանդարտներին:

«ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակում կազմվել է Քասախի գետավազանի համար կազմվող ջրի հաշիվներում ներառված ցուցանիշների վերաբերյալ: Սույն գործընթացը հնարավոր է եղել իրականացնել ջրային ռեսուրսների վերաբերյալ առկա տեղեկության և շտեմարանի պարբերաբար արդիականացման շնորհիվ:

Շարունակվել են աշխատանքները կայուն զարգացման և «կանաչ էկոնոմիկայի» բնութագրիչ վիճակագրական ցուցանիշների ներդրման ուղղությամբ:

«Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Շրջակա միջավայրին առնչվող կյանքի որակի ցուցանիշներ» բաղադրիչի շրջանակում մշակվել է 19 ցուցանիշ՝ համապատասխան մեթատվյալներով՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ստանդարտ պահանջներից բխող նույն կազմակերպության առաջարկների հիման վրա: Ընտրված ցուցանիշներով Արմստատբանկում ձևավորված տեղեկատվական հարթակը ներառում է շրջակա միջավայրին առնչվող բոլոր թիրախային

հասկացությունները: Ծրագրի շրջանակում մշակվել է «Շրջակա միջավայրին առնչվող կյանքի որակի ցուցանիշների մեթոդաբանական զեկույց» և «Շրջակա միջավայրին առնչվող կյանքի որակի ցուցանիշների տերմինների բառարան»: 19 ցուցանիշներից 17-ի համար ՀՀ ԿԲ օժանդակությամբ վեբ հավելվածի միջոցով հաշվարկվել են նաև բաղադրյալ ցուցանիշներ (Composite indicators) ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:

Հիմնվելով Ներքին գործերի նախարարությունից ստացվող արտակարգ դեպքերից հասցված վնասների և կորուստների վերաբերյալ տեղեկանքում պարունակվող տվյալների վրա, ձևավորվել է տվյալների շտեմարան, որտեղ ներառված տեղեկությունը կմշակվի և հետագայում կներառվի Արմստատի հրապարակումներում:

2.7.3.Տնային տնտեսությունների հետազոտություններ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (այսուհետ՝ ՏՏԿԱՀ) իրականացումը և մեթոդաբանության կատարելագործումը Համաշխարհային բանկի մշակած մեթոդաբանական զարգացումների ներքո:

2019թ-ի հունվարի 1-ից սկսած ՏՏԿԱՀ-ն իրականացվել է գրասալիկներ՝ CAPI տարբերակով: Թղթային տարբերակից անցումը CAPI տարբերակին զգալիորեն բարելավել է հավաքված տվյալների որակը, քանի որ գործնականում նվազագույնի է հասցվել հարցաթերթի լրացման փուլում սխալ պատասխան մուտքագրելու հավանականությունը: Նախորդ տարիների հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարելագործվել են ՏՏԿԱՀ-ի գործիքները՝ հարցաթերթն ու օրագիրը՝ (օրինակ՝ 2019թ.-ից փոփոխվել են ՏՏ-ների կողմից սպառման վերաբերյալ տեղեկությունները, որոնք հավաքվում են 14 օրվա ընթացքում՝ նախկինում կիրառված 30 օրվա փոխարեն):

2019 թվականին Համաշխարհային բանկը կրկին աջակցություն է ցուցաբերել Արմստատին՝ սպառման ազգային ագրեգատի և աղքատության գծերի ձևավորման ու վերանայման մասով՝

ա) սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվել է ՏՏԿԱՀ-ի վերանայված հարցաշարի տվյալների հիման վրա,

բ) փոփոխվել է աղքատության գծերի հաշվարկման մեթոդաբանությունը և հաշվարկվել է աղքատության չորս տարբեր գիծ.

- պարենային աղքատության գիծ,
- աղքատության ստորին գիծ,
- աղքատության վերին գիծ,
- աղքատության միջին գիծ, որն աղքատության ստորին և վերին գծերի միջինն է:

Սույն փոփոխությունները կիրառվել են նաև հաջորդ ՏՏԿԱՀ-երի իրականացման ժամանակ:

2019-2023թթ.-ին ՏՏԿԱՀ տարեկան հետազոտվել է 5184 տնային տնտեսություն՝ յուրաքանչյուր ամիս 432 տնային տնտեսություն: Հետազոտություններն իրականացվել են մեկ տարվա ընթացքում՝ տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամսյա փոխարինմամբ (ռոտացիայով), տվյալներն ապահովել են նվազագույն ներկայացուցչականություն՝ մարզային կտրվածքով:

Համաշխարհային բանկի փորձագետների աջակցությամբ, որպես աղքատության չափման այլընտրանքային մեթոդի կիրառման շարունակական կատարելագործում, իրականացվել է աղքատության բազմաչափ համաթվի գնահատումը:

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում 2019թ.-ից սոցիալական բացառումների վիճակագրության մշակման նպատակով 9-ը ցուցանիշներից կազմված հին հավաքածուն Եվրոստատի կողմից երկրների հետ համադրելու նպատակով անցում է կատարվել 13 ցուցանիշներից բաղկացած նոր հավաքածուին: Այսպիսով, ԵՄ-ի կողմից վերանայված ցուցանիշները 2019թ.-ից Արմստատը հաշվարկել է նյութական զրկվածության աստիճանը տարբեր շեմերով, որը հնարավորություն է ընձեռել իրականացնում նյութական ծայրահեղ զրկվածության ցուցանիշների միջազգային համեմատություններ:

Հետազոտության հարցաթերթի համապատասխան հարցերի վերանայման և փոփոխման միջոցով կատարելագործվել է աղքատության նյութական և ոչ նյութական (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և բնակարանային պայմաններ և այլն) ցուցանիշների մշտադիտարկումը:

2019-2023թթ.ին Արմստատի կայքում հրապարակվել են «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցը, պատրաստվել են մամլո աղքատության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություններ են կատարվել ԿԶՆ հարթակում. 1.4.1, 6.2.1 և 16.6.2 ցուցանիշները ներկայացվել են ըստ ուղղությունների և ըստ կատեգորիաների:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՏՏԿԱՀ-ի տվյալների բազաների տրամաբանական ստուգման և կազմավորման աշխատանքներ: Ձևավորված բազաների անվանազերծված տարբերակները հետագա վերլուծությունների համար տրամադրվել են Համախարհային բանկին, որն աջակցություն է ցուցաբերել Արմստատին սպառման ազգային ագրեգատի և աղքատության գծերի ձևավորման մասով: Արմստատի կայքում տնային տնտեսությունների և դրանց անդամների մակարդակով ՏՏԿԱՀ-ի անվանազերծված միկրոբազաները համալրվել են 2019-2023թթ.-ի տվյալներով:

Եռամսյակային հաճախականությամբ հաշվարկվել է նվազագույն սպառողական զամբյուղը՝ միջին ընթացիկ գներով (երկու տարբերակով) և հրապարակվել «Հայաստանի Հանրապետության

սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի եռամսյակային թողարկումներում:

Հաշվետու ժամանակահատվածում ՏՏԿԱՀ անվանազերծված տվյալների բազաներից ստացվող աղքատության, ՏՏ ժողորդագրական կազմի, եկամուտների, ծապսեդրի, սննդամթերքի սպառման և բազմաթիվ այլ ագրեգացված ցուցանիշներ այդ թվում՝ գենդերային և մարզային կտրվածքով, հաշվարկվել և տրամադրվել են ՀՀ, այլ երկրների և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների, ինչպես նաև հրապարակվել են վիճակագրական տարեգրքերում և այլ մասնագիտացված ժողովածուներում:

2.7.4. Ժողովրդագրություն

ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի (ՔԿԱԳ) ռեգիստրի միասնական էլեկտրոնային կառավարման համակարգից ամսական պարբերականությամբ ստացված ծննդյան, մահվան, ամուսնության և ամուսնալուծության վերաբերյալ գրանցումների մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ՝ ՀՀ մարզերի և տարածաշրջանների, իսկ 2023թ.-ից արդեն ըստ խոշորացված համայնքների բաշխմամբ: Տվյալների վիճակագրական մշակման գործընթացում կատարվել են բազային ցուցանիշների տրամաբանական ստուգման, ճշգրտման և խմբագրման ամենամսյա աշխատանքներ:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1333-Ն որոշման, 2019-2023թթ. շարունակվել են ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից եռամսյակային պարբերականությամբ բնակչության «հաշվառման» և «հաշվառումից հանելու» ակտային գործողությունների վերաբերյալ բազային տվյալների՝ էլեկտրոնային եղանակով և սահմանված ձևաչափով ստացումը, որոնց վիճակագրական մշակման արդյունքում հրապարակվել են բնակչության միգրացիոն տեղաշարժերի վարչական օպերատիվ տվյալները՝ եռամսյակային պարբերականությամբ, իսկ բազային տվյալների դասակարգման, ճշգրտման և խմբագրման աշխատանքների արդյունքում մշակված տվյալների հիման վրա՝ տարեկան ամփոփ տվյալները:

Բնակչության բնական և մեխանիկական շարժերը բնութագրող եռամսյակային օպերատիվ ցուցանիշների, ինչպես նաև տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով գնահատված միգրացիայի ցուցանիշների հիման վրա, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հաշվարկվել են 2019-2023թթ. մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները ՀՀ մարզերի, տարածաշրջանների (համայնքների), քաղաքային, գյուղական բաշխումով, ք. Երևանի վարչական շրջաններով:

Արդիականացվել են ՀՀ մարզերի Երևան քաղաքի մշտական բնակչության սեռատարիքային կազմի (ՀՀ 2011 թվականի մարդահամարի հիմքով)՝ 2019, 2020, 2021, 2022, 2023թթ. տարեսկզբերի դրությամբ՝ քաղաքային և գյուղական կտրվածքով տվյալները, որոնք զետեղվել է Արմստատի կայքի «Ժողովրդագրական տվյալների բազա» հատվածում: Վերջինս համալրվել է նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բնական շարժի ցուցանիշներով:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայությունից (2023թ.-ից ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից) տարեկան վարչական ամփոփ հաշվետվություններով ստացվել են ՀՀ-ում միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ տվյալները (փախստական ճանաչված և փախստականի կարգավիճակը դադարեցված անձինք, ապաստանի հայցի կասեցված կամ կարճված դիմումներ):

ՀՀ Ոստիկանությունից (2023թ.-ից ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից) հաշվետու ժամանակաշրջանում ստացվել են տարեկան վարչական ամփոփ հաշվետվություններ՝ ՀՀ-ում ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների վերաբերյալ:

ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից (2023թ.՝ ՆԳՆ-ից) ստացվել են ՀՀ տարածքում ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի դեպքերի մասին կիսամյակային վարչական ամփոփ հաշվետվություններ:

2022թ.-ից ներդրվել և ՀՀ Ոստիկանությունից (ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից) ստացվել են տարեկան վարչական ամփոփ հաշվետվություններ ՀՀ քաղաքացիություն ստացած և ՀՀ քաղաքացիությունը դադարեցրած անձանց, նրանց սեռի, տարիքային խմբերի, նախորդ քաղաքացիության երկրի, բնակչության պետական ռեգիստրում՝ ըստ մարզերի/ք.Երևանի հասցեներով հաշվառվածների վերաբերյալ:

2023թ.-ից ներդրվել և ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից ստացվել են ամփոփ տվյալներ ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիներից և նրանց ընտանիքի անդամներից ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման դիմումների և դրանց մասին ընդունված որոշումների վերաբերյալ՝ ստացված workpermit.am հարթակի միջոցով:

ՀՀ ՍԷԿՏ համակարգից Արմստատին հասանելի կապուղով ներբեռնվել են ամփոփ տվյալներ՝ ՀՀ պետական սահմանի անցակետերով իրականացված սահմանային գրանցումների վերաբերյալ՝ ըստ մուտքերի ու ելքերի, սահմանային անցակետերի, քաղաքացիության երկրի, նույնականացված մուտքերի և ելքերի քանակի:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման աշխատանքները ըստ «Համայնքների գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» վիճակագրական հաշվետվությունների:

2022թ. մարդահամարի նախապատրաստական և անցկացման աշխատանքները կազմակերպվել են ՄԱԿ-ի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի 2020 փուլի մարդահամարների անցկացման համակցված եղանակի կիրառման ուղեցույցերով և ընթացակարգերով՝ բնակչության պետական ռեգիստրից (այսուհետ՝ ԲՊՌ) ստացվող հիմնական ցուցանիշների և 25 տոկոս ընտրանքային հարցմամբ մարդահամարի ծրագրով սահմանվող տվյալների հավաքմամբ: Համակարգվել են ՀՀ 2022թ. մարդահամարի անցկացման համակցված մեթոդով անցկացման համար՝ ԲՊՌ-ՍԷԿՏ համակարգերի համադրման նպատակով համակարգչային ծրագրային ապահովման փաթեթի մշակման ու ներդրման գործառույթները:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին ՀՀ անդամակցության շրջանակում, եռամսյակային պարբերականությամբ, «Բնակչություն» ենթաբաժինը համալրվել է մշտական բնակչության թվաքանակի միջին եռամսյակային ցուցանիշներով:

Ըստ Եվրո SDMX մեթատվյալների կառուցվածքի (ESMS) մշակվել և փաստաթղթավորվել են՝ բնակչության թվաքանակի, ծնելիության, մահացության և կյանքի սպասվող տևողության, ամուսնության և ամուսնալուծության վիճակագրության և միգրացիայի մեթատվյալները, որոնք հասանելի են Արմստատի կայքի ՝ «14.Բնակչություն» հատվածում: Ըստ անհրաժեշտության լրամշակվել են ոլորտին վերաբերող Որակի հռչակագրերը:

Սահմանված ժամկետներում ԿԶՆ Ազգային հաշվետվողական հարթակ են վերբեռնվել ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ»-ի մարդահամարի և ժողովրդագրության վիճակագրությանն առնչվող ցուցանիշները:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել, ամփոփվել և հրապարակվել են մարդահամարի և ժողովրդագրական իրավիճակը բնութագրող հիմնական վիճակագրական ցուցանիշներն ըստ հանրապետության և մարզերի, որոնք վերբեռնվել են ինչպես նաև Արմստատբանկում:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, ԵՏՀ-ի, Եվրոստատի, ԵԱՀԿ, ԱՊՀ վիճակագրական կոմիտեի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ինչպես նաև մի շարք այլ միջազգային շահագրգիռ կառույցների հայցերով պատրաստվել է տեղեկություն՝ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, ծնելիության, մահացության և դրա պատճառների, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության, ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի և դրանց առանձին բնութագրիչների մասին:

Մարդահամար 2022

ՄԱԿ-ի կողմից սահմանված մարդահամարների անցկացման 2020թ. շրջափուլում, առաջնորդվելով «2020թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներով» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ինչպես նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1115-Ն

որոշմամբ սահմանվեց ՀՀ մարդահամարն անցկացնել 2022 թվականի հոկտեմբերի 13-22-ը ներառյալ, իսկ փորձնական մարդահամարը՝ 2019թ. հոկտեմբերի 3-12-ը ներառյալ, ՀՀ Շիրակի մարզի ք. Արթիկում և ՀՀ Կոտայքի մարզի Ակունք, Արամուս, Կամարիս և Մայակովսկի գյուղերում:

Մարդահամարի նախապատրաստաման, անցկացման, տվյալների հավաքման և վիճակագրական մշակման, ամփոփման ու մարդահամարի ամփոփ տվյալների հրապարակման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար Արմստատում ստեղծվել է Մարդահամարի գործառնական վարչություն:

✓ Մշակվել են ՀՀ-ում 2022թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցը, կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները, քննարկվել և ընտրվել է մարդահամարի անցկացման մեթոդը,

✓ Կազմակերպվել և իրականացվել են ՀՀ-ում 2019թ. փորձնական մարդահամարի իրականացման համար դաշտային և ժամանակավոր աշխատողների պահանջարկի հաշվարկ, նախապատրաստվել են հրահանգավորումների համար անհրաժեշտ կազամակերպա-իրավական և մեթոդաբանական ձևաթղթերն ու հրահանգները, կազմվել են ՀՀ Շիրակի և Կոտայքի մարզերում ՀՀ-ում 2019թ. փորձնական մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանները և մարդահամարային շրջանացման աշխատանքների իրականացման գործընթացում անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել Արմստատի մարզային վարչություններին,

✓ Մշակվել են 2022թ. զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիրը և մարդահամարը լուսաբանող պաստառներ ու բրոշյուրներ, ինչպես նաև հաշվարարների պայուսակների համար մարդահամարի խորհրդանշանը (լոգոն),

✓ Մշակվել են մարդահամարի էլեկտրոնային հարցաթերթի լրացման ծրագիրը և հրահանգը, մարդահամարի աշխատանքներում ներգրավված ժամանակավոր աշխատողների՝ համակարգողների, հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների ուղեցույցները,

✓ ՀՀ ԲՊՌ-ի տվյալների բազայի և ՍԷԿՏ համակարգի տվյալների համադրման ծրագրային ապահովման մշակման ծառայություններն իրականացնող ընկերության հետ աշխատանքների կազմակերպումը, վերահսկումը, ծրագրի փորձարկումը և ընդունումը,

✓ Փորձնական մարդահամարի արդյունքներով լրամշակված հարցաշարի հիման վրա՝ մեթոդաբանական փաստաթղթերի վերանայումը, տվյալների ավտոմատացված մշակումն ապահովելու համար էլեկտրոնային հարցաթերթի լրացման, տրամաբանական ստուգման, ուղղման և հիմնապաշարների ձևավորման ծրագրերի լրամշակումը և համալրումը,

✓ Մարդահամարի հարցաշարի վերջնական տարբերակի հիման վրա ելքային աղյուսակների ստացման համակարգչային ծրագրերի մշակումը,

✓ Մարդահամարի ժամանակավոր աշխատողների (*համակարգողների, ցուցակագրողների, հրահանգիչ-հսկիչների, հաշվարարների*) հրահանգավորումների անցկացման միասնական էլեկտրոնային հրահանգի մշակումը:

✓ Երևան քաղաքում և հինգ մարզերում ԲՊՈՒ-ից ստացված հասցեների՝ տեղերում ընտրանքային ստուգումների և ճշգրտումների կազմակերպումը (ցուցակագրում) և իրականացումը,

✓ Արմստատի մարզային և Երևան քաղաքի վարչություններում կազմվել են ՀՀ 2022թ. մարդահամարի կազմակերպական պլանները՝ հաշվարկելով անհրաժեշտ հաշվային ու հրահանգչական տեղամասերի քանակը, մարդահամարային ժամանակավոր կադրերի անհրաժեշտ թվակազմը, նրանց ներգրավման և հրահանգավորումների անցկացման ժամկետները,

✓ Լրամշակված ՀՀ 2022թ. մարդահամարի ծրագիրը (հարցաշարը) ներկայացվել է ՀՀ 2022թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման հանրապետական հանձնաժողովի քննարկմանը, հավանության է արժանանացել, որից հետո հաստատվել է ՀՀ կառավարության 28.07.2022թ. N 1149 որոշմամբ (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166588),

✓ ՀՀ 2022թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման համար ԲՊՈՒ-ի՝ Արմստատին հասանելի համակարգից (համակցված ՍԷԿՏ համակարգին) ներբեռնվել են մարզերի և ք.Երևանի հասցեների վերաբերյալ տվյալները, որոնց հիման վրա կազմվել են քաղաքների և գյուղերի հասցեների ցուցակները,

✓ ՀՀ 2022թ. մարդահամարի տվյալների հավաքման համար, անհրաժեշտ համակարգչային ծրագրերը ներբեռնվել են հաշվարարների համար նախատեսված գրասալիկների մեջ,

✓ ՏԿԵՆ-ի և համայնքների պատասխանատուների հետ համագործակցությամբ մարզերում ու ք.Երևանում տրամադրվել են՝ հրահանգչական տեղամասերի տեղակայման համար անհրաժեշտ գույքով կահավորված ժամանակավոր աշխատասենյակներ,

✓ ՀՀ 2022թ. հոկտեմբերի 13-22-ը մարդահամարի անցկացման՝ ընտրանքային եղանակով տվյալների հավաքման նպատակով, հաշվարարների կողմից իրականացվել են իրենց հատկացված հաշվային տեղամասերում տեղակայված և ընտրանքում ընդգրկված բոլոր շենքեր/շինությունների նախնական շրջայց, որին հաջորդել է մարդահամարի հաշվառումը՝ տնային տնտեսություններում մարդահամարի հարցաթերթերով հարցումների և ստացված պատասխանները գրասալիկներում լրացնելու միջոցով.

✓ Իրականացվել է հետմարդահամարային ընտրանքային վերահսկիչ շրջագայության անցկացումը, որի շրջանակում հրահանգիչ հսկիչներն ու հաշվարարները համատեղ այցելելով ընտրված հասցեներում տեղակայված տնային տնտեսություններ անցկացրել են գրասալիկներում հաշվառված անձանց վերաբերյալ տվյալների ստուգումներ,

✓ 2022 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակմանն ուղղված միջոցառումների համաձայն, իրականացվել են հավաքված տվյալների տեղեկատվական շտեմարանի ամբողջականության և կառուցվածքի վերջնական ստուգում, ընտրանքային մարդահամարի տվյալների տարածման կշիռների հաշվարկներ՝ բնակավայրերի մակարդակով,

✓ Իրականացվել է 25% ընտրանքային մարդահամարի տեղեկատվական շտեմարանի տվյալների և ԲՊՈՒ-ի համապատասխան տվյալների համակցում և ՀՀ 2022թ. մարդահամարի տվյալների վիճակագրական շտեմարանի ձևավորում,

✓ Մարդահամարի արդյունքներով ՀՀ առկա և մշտական բնակչության թվաքանակի օպերատիվ, այնուհետև՝ նախնական տվյալների ստացում և հրապարակում,

✓ Մարդահամարի ելքային աղյուսակների ստացում հանրապետության, մարզերի կտրվածքով՝ ըստ սահմանված բաժինների ու ձևաչափերի,

✓ Մարդահամարի արդյունքներով հրապարակումների պատրաստում և տարածում:

2.7.5. Որակի կառավարում

Հաշվետու ժամանակաշրջանում, որակի կառավարման բնագավառում Արմստատը շարունակել է իր գործունեությունն ուղղված որակի կառավարման ստանդարտների և մոդեռնիզացման գործիքների ու մոդելների ներդրման և կիրառման ապահովմանը:

2019-2023թթ. ընթացքում իրականացվել են թվով 140 վիճակագրական արտադրանքի որակի հռչակագրերի արդիականացման, ինչպես նաև դրանց հայերենից անգլերեն թարգմանության աշխատանքները /https://www.armstat.am/am/?nid=545/: Որակի հռչակագիրը նկարագրում է վիճակագրության օրենսդրական հիմքերը, վիճակագրության նպատակն ու մեթոդաբանությունը, դրա տարածման եղանակները, վիճակագրության օգտագործողների և նրանց մոտ առաջացող հարցերի փարատման համար այլ կարևոր տեղեկություններ: Որակի հռչակագրերը խմբավորված են ըստ հետևյալ 18 բնագավառների.

- Էկոնոմիկա և ֆինանսներ,
- Բնակչություն և սոցիալական գործընթացներ,
- Արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ,
- Տրանսպորտ և Զբոսաշրջություն,
- Արտաքին առևտուր,
- Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն,
- Վիճակագրական բիզնես ռեգիստր,
- Շրջակա միջավայր և էներգետիկա:

Մշակվել են «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Հանքային ջրերի օգտագործում և արդյունահանում», «Հողերի բարելավում», «Ջրի հաշիվներ», «Փոքր և միջին ձեռնարկատատիրություն», «Ամուսնություն և ամուսնալուծություն» նոր որակի հռչակագրերը, թարգմանվել հայերենից անգլերեն և զետեղվել կայքում:

Իրականացվել են Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM, տարբերակ 5.0) հենքով փաստաթղթավորված թվով 140 (որոնցից 115-ը խմբավորված են 32 խմբերով) արտադրանքի վիճակագրական գործընթացների արդիականացման, խմբագրման և դրանց հայերենից անգլերեն թարգմանության աշխատանքները /https://armstat.am/am/?nid=373/: GSBPM-ը նկարագրում և սահմանում է պաշտոնական վիճակագրության արտադրման համար անհրաժեշտ վիճակագրական գործընթացները, ապահովում ստանդարտ շրջանակներ և համաձայնեցված տերմինաբանություն՝ վիճակագրության արտադրման գործընթացներն արդիականացնելու համար:

Իրականացվել են GSBPM-ի հենքով 140 արտադրանքի վիճակագրական գործընթացների գծապատկերներով տեսապատկերավորումների արդիականացման աշխատանքները, ինչպես նաև դրանց հայերենից անգլերեն թարգմանությունը /https://www.armstat.am/am/?nid=672/, նպատակ ունենալով կյանքի կոչել GSBPM-ը, սահմանել և նկարագրել վիճակագրական գործընթացները համահունչ ձևով, բացահայտել և ցուցադրել գործընթացների և ենթագործընթացների ամբողջ շղթան, ներկայացնել կապերն Արմստատի ներսում, արդյունքում, առավել մանրամասն և ընկալելի ներկայացնել GSBPM-ի վրա հիմնված փաստաթղթավորված արտադրանքի վիճակագրական գործընթացները:

Արտադրանքի վիճակագրական գործընթացների տեսապատկերավորումն իրականացվում է «լողավազանի մոդելով»: Այն ներառում է նաև յուրաքանչյուր փուլի ենթագործընթացների համար պատասխանատու դերակատարին: «Լողավազանի մոդելում» առանձին տողերը (լողուղիները) ներկայացնում են պատասխանատու դերակատարի պատասխանատվության ներքո գտնվող ենթագործընթացները: Սկզբից մինչև վերջ սլաքները պատկերում են վիճակագրական բիզնես գործընթացների իրականացման շղթան: Յուրաքանչյուր փուլ սկսվում է «պատրաստ ենք իրականացնելու գործողությունը» մեկնարկային կետով և ավարտվում «գործողությունն իրականացվել է» եզրափակող կետով:

Իրականացվել են Արմստատի կայքում առկա եռալեզու վիճակագրական բառարանի /https://www.armstat.am/am/?nid=29/, որակի բառարանի /https://www.armstat.am/am/?nid=751/ և Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի բառարանի /https://www.armstat.am/am/?nid=786/, GSBPM-ի հասկացությունների բառարանի /https://www.armstat.am/am/?nid=880/ մշակման, արդիականացման, խմբագրման, նոր հասկացություններով համալրման և թարգմանության աշխատանքները, որոնք կարևոր ռեսուրս են օգտագործողների վիճակագրական գրագիտությունը բարձրացնելու և վիճակագրության ըմբռնմանը և օգտագործմանը նպաստելու համար:

Իրականացվել է Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակի (ԵՎՀ ՈԱՇ) 2019 թ. հրատարակության (տարբերակ 2.0) անգլերենից հայերեն թարգմանությունը, այն հաստատվել է Խորհրդի կողմից և զետեղվել Արմստատի կայքում /https://www.armstat.am/file/doc/99520198.pdf/: ԵՎՀ ՈԱՇ-ը (տարբերակ 2.0) հաջորդում է Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի 2017թ. վերանայմանը և համաձայնեցվում դրա հետ: Որակի ընդհանուր կառավարման սկզբունքների հետ միասին Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրքն ու ԵՎՀ ՈԱՇ-ը կազմում են ԵՎՀ որակի ընդհանուր շրջանակը, որի հիման վրա մշակվում, արտադրվում և տարածվում է բարձր որակի եվրոպական վիճակագրությունը: ԵՎՀ ՈԱՇ 2019թ. հրատարակության (տարբերակ 2.0) արդյունքում իրականացվել են ԵՎՀ ՈԱՇ-ի նախորդ 1.2 տարբերակի հիման վրա Դանիայի վիճակագրության օրինակով Արմստատի կողմից մշակված Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի ցուցանիշների ինքնագնահատման հարցաթերթի արդիականացման աշխատանքները: Հարցաթերթի հիման վրա իրականացվել է «Էլեկտրատրանսպորտ», «Պետական պարտք» և «Արտաքին առևտուր» վիճակագրական արտադրանքների գնահատումը՝ հիմնվելով համապատասխան ցուցանիշների վրա: Ոլորտների բացերը բացահայտելու նպատակով վերլուծվել և փաստաթղթավորվել են գնահատումների արդյունքները:

Հաշվետու ժամանակաշրջանում որակի կառավարման վերաբերյալ Արմստատում իրականացվել է թվով 6 միջազգային առաքելություն, որոնցում ընդգրկված էին փորձագետներ Բուլղարիայի, Լիտվայի, Հունգարիայի, Նիդեռլանդների, Իտալիայի վիճակագրական ծառայություններից, Իտալիայի Գյուղատնտեսական հետազոտությունների և տնտեսագիտության խորհրդի վիճակագրական գրասենյակից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից: Առաքելությունների հիմնական նպատակներն էին՝ ուսումնասիրել և գնահատել Արմստատում որակի կառավարման հետ կապված ընթացիկ իրավիճակը, տրամադրել խորհրդատվություն պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման ստանդարտների և գործիքների ներդրման և կիրառման ուղղությամբ, ինչպես նաև կազմակերպել դասընթացներ: Կազմակերպված դասընթացների ընթացքում ներկայացվել են շնորհանդեսներ հետևյալ խորագրերով «ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքը (SIMS)», «ԵՎՀ որակի ապահովման ուղղությունների հիմնական հասկացությունները», «ԵՎՀ հայեցակարգային ստանդարտներն որակի հաշվետվությունների համար», «ԵՎՀ որակի հաշվետվությունների իրականացման գործընթացը», «Տեղեկատվական մեթատվյալները և որակի հաշվետվողականությունը», «Որակի հաշվետվության բովանդակությունը», «GSBPM-ը և գործընթացների կառավարում», «Ժամանակի օգտագործման գրանցման համակարգ», «Որակի կատարողականի ցուցանիշներ», «Որակի կառավարումը Լիտվայի վիճակագրությունում», «Որակի հաշվետվողականություն», «DESAP հետազոտության ղեկավարների համար ինքնագնահատման հարցաթերթ», «Մեթատվյալների համակարգ», «Վիճակագրության մոդեռնիզացման գործիքներ և ստանդարտներ»:

Համաշխարհային բանկի ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Մեթատվյալների համակարգ» ենթաբաղադրիչի շրջանակում մշակվել է Արմստատի «2021-2023թթ. Մեթատվյալների մշակման ծրագիր» ռազմավարական փաստաթուղթը և զետեղվել Արմստատի կայքում հայերեն և անգլերեն /https://armstat.am/file/doc/99523418.pdf/: Իրականացվել է հղման մեթատվյալների համակարգի ներդրման աշխատանքը, որը մեթատվյալների անբաժանելի բաղադրիչն է՝ նպատակ ունենալով ներդնել հղման մեթատվյալների հաշվետվության ստանդարտները. ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքը (SIMS) և հաշվետվության ձևաչափերը (Եվրոպական Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման ստանդարտով (SDMX) մեթատվյալների կառուցվածքը (ESMS) և Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտը (ESQRS)):

Հղման մեթատվյալները նկարագրում են վիճակագրական հասկացություններն ու մեթոդաբանությունները, որոնք օգտագործվում են տվյալների հավաքման և արտադրության համար, ինչպես նաև տվյալների որակը:

Համակարգն աջակցում է որակի հաշվետվողականությանը, այն նաև օգտագործվում է տարածման նպատակներով՝ կենտրոնացված և ստանդարտացված ձևով հղման մեթատվյալները հրապարակելու, միջազգային ստանդարտների (SDMX) պահանջներին համապատասխանելու, արդյունքում, որակյալ, յուրաժամանակ և միջազգայնորեն համադրելի վիճակագրություն ապահովելու համար:

Իրականացվել են ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS)՝ Եվրոպական Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման ստանդարտով (SDMX) մեթատվյալների կառուցվածքի (ESMS) և Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտի (ESQRS) համաձայն վիճակագրական արտադրանքների օգտագործողին (ESMS) և արտադրողին (ESQRS) ուղղված որակի հաշվետվությունների կազման և դրանց արդիականացման աշխատանքներ, մասնավորապես՝ SIMS-ի հենքով կազմվել են թվով 54 վիճակագրական արտադրանքի համար օգտագործողին (Եվրո SDMX (վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակում) մեթատվյալների կառուցվածք (ESMS), (https://armstat.am/am/?nid=836) և արտադրողին (Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտ (ESQRS), (https://armstat.am/am/?nid=837) ուղղված որակի հաշվետվությունները: Իրականացվել են վիճակագրական արտադրանքի որակի հաշվետվությունների հայերենից անգլերեն թարգմանության աշխատանքները:

Վիճակագրական արտադրանքի համար մշակվել են Մեթատվյալներ (ESMS) և Որակի հաշվետվություններ (ESQRS) ձևաչափերով մոդուլներ, ինչպես նաև յուրաքանչյուր արտադրանքի համար՝ xml ձևաչափով SDMX 2.1 ստանդարտի երկու ֆայլ՝ մեթատվյալների կառուցվածքի

սահմանում (MSD) և մեթատվյալներ (Data) ու զետեղվել Արմստատի կայքում՝ https://armstat.am/am/?nid=836:

2022թ. հոկտեմբերի 18-20-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Իտալիայի և Հունգարիայի վիճակագրական ծառայությունների փորձագետների կողմից իրականացվել է Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ոլորտային գնահատումը: Գնահատման արդյունքներով և համապատասխան խորհրդատվություն ստանալուց հետո իրականացվել են GAMSO-ի Արմստատում ներդրման աշխատանքները: GAMSO-ն նկարագրում և սահմանում է վիճակագրական կազմակերպության շրջանակում տեղի ունեցող գործողությունները: Այն ընդլայնում և լրացնում է GSBPM-ը, ավելացնելով լրացուցիչ գործողություններ, որոնք անհրաժեշտ են վիճակագրական արտադրությանն օժանդակելու համար: GAMSO-ն նկարագրում է գործունեությունը, այսինքն՝ ինչ են անում վիճակագրական կազմակերպությունները, մինչդեռ GSBPM-ը նկարագրում է գործընթացը, այսինքն՝ ինչպես են վիճակագրական կազմակերպությունները ստանձնում վիճակագրական արտադրության գործունեությունը:

GSBPM-ի նման, GAMSO-ն նպատակ ունի ապահովելու ընդհանուր բառապաշար և շրջանակ՝ աջակցելու միջազգային համագործակցությանը, հատկապես մոդեռնիզացման ոլորտում: Մինչ անհատական համագործակցությունը սովորաբար կենտրոնանում է արտադրության որոշակի ասպեկտի մոդեռնիզացման վրա (ինչպես նկարագրված է GSBPM-ում), վիճակագրական արտադրությունը տեղի է ունենում կորպորատիվ ռազմավարությունների, կարողությունների և աջակցության առավել լայն համատեքստում: GAMSO-ն օգնում է համագործակցությունը դնել առավել լայն համատեքստում:

Իրականացվել են GAMSO-ի համապատասխան Արմստատի գործունեության քարտեզագրման և փաստաթղթավորման մշակման, խմբագրման, արդիականացման և վերջնականացման աշխատանքները, ինչպես նաև հայերենից անգլերեն թարգմանությունը:

Իրականացված աշխատանքները ներկայացվել են միջազգային փորձագետներին մեկնաբանություններ ստանալու ակնկալիքով, որոնց հիման վրա մշակվել է «Արմստատի քարտեզագրումը» (փորձագետների կողմից ներկայացված Excel ձևաչափով) ՝ GAMSO և GSBPM մոդելները համատեղելու նպատակով:

Քարտեզագրվել են Արմստատի գործառույթները (վիճակագրական և ոչ վիճակագրական) GAMSO-ի համաձայն, մշակվել է դիագրամ, որը միավորում է GAMSO-ն և GSBPM-ը՝ նկարագրելով թե ինչպես է ռազմավարական կառավարումը կապված հիմնական գործունեության հետ (պաշտոնական վիճակագրության արտադրություն): GAMSO-ի և GSBPM-ի համաձայն դիագրամը նկարագրում է ոլորտը, գործունեությունը, իրականացումը (թե ինչպես է իրականացվում գործունեությունը), ստորաբաժանումների անվանումը (հաշվետու ստորաբաժանումը, պատասխանատու ստորաբաժանումը, խորհրդակցված ստորաբաժանումը, իրազեկ ստորաբաժանումը), գործընթացի կարգավորումները (ելակետը (տվյալների հավաքածուներ,

տեղեկություն, հաշվետվություններ, իրավական փաստաթղթեր, ներքին կանոնակարգեր, ուղեցույցներ և այլն) և արդյունքը (տվյալների հավաքածուներ, տեղեկություն, հաշվետվություններ, իրավական փաստաթղթեր, ներքին կանոնակարգեր, ուղեցույցներ և այլն)), SS հավելված/համակարգ/գործիք (օգտագործված գործունեության իրականացման համար), որակի նկատառումները (որակի պահանջները, ցուցանիշները, կանոնները և այլն), ռիսկերը (ոլորտում առկա գործառնական ռիսկերը), անհրաժեշտ հմտությունները (անձնակազմից պահանջվող հմտություններն ու կարողությունները տվյալ գործունեությունը ակնկալիքների համաձայն կատարելու համար) և այլն: GAMSO-ն հաստատվել է Խորհրդի 2023թ. հուլիսի 7-ի թիվ 16-Ա որոշմամբ: 2023թ. հուլիսի 25-ին հրապարակվել է GAMSO-ի վերաբերյալ մամուլի հաղորդագրություն հայերեն և անգլերեն (https://www.armstat.am/file/doc/99539058.pdf):

Իրականացվել են որակի կառավարմանն առնչվող միջազգային կազմակերպությունների կողմից ուղարկված հարցաթերթերի լրացման աշխատանքները, մասնավորապես՝ Լավ որակի վիճակագրության արտադրության և տարածման բարելավման վերաբերյալ հարցաթերթ (Եվրոստատ), Որակի ապահովման ընդհանուր ազգային շրջանակի հարցաթերթ **(**ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտ**):**

Հաշվետու ժամանակաշրջանում Արմստատի անձնակազմի համար որակի կառավարման բաժինը կազմակերպել է թվով 7 սեմինար՝ «ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածք», «Որակի ապահովման շրջանակ», «Որակի կառավարումը Արմստատում», «Որակի հռչակագրեր» խորագրերով: Սեմինարներին մասնակցել են թվով՝ 103 աշխատակից:

Հաշվետու ժամանակաշրջանում Արմստատի որակի կառավարման բաժինը մասնակցել է թվով 39, որից 32-ը առցանց, միջազգային սեմինարների, հանդիպումների և ուսումնական դասընթացների, որոնց արդյունքում կատարելագործվել են որակի կառավարման վերաբերյալ գիտելիքներն ու հմությունները և ուսումնասիրվել այլ երկրների փորձերը:

Միջազգային հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել տեսական գիտելիքներ նաև այլ մոդեռնիզացման ստանդարտների վերաբերյալ, ինչպիսիք են՝ Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդելը (GSIM) և Ընդհանուր վիճակագրական արտադրության ճարտարապետությունը (CSPA):

GSIM-ը, միջազգայնորեն համաձայնեցված սահմանումների, հատկանիշների և հարաբերությունների տեղեկատվական շրջանակ է, որը նկարագրում է պաշտոնական վիճակագրության արտադրման մեջ օգտագործվող տեղեկատվության հատվածները (տեղեկատվական օբյեկտները):

CSPA-ը վիճակագրական արտադրության համար տեղեկատվական ճարտարապետություն է, որը մշակվել և գնահատվել է միջազգային վիճակագրական համայնքի կողմից: Այն ներառում է վիճակագրության արտադրումը GSBPM-ով սահմանված գործընթացների ամբողջ ընթացքում, գործնական կապ է ապահովում GSIM-ի, GSBPM-ի և վիճակագրության արտադրման միջև, ներառում է կիրառման ճարտարապետությունը և վիճակագրական ծառայությունների մատուցման

հետ կապված սկզբունքները, ինչպես նաև տեխնոլոգիայի ճարտարապետութունը և վիճակագրական ծառայությունների մատուցմամբ սահմանափակված սկզբունքները, չի սահմանում վիճակագրական կազմակերպությունների տեխնոլոգիական միջավայրերը:

ՄԱՍ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում, սահմանված հաճախականությամբ, SS զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են Ծրագրից բխող հիմնախնդիրներին համապատասխան, ինչպես նաև համակարգվել են SS ոլորտի գործառույթները և դրանցից բխող այլ խնդիրները:

2019թ.-ին միջազգային փորձագետները պաշտոնական այցով ժամանել էին Հայաստան՝ իրականացնելու Արմստատի SS ոլորտային գնահատում: Վերանայող թիմը հանդիպել է Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության անձնակազմի հետ՝ քննարկելու վարչության մարտահրավերները, հնարավորությունները, ինչպես նաև հետագա նպատակները: Քննարկվել են առկա իրավիճակը, ապագա կարիքները և զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև փորձագետների կողմից ներկայացվել են առաջարկներ՝ հետագա բարելավումների վերաբերյալ:

Արմստատի կողմից ներկայացվել է շնորհանդես՝ Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության գործառույթների, խնդիրների, SS ռազմավարության, մարդկային և ֆինանսական ռեսուրսների մասին, ինչպես նաև սարքավորումների ենթակառուցվածքների և SS անվտանգության քաղաքականության ակնարկ, ծրագրային ենթակառուցվածքների ակնարկ, տվյալների հավաքման և տվյալների հոսքերի ակնարկ թեմաներով:

Ծրագրի նպատակն էր բացահայտել պաշտոնական վիճակագրության մեջ SS-ի հատվածի թույլ ու ուժեղ կողմերը, հնարավորությունները, ռիսկերը, ստանալ մեկնաբանություններ և առաջարկություններ՝ որակավորված փորձագետների կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում, վերոնշյալ առաջարկների հիման վրա իրականացվել են Արմստատի պաշտոնական և ներքին ծառայողական կայքերի տեղեկատվական նյութերի տեղադրման, սպասարկման, արդիականացման և շաբաթական հաճախականությամբ, արխիվացման աշխատանքները:

Արմստատի www.armstat.am պաշտոնական կայքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ներդրվել և կարգավորվել է եռալեզու հնարավորությամբ գործիք, որը նախատեսված է թույլ տեսողություն ունեցողների համար:

- գլխավոր էջում ստեղծվել է «Ինֆոգրաֆիկա» խորագրով նոր բաժին, որի ներքո ներկայացված ցուցանիշների ինֆոգրաֆիկ պատկերավորումների կազմն ու բովանդակությունը շարունակաբար արդիականացվում և ընդլայնվում է:
- կայքի օպտիմալացում՝ կառուցվածքի վերանայում և մոդուլների վերադասավորում,
- ազդարարման համակարգի վերաբերյալ թվային սահիկաշարի և www.azdararir.am/am/ մուտք գործելու հղման կոճակի տեղադրում:

Հայաստանի պաշտոնական վիճակագրության 100-ամյա հոբելյանի առթիվ Արմստատի կայքի Գլխավոր էջում զետեղվել է տոնական տարբերանշան, ինչպես նաև ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների 30-ամյակի կապակցությամբ ներդրվել է բաժին, որն արտացոլել է Միացյալ Թագավորության ազգային վիճակագրության գրասենյակի և Արմստատի կողմից համատեղ կազմակերպված քարոզարշավը, մշակվել են թեմատիկ poster-ի տարբերակներ:

2020թ.-ին ուսումնասիրվել է «Աջակցություն Հայաստանին նախաձեռնություն» ծրագրի շրջանակում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի կողմից իրականացվող պետական կառավարման համակարգի մարմինների պաշտոնական կայքերի ուսումնասիրության արդյունքում վերհանված հիմնական բացերի և բարեփոխմանն ուղղված առաջարկների փաթեթը:

2021թ.-ից Արմստատի կայքի «Վիճակագրություն/Մեթատվյալներ» բաժնում ներդրված «Հղման մեթատվյալներ» նոր ենթաբաժնի (բաղկացած «Եվրո SDMX մեթատվյալների կառուցվածք» (ESMS) և «Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտ» (ESQRS) մոդուլներից) վիճակագրական 25 բնագավառի յուրաքանչյուր արտադրանքի համար մշակվել են երկու ստանդարտների կառուցվածքներին համապատասխան կայքէջեր, ինչպես նաև մեթատվյալների տարածման համար՝ xml ձևաչափով SDMX 2.1 ստանդարտի երկու ֆայլ՝ մեթատվյալների կառուցվածքի սահմանում (MSD) և մեթատվյալներ (Data):

Շարունակվել են www.armstatbank.am-ի վիճակագրական աղյուսակների (բազաների) լրամշակման և տեղադրման աշխատանքները PX-Web ծրագրով՝ PC Axis ձևաչափով: Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումների համար կազմակերպվել է PX-Edit ծրագրային նոր փաթեթի ուսուցումը և աջակցություն ցուցաբերվել նոր աղյուսակների ստեղծման և խմբագրման աշխատանքներում:

Իրականացվել են ԿԶՆ-ի ցուցանիշների նոր ազգային հաշվետվողական հարթակի ստեղծման, ներդրման և կառավարման աշխատանքները, ավելացվել են հայերեն ու ռուսերեն բացակայող թարգմանությունները և այլ անհրաժեշտ տվյալներ, ինչպես նաև ստեղծվել է տվյալների վերբեռնումն ապահովող աշխատանքային խումբ:

Միջազգային փորձագետի աջակցությամբ իրականացվել է Ազգային տվյալների արխիվ (NADA) վեբ կայքի ներդրում՝ microdata.armstat.am ենթադոմենի ներքո:

Իրականացվել են Թվինինգ գործընկերոջ կողմից մշակված «2021-2025 թվականների վիճակագրական համակարգի զարգացման ազգային ռազմավարություն» փաստաթղթի «Ազգային վիճակագրական համակարգի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացում և արդիականացում» հատվածի քննարկումներ:

Համաշխարհային բանկի Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Արմստատում առկա համակարգչային տեխնիկայի կարիքների խորը վերլուծության արդյունքում 2021թ.-ին կազմվել են անհրաժեշտ համակարգչային սարքավորումների տեխնիկական մասնագրեր՝ ամբողջական նկարագրությամբ և քանակի, կայացել է մասնակցություն մրցույթի

գործընթացին և հաղթող կազմակերպության հետ իրականացվել են հետագա գործընթացի պարզաբանման աշխատանքներ, որի արդյունքում 2021թ.-ին արդիականացվել է Արմստատի համակարգչային տեխնիկայի զգալի մասը, ցուցաբերվել է օժանդակություն և մասնակցություն նոր ձեռք բերված տեխնիկայի ստուգման, ընդունման և բաշխման աշխատանքներին: Համակարգվել և կազմակերպվել է նոր սարքավորումների տեղակայումը, կարգավորումը, միացումները գործող ցանցին ու համացանցին, դոմենային համակարգում համակարգիչների օգտատերերի գրանցումը, փոստային հասցեների տրամադրումը, տվյալների ու անհրաժեշտ ծրագրերի թարմացումը:

▪ Արմստատին վիճակագրական տվյալների առցանց ներկայացման, հավաքված տվյալների պահպանման և մշակման միասնական տեղեկատվական համակարգի (Համակարգ) ներդրման աշխատանքներ,

▪ Արմստատի նոր www.e-reporting.am համակարգում վիճակագրական հաշվետվությունների ձևերն առցանց ներկայացնելու նպատակով կատարվել է առկա հաշվետվությունների ձևերի մշտադիտարկում և հարթակի հետ որոշ անհամապատասխանությունների հայտնաբերում: Միասնական մոտեցում կիրառելով՝ բոլոր հաշվետվությունների ձևերը վերանայվել են և արդիականացվել հետագա աշխատանքների համար:

▪ սերվերային համակարգի ապարատային և ծրագրային ապահովման կոնֆիգուրացիայի ուսումնասիրություն: Ներդրված տարբերակի ուսումնասիրություն (առավելությունների և թերությունների հայտնաբերում, տեխնիկական առաջադրանքին համապատասխանություն) և փորձարկում,

▪ տվյալների հավաքման համակարգի մշակման գործընթացին վերաբերվող քննարկումներ, հանդիպումներ և պարզաբանումներ: Համակարգի նախագծման և մշակման ծրագրի շրջանակում կազմավորված աշխատանքային խմբի նիստերին, քննարկումներին և այլ աշխատանքներին մասնակցություն, դիտողությունների ու առաջարկությունների մշակում,

▪ Արմստատի հիմնական և պահուստային սերվերային հանգույցների նոր սերվերային սարքավորումների ընդունման, տեղադրման և անխափան աշխատանքի ապահովման համար աջակցություն,

2023թ.-ին իրականացվել է Համակարգի աշխատունակության և արդյունավետության փորձնական ստուգում՝ առավելությունների և թերությունների հայտնաբերման նպատակով, ինչպես նաև.

• Համակարգի աշխատունակության և արդյունավետության աշխատանքների կազմակերպում՝ ըստ առաջնահերթության, գործընթացի համակարգում, դիտողությունների ու առաջարկությունների մշակում:

• Վիճակագրական հաշվետվությունների բոլոր ձևերի վերանայում, վիճակագրական տվյալների կառուցվածքի ստանդարտացում և ներդաշնակեցում (հարմոնիզացիա): Համակարգի անհրաժեշտ ձևաչափի ստանդարտի համապատասխանեցում, ստանդարտացման աշխատանքների կազմակերպում:

• Վիճակագրական հաշվետվությունների և տեղեկատու աղյուսակների մշակում, ուղղում և արդեն իսկ մշակվածների փոփոխում: Տրամաբանական և թվաբանական ստուգումների ավելացում:

• Համակարգի արդիականացման գործընթացին վերաբերվող քննարկումներին և հանդիպումներին մասնակցություն և իրականացված աշխատանքների քննարկում:

• Համակարգի գործարկման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացում, փոփոխությունների համակարգում և բարելավում:

• Հրահանգավորման գործընթացի կազմակերպում և իրականացում, ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ արձանագրությունների կազմում ու խնդիրների լուծման վերաբերյալ քննարկումների կազմակերպում և վարում:

«Covid-19» համավարակով պայմանավորված, հեռավար եղանակով Արմստատի աշխատակիցների գործառույթներն իրականացնելու համար կազմակերպվել են անհրաժեշտ միջոցառումներ, ընձեռվել են հնարավորություններ, ցուցաբերվել է մասնագիտական աջակցություն:

Ժողովածուների համար պատրաստվել են քարտեզներ ArcMap ծրագրային փաթեթով, ինչպես նաև ցուցաբերվել է աջակցություն քարտեզների ստեղծման աշխատանքներում:

SDMX ստանդարտի ներդրման համար իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

• Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության խորհրդատվական կոմիտեի Եվրասիական ռեգիստրի SDMX ստեղծման և պահպանման աշխատանքային խմբի հանդիպումներ և քննարումներ, ինչպես նաև Եվրասիական SDMX ռեգիստրի դասակարգիչների միասնական համակարգի ձևավորման աշխատանքներ,

• Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված DSD տվյալների կառուցվածքի նկարագրության համար ձևավորված ձևաչափի ուսումնասիրություն, վերամշակում, ինչպես նաև Excel ձևաչափի համապատասխանեցում DSD տվյալների կառուցվածքին: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ փորձարկման աշխատանքների իրականացում՝ հաշվետվությունների DSD-կառուցվածքի կարգավորում, SDMX հաշվետվության գեներացում՝ DSD և DataFlow մեթոդների կիրառմամբ,

• անհրաժեշտ հավելվածների տեղադրում, ուսումնասիրություն, փորձարկում, ինչպես նաև DSD տվյալների կառուցվածքի գեներացում՝ DSD Constructor հավելվածի միջոցով, SDMX տվյալների կառուցվածքի գեներացում՝ SDMX Converter հավելվածի միջոցով,

• տվյալների տարածման և տեսապատկերավորման (վիզուալիզացիայի) համակարգի (Stat Suite) փորձնական տեղադրում: DataFlow մեթոդով գեներացված DSD կառուցվածքի և SDMX հաշվետվությունների ներբեռնում համակարգ:

Արմստատի ստորաբաժանումների համար ստեղծվել և տրամադրվել են նոր ծրագրային համակարգեր, որոնց ձևափոխված տարբերակները տրամադրվել են նաև Երևան քաղաքի և մարզային վարչություններին: Տարբեր ոլորտների ծրագրային համակարգերում կատարվել են ուղղումներ, փոփոխություններ և ավելացումներ, որոնք նաև պատրաստվել են ք. Երևան և մարզային վարչությունների համար:

Ստեղծվել, մշակվել և փոփոխության են ենթարկվել MS Excel ձևաչափով վիճակագրական հաշվետվությունների ձևերը, զետեղված բոլոր ֆայլերում ներդրվել են ցուցանիշների տրամաբանական և թվաբանական ստուգման համար նախատեսված անհրաժեշտ բանաձևեր, փոխվել են տիտղոսաթերթերը, ինչպես նաև արդիականացվել են տարբեր տեղեկագրեր՝ ըստ բնակավայրերի և գործունեության տեսակների:

Իրականացվել են վիճակագրական տվյալների MS SQL սերվերի և շտեմարանների կառավարման աշխատանքներ՝ իրավասությունների կարգավորում, սերվերի մշտադիտարկում, պահուստային օրինակների ստեղծում ու ըստ պահանջի վերականգնում, ընդլայնում և այլն:

Կառուցվել և վերամշակվել են աղյուսակներ՝ «Սոցիալական պատկերը և աղքատությունը» (ՏՏԿԱՀ) վիճակագրական-վերլուծական զեկույցի պատրաստման համար, ինչպես նաև բազմաբնույթ հաշվարկների, միջազգային կազմակերպությունների հարցումների, նամակների և հարցադրումների պատասխանների հաշվարկման համար:

Իրականացվել են «Survey Solution Designer» (SuSo) ծրագրային միջավայրում CAPI համակարգի միջոցով առցանց հավաքման գործընթացի կառավարման աշխատանքներ՝

- ՏՏԿԱՀ-ի 2021թ. ծրագրի փոփոխություն, ծրագրի վերբեռնում սերվեր, ընտրանքի համակցում ծրագրին, կազմվել են առաջադրանքներ հարցազրուցավարների համար: Վերահսկվել է հետազոտության տվյալների մուտքագրման, ընտրանքի հաշվետվության մուտքագրման, ընտրանքի ցուցակների տրամադրման ծրագրերի աշխատանքը,
- «Սպառողական գների և ծառայությունների սակագների դիտարկման» տվյալների առցանց հավաքման գործընթացի և սերվերի կառավարում, փոփոխությունների իրականացում, արդիականացում,
- Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության՝ «AGRIS»-ի, փորձնական աշխատանքների համար կատարվել են համապատասխան ծրագրային փաթեթների տեղադրում և գրասալիկների կարգավորումներ, ինչպես նաև իրականացվել են տվյալների առցանց հավաքման գործընթացի և կառավարման աշխատանքներ: Իրականացվել են տվյալների անվանազերծում, տրամաբանական ստուգումներ, սխալների հայտնաբերում և վերանայում՝ STATA ծրագրային փաթեթով, ստացվել են ամփոփ աղյուսակներ,
- «Հայաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրու-թյան իրականացում» («ALTA») փորձնական հետազոտության համար CAPI համակար-գի միջոցով իրականացվել են տվյալների առցանց հավաքման գործընթացի կառավարման աշխատանքներ, կատարվել է հավաքված տվյալների կառուցվածքի ուսումնասի-րություն, ինչպես նաև տվյալները պարբերաբար անվանազերծվել և ուղարկվել են Համաշխարհային բանկի փորձագետին,
- «Վիճակագրությունը արևելյան գործընկերության միջոցով (STEP)» կողմից իրականացվող ծրագրի շրջանակում՝ «Ժամանակի օգտագործման (TimeUse)» հետազոտության համար ստեղծվել է նոր սերվեր, կատարվել են համապատասխան ծրագրային փաթեթների տեղադրում և գրասալիների կարգավորումներ, ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն տվյալների առցանց հավաքման գործընթացի և կառավարման աշխատանքներում: Իրականացվել է տվյալների արտածում սերվերից

և համապատասխան ծրագրային համակարգի մշակում՝ օրագրի տվյալների մուտքագրման և հավաքման համար: Կազմակերպվել է վերապատրաստում համապատասխան աշխատակիցներին, հարցազրուցավարներին և հրահանգավորիչներին:

• Համաշխարհային բանկի նոր «FCI՝ տնտեսական կառավարում, բիզնես միջավայր և ֆիրմային արտադրողականություն» նախագծի շրջանակում «Տեխնիկական աջակցություն և ՏՀՏ ուսուցում» հետազոտության համար իրականացվել են հանդիպումներ, քննարկումներ և նախապատրաստական աշխատանքներ, ստեղծվել է նոր ICT-CAPI սերվերը, որը փորձարկվել է հետագա աշխատանքների համար: Ուսումնասիրվել և առաջին անգամ ներդրվել է CAWI (Computer Assisted Web Interviewing) համակարգը, որը հնարավորություն կտա հետազոտության հարցաթերթերը լրացնել առցանց:

• Փորձնական ԳՀՀ իրականացման նպատակով մշակվել է ԳՀՀ հարցաթերթը SuSo ծրագրով, ստեղծվել է սերվեր տվյալների առցանց հավաքման գործընթացի համար, կառավարվել են SS աշխատանքներ, ամփոփվել են տվյալները և մշակվել են համապատասխան աղյուսակներ, կազմակերպվել է վերապատրաստում համապատասխան աշխատակիցների, հարցազրուցավարների և հրահանգավորիչների համար:

Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կազմակերպվել են նոր համակարգչային սարքավորոմների տեղադրման և անսարք համակարգչային սարքավորումների ախտորոշման, նորոգման, տեղադրման աշխատանքներ: Վերանորոգվել են Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումների խափանված համակարգիչները, մոնիտորները, սնուցման բլոկերը, ինչպես նաև տպող սարքերը և անխափան սնուցման սարքերը, վերալիցքավորվել են նաև տպող սարքերի քարթրիջները: Կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, քարթրիջների ֆոտոթմբուկի մաքրում, աշխատանքի կարգավորում, թերությունների վերացում: Իրականացվել է CAPI-ի համակարգի կառավարում գրասալիկների վրա՝ համապատասխան ծրագրերի տեղակայման, VPN կապի միացման և վերահսկման աշխատանքներ:

Իրականացվել են վիճակագրական տվյալների MS SQL սերվերի կառավարման աշխատանքներ՝ իրավասությունների կարգավորում, սերվերի մշտադիտարկում, պահուստային օրինակների ստեղծում ու ըստ պահանջի վերականգնում և այլն:

Իրականացվել են SS ոլորտի աշխատանքների որակի բարելավմանն ուղղված խնդիրների ամբողջական ուսումնասիրություն, խորհրդատվություն, միջազգային համագործակցության և տեղական նախագծերի SS համակարգում, ինչպես նաև ռազմավարության և քաղաքականության մշակման աշխատանքների շարունակում:

Իրականացվել են Արմստատի դոմենային, փոստային և այլ սերվերների կառավարում, կլաստերային համակարգի կառավարման, արդիականացման և սպասարկման աշխատանքներ, ստեղծվել են նոր վիրտուալ սերվերներ:

2023թ.-ին իրականացվել են Արմստատի ներքին նոր տեղեկատվական ցանցի կառուցման, մոնտաժման և միացման աշխատանքներ:

Իրականացվել են կառուցվածքային ստորաբաժանումների, Երևան քաղաքի և մարզային վարչությունների միջև կորպորատիվ ցանցի ընդլայնման աշխատանքները, արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և համացանցը:

Կատարվել են համակարգչային սարքավորումների հակավիրուսային պաշտպանությանն ուղղված համալիր-միջոցառումներ, ապահովվել է տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու մատչելիությունը և արխիվացումը, ինչպես նաև արխիվից անհրաժեշտ տեղեկության ապաարխիվացումը, վերականգնումը:

Իրականացվել է համապատասխան մասնագիտական և տեխնիկական աջակցություն՝ Մարդահամարի գործառնական վարչության ցանցի ընդլայնման և կառավարման աշխատանքներում: Ցանցին միացվել են նոր ստացված համակարգիչները, որոնց վրա տեղակայվել են աշխատանքային անհրաժեշտ ծրագրային փաթեթները, և կատարվել են համապատասխան կարգաբերման աշխատանքներ:

Ապահովվել է առցանց սեմինարների, տեսակոնֆերանսների համակարգչային տեխնիկայի և սարքավորումների անխափան աշխատանքը, ինչպես նաև տեղադրվել են անհրաժեշտ ծրագրեր ու սարքավորումներ:

ՄԱՍ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2019-2023թթ. ընթացքում, առաջնորդվելով ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարարսկզբունքներից 9-րդ՝ «Միջազգային վիճակագրական ստանդարտների օգտագործում» և 10-րդ՝ «Միջազգային համագործակցություն» սկզբունքների պահանջներով, միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում Արմստատը շարունակել է իր գործունեությունը և ակտիվ մասնակցությունը փաստերի վրա հիմնված որոշումների կայացման գործընթացների համար բարձր որակի վիճակագրական տվյալներ արտադրելու և տարածելու նպատակով վիճակագրական ներուժի ամրապնդման, վիճակագրական մեթոդաբանության և գործիքակազմի կատարելագործման, ներդաշնակեցման ու միասնականացման, տվյալների միջազգային համադրելիության ապահովման ուղղությամբ:

Միջազգային վիճակագրական համագործակցությունը նպատակաուղղված է եղել միջազգային վիճակագրական մեթոդաբանության, ստանդարտների և դասակարգումների, մոդեռնիզացման գործիքների և ժամանակակից ՏՀՏ որդեգրմանը, անձնակազմի գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը, մասնագիտական բանիմացության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում Արմստատն իրականացրել է բազմաթիվ համագործակցության նախագծեր և դրանց շրջանակում ստացել տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

Արմստատի կողմից իրականացվել են հետևյալ նախագծերը.

1. ԵՄ օժանդակությամբ.

1) Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով (STEP),

2) ԵՄ4Էներգետիկա միջազգային համագործակցության նախագիծ էներգետիկայի ոլորտում,

3) Եվրոպական շրջակա միջավայրի գործակալության օժանդակության ներքո ԵՀՔ-ՇՄՄՏՀ (Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ) նախագիծ,

4) ԵՄ4Շրջակա միջավայր. «ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագիր

5) ԵՄ ԹԱՅԵՔՍ գործիքի շրջանակում.

- Տնտեսության ոչ ֆինանսական կազմակերպությունների (ներառյալ պետական ոչ ֆինանսական կազմակերպությունների) ֆինանսական վիճակագրություն

- Ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրություն

- Թափուր աշխատատեղերի վիճակագրութուն

- ISCO-08 և ICSE-2020 միջազգային վիճակագրական դասակարգիչների օգտագործում

-Կառուցվածքային բիզնես վիճակագրություն

2. Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի/Իսլանդիայի ազգային վիճակագրական ինստիտուտի օժանդակությամբ

- Ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրություն

3. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

1) Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությանը խորհրդատվական օժանդակություն,

2) 2018, 2019, 2021թթ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագիր ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),

3) Հողի սեփականության վերաբերյալ փորձնական հետազոտություն,

4) «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագիր,

4. ԵՄ ֆինանսավորմամբ և Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- Տնտեսական կառավարման, գործարար միջավայրի և ձեռնարկությունների արտադրողականության բարձրացման ծրագիր

5. ՄԱԿ Կանայք և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի օժանդակությամբ.

- Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում,

6. ՄԱԿ Կանայք-ի օժանդակությամբ (Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության ու Ավստրիական Զարգացման Գործակալության ֆինանսավորմամբ).

- «Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում (WEESC)» ծրագրի շրջանակում Ժամանակի օգտագործման հետազոտություն (2023-2024թթ.):

7. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և Միգրացիայի Միջազգային Կազմակերպության օժանդակությամբ.

- Կայուն Զարգացման Նպատակների (ԿԶՆ) ցուցանիշների Ազգային հաշվետվողականության հարթակի կատարելագործում,

8. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ.

- Աջակցություն ՀՀ մարդահամարին,

9. ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության օժանդակությամբ.

- Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտություն (AGRIS),

10. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի օժանդակությամբ.

- Մարդահամարի և միգրացիայի վիճակագրության կատարելագործում,

11. ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի օժանդակությամբ.

- Օդի հաշիվների կազմում,

12. ԱԶԲ-ի օժանդակությամբ.

1) Ազգային հաշիվների կատարելագործում,

2) Գիտելիքների օժանդակություն և տեխնիկական աջակցություն (KSTA) 9624-REG. Աջակցելով գիտելիքների լուծումներին Կենտրոնական և Արևմտյան Ասիայի երկրներում (2017թ. ընթացիկ գներով Հայաստանի ռեսուրսներ-օգտագործում աղյուսակի (SUT) կազմման բաղադրիչ), KSTA 9646-REG. Տվյալներ զարգացման համար (II փուլ) (2018թ. ընթացիկ գներով Հայաստանի ռեսուրսներ-օգտագործում աղյուսակի (SUT) կազմման բաղադրիչ); TA-6856 REG. TA JFPR KSTA 2021. Նոր վիճակագրական ռեսուրսների մշակում և կարողությունների զարգացում տվյալների նոր աղբյուրներում և տեխնոլոգիաներում (սեզոնային ճշգրտման բաղադրիչ)

13. ԱՄՀ օժանդակությամբ.

- «Տեխնիկական աջակցություն գների ինդեքսների վիճակագրությանը» ծրագիր,

14. ԱՄՀ ֆինանսավորմամբ և Կանադայի վիճակագրության օժանդակությամբ.

- Հայաստանի ֆինանսական հաշիվները

15. ԵՄ/Եվրահանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության ֆինանսավորմամբ և Միջազգային առևտրի կենտրոնի (ITC)՝ օժանդակությամբ.

- Ծառայություններում միջազգային առևտրի վերաբերյալ վիճակագրության շինարարության բաղադրիչի կազմումը. Առաջարկվող մեթոդաբանության ակնարկ,

16. Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) ֆինանսավորմամբ և Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) օժանդակությամբ.

- «Փոքր և միջին ձեռնարկությունների թվային փոխակերպումը Արևելյան գործընկերության երկրներում» (DT4SME) ծրագիր:

17. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

- 2022, 2023թթ. «ՏՐԱՆՍՄՈՆԵԵ» ծրագիր:

Վիճակագրության զարգացման միջազգային միտումներին իրազեկ լինելու, տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով, հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է նաև Արմստատի անձնակազմի մասնագիտական ներուժի զարգացմանը նպատակաուղղված համագործակցությունը: Արմստատի աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների, առանձին թեմատիկ քննարկումների և այլ միջոցառումների (թվով 196), այցեմասնակցությունների թիվը՝ 313, այդ թվում՝ 2019թ.՝ 169 (35 արտասահմանյան երկրում), 2020թ.՝ 17 (9 արտասահմանյան երկրում), 2021թ.՝ 18 (1 արտասահմանյան երկրում), 2022թ.՝ 38 (12 արտասահմանյան երկրում), 2023թ.՝ 71 (17 արտասահմանյան երկրում):

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և հրապարակվել է 207 զեկույց, 3208 էջ ընդհանուր ծավալով, (այդ թվում, 2019թ.՝ 72 (1230 էջ), 2020թ.՝ 20 (300 էջ), 2021թ.՝ 38 (539 էջ), 2022թ.՝ 35 (583 էջ), 2023թ.՝ 42 (556 էջ)):

Նշվածից զատ, միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում Արմստատի աշխատակիցները մասնակցել են նաև տարբեր կազմակերպությունների (նախարարություններ, միջազգային կազմակերպություններ և այլն) կողմից կազմակերպված 398 տեղային սեմինարների, դասընթացների, շնորհանդեսների, աշխատանքային հանդիպումների և այլն (այցեմասնակցությունների թիվը՝ 792, այդ թվում՝ 2019թ.՝ 320 (152), 2020թ.՝ 38 (20), 2021թ.՝ 38 (25), 2022թ.՝ 159 (85), 2023թ.՝ 237 (116)):

Նշված ժամանակաշրջանում Արմստատի 3525 աշխատակից մասնակցել է թվով 1096 առցանց միջոցառումների՝ տեսակոնֆերանսների, վեբինարների, վեբեքսների, դասընթացների, առցանց հանդիպումների, ֆորումների, շնորհանդեսների, հարցազրույցների, նիստերի և այլն (այդ թվում, 2019թ.՝ 6 (16), 2020թ.՝ 249 (907), 2021թ.՝ 359 (1103), 2022թ.՝ 279 (978), 2023թ.՝ 203 (521)):

Հաշվետու ժամանակաշրջանում Արմստատ են այցելել թվով 68 հանձնախմբեր և 142 փորձագետներ (այդ թվում, 2019թ.՝ 44 (75), 2020թ.՝ 5 (11), 2021թ.՝ 2 (3), 2022թ.՝ 9 (20), 2023թ.՝ 8 (33)) Համաշխարհային բանկից, GOPA կազմակերպությունից, Բաց տվյալների ձեռնարկության համար կենտրոնից, Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակից, Լատվիայի կենտրոնական վիճակագրական բյուրոյից, ԱՄՀ-ից, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից (Եվրոստատ), ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովից, Ուկրաինայի Վիճակագրության, հաշվապահության և աուդիտի ազգային ակադեմիայից, Իտալիայի Գյուղատնտեսական հետազոտությունների և էկոնոմիկայի խորհրդի վիճակագրական գրասենյակից, Թուրքմենստանի Վիճակագրական պետական կոմիտեից, Ռուսաստանի Դաշնության տնտեսագիտության բարձրագույն դպրոցից, Ֆրանսիայի վիճակագրության և տնտեսական հետազոտությունների ինստիտուտից, ԱԶԲ-ից, ՄԱԿ Կանայք-ից, Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» ԵՄ տարածաշրջանային ծրագրի շրջանակում Expertise France կազմակերպությունից, Իսլանդիայի ազգային վիճակագրական ինստիտուտից, Իտալիայի վիճակագրությունից, Մոլդովայի Հանրապետության վիճակագրության ազգային բյուրոյից, ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեից և Ռուսաստանի Պետական վիճակագրության դաշնային ծառայությունից, Միջազգային առևտրի կենտրոնից:

2019թ. ապրիլի 8-9-ը տեղի է ունեցել «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) տարածաշրջանային ծրագրի շրջանակում մեկնարկային առաքելությունը: Պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել Արմստատի ղեկավարության և ստորաբաժինների ղեկավարների հետ և մանրամասն քննարկել տարբեր ոլորտների ընթացիկ իրավիճակը, կարիքները, կատարելագործման ուղիները և մի շարք հարցեր կապված հայաստանյան վիճակագրությունը ԵՄ ստանդարտներին համապատասխանեցնելու վերաբերյալ: 2019թ. ընթացքում ծրագրի շրջանակում իրականացվել է 2 ուսումնական այցելություն: 2020, 2021 և 2022թթ. «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ԵՄ ծրագրի բոլոր միջոցառումներն իրականացվել են առցանց: 2022թ. մայիսի 20-ին տեղի է ունեցել STEP ծրագրի Հայաստանի համար Ազգային եզրափակիչ միջոցառումը, իսկ 2022թ. հունիսի 30-ին՝ ծրագրի եզրափակիչ միջոցառումը:

2019-2022թ. իրականացվել է Համաշխարհային բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի շրջանակում հաջողությամբ իրականացվել են Սեռով պայմանավորված բռնության ընտրանքային հետազոտությունը (տևողությունը՝ 8 ամիս), Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հետազոտությունը (տևողությունը՝ 8 ամիս), Գյուղատնտեսության կառուցվածքային հետազոտությունը (տևողությունը՝ 6 ամիս) և Անհատական բնակարանային շինարարության հետազոտությունը (տևողությունը՝ 12 ամիս):

Վերոնշյալ ծրագրի շրջանակում իրականացվել են նաև վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ և տեղական SS ցանցերի արդիականացում չորս մարզային գրասենյակներում՝ Իջևան (Տավուշի մարզ), Վայք (Վայոց ձորի մարզ), Եղվարդ (Կոտայքի մարզ) և Աշտարակ (Արագածոտնի մարզ):

ECASTAT դրամաշնորհային ծրագիրն ավարտվել է 2022թ. հունիսի 30-ին:

ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզում Արմստատի մասով ընդգրկված էին հետևյալ 10 միջոցառումները. Միգրացիայի վիճակագրության արտադրման կատարելագործում, Թափուր աշխատատեղերի վիճակագրության կատարելագործում, Կառուցվածքային բիզնես վիճակագրության մեթոդաբանության կատարելագործում, Ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրության կատարելագործում, ներառյալ մասնավոր հատվածը, «Ազգային հաշիվների համակարգ - 2008» և «Եվրոպական հաշիվների համակարգ - 2010» մեթոդաբանությունների համաձայն՝ ազգային հաշիվների համակարգում տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների վիճակագրության վարում և կատարելագործում, Տնտեսության ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածի (այդ թվում՝ պետական ոչ ֆինանսական կազմակերպությունների) ֆինանսների վիճակագրության բարելավում «Եվրոպական հաշիվների համակարգ - 2010» պահանջներին համապատասխան, Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրության կատարելագործում համաձայն «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» (6-րդ հրատարակություն), Օդի հաշիվների կազմում, Եվրոպական վիճակագրական համակարգի մեթատվյալների ստանդարտներ՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) մշակում, Ուսուցում հետևյալ դասակարգումների կիրառման ուղղությամբ. 1) Կրթության և ուսուցման ոլորտների միջազգային դասակարգիչ (ISCED-F 2013), 2) Զբաղմունքների միջազգային ստանդարտ դասակարգիչ (ISCO-08), 3) Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգիչ (ICSE-2018):

ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզում վիճակագրության մասով ընդգրկված բոլոր 10 միջոցառումներն իրականացվել են:

Արմստատը, համագործակցելով Համաշխարհային բանկի և «Էկոսերունդ» բնապահպանական, սոցիալ-տնտեսական զարգացման հասարակական կազմակերպության («Ecogeneration» environmental, socio-economic development NGO) հետ, Եվրոպական Միության ֆինանսավորմամբ «Տնտեսական կառավարում, գործարար միջավայր և արդարադատության բարեփոխումներ» (Economic Governance, Business Environment, & Justice Reform) ծրագրի շրջանակում 2023թ. իրականացրել է «Տնտեսավարող սուբյեկտների կողմից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» հետազոտություն:

2023թ. նոյեմբերի 24-ին Արմստատի կայքում հրապարակվել են հետազոտության վերաբերյալ մամուլի հաղորդագրությունը (https://www.armstat.am/file/doc/99541963.pdf), հետազոտության արդյունքների ամփոփ տվյալների ելքային աղյուսակը

(https://www.armstat.am/en/?nid=14) և մեթատվյալները «Որակի հռչակագրի» ձևաչափով (https://www.armstat.am/file/Qualitydec/eng/18.6.pdf):

Արմստատը մասնակցել է ԱԶԲ ներկայացուցիչների կողմից «Տվյալների զարգացման համար (II փուլ). KSTA 9646-REG» ծրագրի շրջանակում 2023թ. մայիսի 29-ից հունիսի 9-ը Երևանում և Արտաշատում կազմակերպված «Համակարգչի օգնությամբ անհատական հարցազրույցները՝ օգտագործելով Survey Solutions ծրագիրը» և «Գյուղատնտեսական տարածքների չափումը՝ օգտագործելով Գլոբալ տեղորոշման համակարգը (GPS)» խորագրերով ուսուցումներին և իրականացրել է գյուղատնտեսական նշանակության հողերի փորձնական չափագրում:

Նույն ծրագրի շրջանակում իրականացվել են 2018թ. ընթացիկ գներով և նախորդ տարվա գներով Հայաստանի ռեսուրսներ-օգտագործում աղյուսակի (SUT) կազմման առցանց աշխատանքները:

ԱԶԲ-ի «Նոր վիճակագրական ռեսուրսների մշակում և կարողությունների զարգացում տվյալների նոր աղբյուրներում և տեխնոլոգիաներում. JFPR TA 6856» ծրագրի շրջանակում Արմստատն իրականացրել է աշխատանքներ Սատելիտային հաշիվների (ջրի և օդի արտանետումներ հաշիվներ) կատարելագործման և սպառողական գների ինդեքսում սեզոնային ճշգրտման ներդրման ուղղությամբ:

ՄԱԿ Կանայք-ի օժանդակությամբ (Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության ու Ավստրիական Զարգացման Գործակալության ֆինանսավորմամբ) իրականացվող «Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում (WEESC)» ծրագրի շրջանակում Արմստատն իրականացնում է Ժամանակի օգտագործման հետազոտություն՝ ԺՕՀ (2023-2024թթ.):

Ծրագրի շրջանակում իրականացվել են աշխատակիցների վերապատրաստման մի շարք դասընթացներ, ցուցաբերվել է միջազգային փորձագիտական-մեթոդաբանական աջակցություն ՄԱԿ Կանայք-ի Վրաստանի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակների գործընկերների կողմից, 2023թ. հոկտեմբերի 23-ից մեկնարկել և ամենօրյա ռեժիմով ընթանում են ընտրված հասցեներում և համապատասխան գործիքակազմով ԺՕՀ տվյալների հավաքման, հավաքված տվյալների ստուգաճշտման, մեքենայական մշակման, ԺՕՀ օրագրերի տվյալների կոդավորման աշխատանքները՝ կիրառելով ԺՕՀ-երի համար ՄԱԿ-ի և Եվրոստատի կողմից մշակված համապատասխան դասակարգիչները:

«ՄԱԿ Կանայք»-ի հետ համատեղ պատրաստվել է ԺՕՀ մեկնարկի վերաբերյալ մամուլի հաղորդագրություն (հայերեն և անգլերեն), որը հրապարակվել է Արմստատի կայքում (https://armstat.am/file/doc/99540178.pdf, https://armstat.am/file/doc/99540183.pdf) և ֆեյսբուքյան էջում (https://m.facebook.com/story.php?story_fbid=638295038433827&id=100067600099415&mibextid=2JQ9oc)՝ հետազոտության նպատակի և ակնկալվող արդյունքների մասին հանրությանն իրազեկելու համար:

Նշված ժամանակաշրջանում շարունակվել են Արմստատի կայքում տեղադրված ԿԶՆ-ի ցուցանիշների ազգային հաշվետվողականության հարթակի արդիականացման և կատարելագործման աշխատանքները: 2019թ. սեպտեմբերի 17-ին Արմստատը մեկնարկել էր

նոր Ազգային հաշվետվողականության հարթակի (ԱՀՀ) գործարկումը ԿԶՆ-ի ցուցանիշների համար (http://sdg.armstat.am/): Արմստատը, ուսումնասիրելով ԱՄՆ-ի ԿԶՆ-ի ցուցանիշների համար ԱՀՀ-ն մշակելու փորձը և ուսուցողական նյութերը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակել էր հարթակի նախորդ տարբերակը: Հետագայում այն արդիականացվել է և շարունակվել են Արմստատի կայքում զետեղված ԿԶՆ-ի ցուցանիշների արդիականացման, կատարելագործման և համալրման աշխատանքները: Հայաստանը Բաց աղբյուրի տվյալների հարթակներ օգտագործող երկրների շարքում է: Այս հարթակը հանդիսանում է ազգային վիճակագրության, մեթատվյալների և հարակից տեղեկատվության գործիք՝ գլոբալ ԿԶՆ-ի ցուցանիշների համար: ԱՀՀ-ն ազգային վիճակագրության տարածման և հաշվետվողականության գործիք է գլոբալ ԿԶՆ-ի ցուցանիշների համար, որոնք ապահովում են ԿԶՆ-ի նկատմամբ առաջընթացի մշտադիտարկման շրջանակը: ԱՀՀ-ն համադրելի է, յուրաժամանակ, թափանցիկ և հրապարակայնորեն մատչելի ու օգտագործողի համար հարմարավետ:

Արմստատը, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի վիճակագրության բաժնի աջակցությամբ, 2023թ. մշակել է ԿԶՆ-ի ցուցանիշների միտումների գնահատման վահանակը, որը ներկայում գտնվում է գործարկման փուլում: Վահանակը տեսապատկերավորման գործիք է Հայաստանի Հանրապետությունում ԿԶՆ-ի առաջընթացը գնահատելու համար: Այն ապահովում է անհրաժեշտ փաստեր շահագրգիռ կողմերի ներգրավվածության և կայուն զարգացման առաջնահերթությունների համար: Այն նաև աջակցում է Կամավոր ազգային ակնարկների (VNR) պատրաստմանը:

Արմստատի ԿԶՆ-ի առաջընթացի վահանակը տրամադրում է երեք տեսակի տեսապատկերավորում. Առաջինը՝ ակնարկը ցույց է տալիս յուրաքանչյուր Նպատակի ցուցանիշների համամասնությունն ըստ իրենց առաջընթացի կարգավիճակի (առաջընթաց, լճացում, հետընթաց): Երկրորդ տեսապատկերավորումը ցույց է տալիս առաջընթացը բոլոր ժամանակային շարքերի համար (որոշ ցուցանիշներ կարող են բաղկացած լինել մի քանի ժամանակային շարքերից), ներառյալ դեզագրեգացիաները: Երրորդ տեսապատկերավորումը ցույց է տալիս փոփոխությունները 2020թ.-ից ի վեր: Ներկայում իրականացվում են Արմստատի կայքում Վահանակի զետեղման աշխատանքները:

Արմստատը հանդիսանում է վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման, պաշտոնական վիճակագրության արժեքի, ԿԶՆ-ի վիճակագրության, գենդերային վիճակագրության հաղորդակցման, Մարդահամարի և կացարանների հաշվառման, Ազգային հաշիվների, Շրջակա միջավայրի մոնիտորինգի և գնահատման, արտադրողների և օգտագործողների համար կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության, Շրջակա միջավայրի վիճակագրության և ցուցանիշների, բարեկեցության չափման ՄԱԿ-ի ԵՏՀ աշխատանքային, Բնակչության և սոցիալական վիճակագրության, Տնտեսական վիճակագրության, Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում աղետների վիճակագրության և «Փորձառության Տվյալների ինտեգրման համայնք» ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության Վիճակագրության

աշխատանքային խմբերի անդամ, Ծերացման և ըստ տարիքի դեզագրեգացված տվյալների գծով Թիչֆիլդ քաղաքի և Հաշմանդամության վիճակագրության գծով Վաշինգտոնի խմբի անդամ, ՄԱԿ-ի ՓԳՀ-ի Փախստականների և ներքին տեղահանված անձանց վիճակագրության հարցերով փորձագիտական խմբի անդամ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության գծով խորհրդատվական կոմիտեի անդամ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության գծով, ֆինանսների վիճակագրության գծով, ժողովրդագրական և ճյուղային վիճակագրության գծով ու տնտեսական վիճակագրության գծով ենթակոմիտեների անդամ, ԵԱՏՀ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման գծով, ԵԱՏՀ «2008թ. Ազգային հաշիվների համակարգ» միջազգային ստանդարտի ներդրման և վիճակագրական դասակարգիչների գծով և ԵԱՏՄ «ծախսեր-թողարկում» աղյուսակի գծով աշխատանքային խմբերի անդամ, ԵԱՏՄ ինտեգրման ներուժի ձևավորման և գնահատման համար «ծախսեր-թողարկում» երկրների և միջպետական աղյուսակների օգտագործման փորձագիտական խմբի անդամ և մասնակցել է դրանց աշխատանքներին:

«Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցության արդյունքում արդիականացվել է «Օգտագործողների բավարարվածության հետազոտության» հարցաթերթը (https://www.armstat.am/am/?nid=131), այն է՝ ավելացվել է «Ի՞նչն է արժեքավոր դարձնում վիճակագրությունը Ձեզ համար» հարցը, որը փորձարկվել է հետազոտողների, միջազգային կազմակերպությունների, նախարարությունների, գիտակրթական ոլորտի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում:

Նույն աշխատանքային խմբի շրջանակում մշակվել են Հայաստանի օրինակներ հետևյալ թեմաներով. Արժեքի չափումը Արմստատի օգտագործողների ընկալման միջոցով, Արժեքի չափումը Արմստատի Բաց ԿԶՆ-ի միջոցով, Արժեքի չափումը Արմստատի միկրոտվյալների գրադարանի միջոցով, Արժեքի չափումը մարդահամարի արժեքի միջոցով, Արժեքի չափումը Արմստատում հետազոտությունների համար միկրոտվյալների օգտագործման պայմանագրերի քանակի միջոցով:

ԿԶՆ-ի վիճակագրության աշխատանքային խմբի շրջանակում Արմստատը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ԿԶՆ-ի համար վիճակագրության ճանապարհային քարտեզի երկրորդ հրատարակության մշակմանը (https://unece.org/statistics/publications/CES-roadmap-sdg-2), որում ներառված են Հայաստանի օրինակները (https://unece.org/statistics/rm-country-case-studies) հետևյալ թեմաներով. Հայաստան. Հայաստանի հաշվետվողականության ազգային հարթակի տվյալները ԿԶՆ ցուցանիշների համար, Հայաստան. Արմստատի միկրոտվյալների գրադարան, Հայաստան. ԿԶՆ ցուցանիշներ՝ կապված երեխաների իրավունքների և իրավիճակի հետ, Հայաստան. ԿԶՆ վիճակագրության կարողությունների զարգացման համակարգումը Հայաստանում:

Նույն աշխատանքային խմբի շրջանակում առաջին անգամ Հայաստանի օրինակով 2021թ. հունվարի 27-28-ը փորձարկվել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված Կարողությունների զարգացման մատրիցան (օգտագործելով

Կարողությունների զարգացման մատրիցայի ուղեցույցը (https://statswiki.unece.org/display/SFSDG/GUIDELINES+AND+TOOLS/)):

2019թ. դեկտեմբերի 2-6-ը Իտալիայի, Նորվեգիայի և Սերբիայի վիճակագրական գրասենյակների և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետների կողմից իրականացվել է Արմստատի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտային գնահատումը (https://www.armstat.am/file/doc/99517668.pdf):

2022թ. հունիսի 13-16-ը Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է Շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտային գնահատումը (https://armstat.am/file/doc/99535193.pdf):

2022թ. հոկտեմբերի 18-20-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Իտալիայի և Հունգարիայի վիճակագրությունների փորձագետների կողմից իրականացվել է Վիճակագրական կազմակերպությունների համար Ընդհանուր Գործունեության Մոդելի (GAMSO) համաձայն՝ Արմստատի կողմից իրականացված փորձնական թեստավորման գնահատումը: Մոլդովայի վիճակագրության ազգային բյուրոյի ներկայացուցիչը միացել էր գնահատման թիմին որպես դիտորդ (https://armstat.am/file/doc/99533528.pdf):

2022թ. ապրիլի 25-ից մայիսի 6-ը ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների 30-ամյա հոբելյանի կապակցությամբ Արմստատը Միացյալ Թագավորության ազգային վիճակագրության գրասենյակի հետ համատեղ կազմակերպել է քարոզարշավ Սկզբունք 7. «Օրենսդրություն» վերաբերյալ (https://unece.org/FPOS30#accordion_6): Արմստատի կողմից հոբելյանի վերաբերյալ մշակվել է կայքէջ (https://armstat.am/am/?nid=870), ինչպես նաև զետեղվել է տեղեկություն ֆեյսբուքյան էջում (https://www.facebook.com/armstat.am):

2022թ. ապրիլի 25-ին հրապարակվել է «ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների 30-ամյակի կապակցությամբ՝ Սկզբունք 7 «Օրենսդրություն» Օրենքները, կանոնակարգերը և միջոցառումները, որոնց ներքո գործում են վիճակագրական համակարգերը, հրապարակային են» խորագրով մամուլի հաղորդագրություն (https://armstat.am/file/doc/99529778.pdf) և թողարկվել է տեսահոլովակ (https://vimeo.com/706450503/a24cc93f6d):

2023թ. հուլիսի 4-5-ը Երևանում՝ Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիան և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը՝ Արմստատի հետ սերտ համագործակցությամբ կազմակերպել էին միջազգային սեմինար՝ Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքի վերաբերյալ, որի ընթացքում քննարկվեցին Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքը (GLOS), Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման վերաբերյալ ուղեցույցը և մի շարք այլ հարցեր: Սեմինարին մասնակցում էին ներկայացուցիչներ ՄԱԿ-ի վիճակագրության բաժնից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայից, Ալբանիայից, Նորվեգիայից, Սերբիայից, Մոլդովայից, Վրաստանից, Ղրղզստանից, Ղազախստանից և Ուզբեկստանից:

2019-2023թթ. ընթացքում Արմստատի նախագահը մասնակցել է Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի աշխատանքներին որպես փոխնախագահ:

Նշված ժամանակաշրջանում Արմստատը մասնակցել է Եվրոստատի «Վիճակագրական համագործակցություն ընդլայնման և ԵՀՔ երկրների հետ» շրջանակում 2019-2023թթ. տվյալների հավաքագրմանը ԵՀՔ երկրներից՝ լրացնելով և ներկայացնելով տվյալների հավաքագրման համապատասխան հարցաթերթը:

2020թ. Պաշտոնական վիճակագրության միջազգային ասոցիացիայի (IAOS) վիճակագրական հանդեսում հրապարակվել է «Որտե՞ղ են պաշտոնական վիճակագրության սահմանները. Հայաստանի օրինակը» հոդվածը:

2022թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի շրջակա միջավայրի վիճակագրության սեկցիայի «nvstats» լրատուում «երկրի նորություններ» խորագրի ներքո հրապարակվել է «Հայաստանի փորձը շրջակա միջավայրի և ջրի հետ կապված վիճակագրության վերաբերյալ» հոդվածը (https://unstats.un.org/unsd/envstats/Newsletter/Issue52.pdf):

Արմստատի միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ /թվով 4849/, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 1164 հարցումների: Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2019-2023թթ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում Արմստատի կողմից լույս է ընծայվել 18 մամուլի հաղորդագրություն, տեղի են ունեցել 283 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Արմստատի կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 766 վիճակագրական աղյուսակներ, որոնցից՝ 115-ը՝ ամսական, 127-ը՝ եռամսյակային և 524-ը՝ տարեկան պարբերականությամբ, իսկ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության դեպարտամենտին՝ 641 վիճակագրական աղյուսակներ, որոնցից՝ 127-ը՝ ամսական, 84-ը՝ եռամսյակային և 430-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Իրականացվել են բանակցություններ և քննարկումներ վիճակագրության տարբեր բնագավառներում հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոստատի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՄԱԿ Կանայք-ի, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության, ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ԱՋԲ-ի, Իսլանդիայի, Ավստրիայի, Կանադայի, Դանիայի, Նորվեգիայի և Լեհաստանի վիճակագրական ծառայությունների, Գերմանական միջազգային

համագործակցության ընկերության (GIZ), Մինեսոտայի համալսարանի «IPUMS» Տվյալների ինտեգրման միջազգային կենտրոնի և այլն ներկայացուցիչների հետ:

2019-2023թթ. ընթացքում Արմստատի կողմից Խորհրդի որոշումներով տրամադրվել են հետևյալ տվյալների բազաները.

1. 2018թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին, Համաշխարհային Բանկին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրին, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամին, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը,

2. 2008-2018թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնին,

3. 2018թ. «Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին», «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ», «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ», «Մետրոպոլիտենի, ճոպանուղու և տրոլեյբուսային տրանսպորտի աշխատանքի մասին», «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին», «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» և «Ծառայությունների ծավալի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին», «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի աշխատանքի մասին», «Հեռուստառադիոծրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեության մասին», «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» հաշվետվությունների հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները, խմբավորված տարեկան կտրվածքով՝ Համաշխարհային բանկին,

4. 2017 և 2018թթ. «Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» վիճակագրական հաշվետվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ԱԶԲ-ին,

5. 2003-2018թթ. Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ և 2016-2018թթ.. Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկության հիման վրա ձևավորված բազաները և 2019թ. Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ և Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկության հիման վրա ձևավորված բազաները՝ ՀՀ ԿԲ-ին:

6. 2019թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ Համաշխարհային բանկին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ֆինանսների նախարարություններին, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան

գրասենյակին, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը, ԱԶԲ-ին, Աշխատանքի միջազգային կազմակերպությանը, քաղաքացի Լուսինե Կարապետյանին,

7. 2009-2019թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ վերլուծաբան Կարեն Սարգսյանին,

8. 2010-2019թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ՀՀ ԿԲ-ին,

9. 2020թ. տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին,

10. 2015, 2018 և 2019թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը,

11. 2020թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ ԿԲ-ին, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան հիմնադրամին, Պրիզմա հետազոտական կազմակերպությանը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը, ԱԶԲ-ին, Աշխատանքի միջազգային կազմակակերպությանը,

12. 2020թ. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև 1-ՏԳ և «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» ձև 3-Ֆ վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ՀՀ ԿԲ-ին,

13. 2010-2015թթ. և 2016-2020թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտին,

14. 2019-2021 թթ. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև 1-ՏԳ և «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» ձև 3-Ֆ վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ՀՀ ԿԲ-ին,

15. 2021թ. իրականացված գյուղատնտեսական ինտեգրված ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը,

16. 2021թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը, ՄԱԿ-ի Պարենի

համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամին,

17. 2021թ. տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան ըստ մշակութային և ստեղծարար կամ դրանց սպասարկող ոլորտների տնտեսական գործունեության հիմնական տեսակների, ինչպես նաև զբաղմունքի տեսակների քառանիշ դասակարգման՝ «Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ Հայաստան»-ին,

18. 2012 և 2018թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությանը,

19. 2021թ. տնային տնտեսություններում իրականացված Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված միկրոտվյալների բազան ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից իրականացվող Հայաստանի բարեվարքություն ծրագրին, ԱԶԲ-ին, Աշխատանքի միջազգային կազմակակերպությանը, ՀՀ ԿԲ-ին,

20. 2011-2021 թթ. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ և 2016-2021 թվականների «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ տարեկան վիճակագրական հաշվետվություններով հավաքված տեղեկության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ մարզի մակարդակով՝ Համաշխարհային բանկին,

21. 2022թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը և ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտին, ՀՀ ԿԲ-ին:

ՄԱՍ 5. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Արմստատի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է բարձրագույն կրթությամբ կադրերի՝ 98% գերակշռությամբ, որոնցից 52%-ը՝ տնտեսագետներ են: Աշխատակիցների 18.2%-ը կազմել են տղամարդիկ, 81.8%-ը՝ կանայք:

Արմստատի հաստիքների թվաքանակն ըստ տարիների անփոփոխ է՝ 342:

Հաշվետու ժամանակահատվածում Արմստատում կադրային շարժն ունեցել է հետևյալ պատկերը.

	2019թ.	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2023թ.**
Ընդունվել են	24	16	53	32	27
որից՝ քաղաքացիական ծառայողներ	22	13	53	29	26
Ազատվել են	38	19	53	37	31
որից՝ քաղաքացիական ծառայողներ	36	16	50	35	30

Վերապատրաստվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

2019թ.	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2023թ.**
38	29	12	77	86

Վերապատրաստման համար առաջարկված թեմաների և քաղաքացիական ծառայողների ու նրանց անմիջական ղեկավարների կողմից ներկայացված կարիքների ամփոփման արդյունքում Արմստատի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվել են վերապատրաստման ծրագրերը:

Վերապատրաստման դասընթացներն անցկացվել են առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» թիվ 2-Ն որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխանող բարձրակարգ մասնագետների կողմից: Դասընթացների ավարտից հետո կատարվել է արդյունքի գնահատում՝ թեստավորման միջոցով:

Հիմք ընդունելով ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի թիվ 3 որոշումը, քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման նոր համակարգին անցնելու հետ կապված կատարվել են համապատասխան աշխատանքներ՝ Արմստատի քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու ուղղությամբ:

Արմստատի գլխավոր քարտուղարի 20.03.2020թ. թիվ 114-Ա և 115-Ա հրամաններով հաստատվել են նոր չափանիշներով գնահատված և դասակարգված քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը:

Գործարկվել է «Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ» միասնական էլեկտրոնային ծրագիրը:

Կորոնավիրուսի «Covid-19» համավարակի կանխարգելման նպատակով իրականացվել է «Անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (covid 19) ախտորոշման ՊՇՌ-ի հետազոտության վերաբերյալ» Ձև 4 և «Անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (covid 19) դեմ պատվաստումային կարգավիճակի և բժշկական հակացուցումների վերաբերյալ» Ձև 5 գրանցամատյանների վարումը:

Կատարվել է «Հայկական ծրագրեր» հաշվապահական ծրագրով և Պետական եկամուտների կոմիտե հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով անձնակազմի վերաբերյալ տվյալների ներմուծման և այլ աշխատանքներ:

Սահմանված կարգով իրականացվել է սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատողների անձնական տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի մշտադիտարկում:

Մասնագիտական փորձառություն (պրակտիկա) է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, պետական կառավարման ակադեմիայի, Տավուշի Պատրիկ Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի՝ թվով 76 ուսանողների համար:

ՄԱՍ 6. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2019-2023թթ.-ին Արմստատի կողմից, ըստ առանձին տարիների, հրապարակվել և վիճակագրական տեղեկություն օգտագործողներին տրամադրվել է ընդհանուր թվով 301 անուն վիճակագրական հրապարակում (ներառյալ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն)), այդ թվում 2019թ.-ին՝ 60, 2020թ.-ին՝ 62, 2021թ.-ին՝ 61, 2022թ.-ին՝ 61 և 2023թ.-ին՝ 57 անուն հրապարակում:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական հաճախականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային հաճախականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային հաճախականությամբ զեկույցներում ընդգրկվել են «Անկախ պետությունների համագործակցության երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ» (ըստ Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների), «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «Արմստատի (Վիճակագրական կոմիտե) հրապարակումների ցանկը» հավելվածները:

Ամսական հաճախականությամբ հրապարակվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» և «Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը», եռամսյակային հաճախականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր» և «Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների և ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով՝ ըստ ծախսային բաղադրիչների», տարեկան հաճախականությամբ՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» «Նորածիններին ավելի հաճախ տրվող անուններն ըստ սեռի» և «Ծնվածների շրջանում առավել տարածված ազգանուններն ըստ սեռի» մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև առանձին թեմատիկ հաղորդագրություններ:

Վիճակագրական տեղեկության մատչելիության և միաժամանակյա հասանելիության ապահովման նկատառումներով բոլոր հրապարակումները զետեղվել են Արմստատի կայքում:

Շարունակվել է նաև Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը, ինչպես նաև

տարածքային կտրվածքով վիճակագրական ցուցանիշների բազաների համալրման աշխատանքները:

Արմստատի կայքի «Սկիզբ/Հրապարակումներ/(ըստ տարիների և/կամ ըստ տեսակի, թեմայի) ենթաբաժնում զետեղվել են «Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաք Երևանը թվերով» 2019-2023 թվականների երկլեզու (հայերեն և անգլերեն) վիճակագրական ժողովածուները, «Սկիզբ/Հրապարակումներ/Տարածքային վիճակագրություն» ենթաբաժնում քարտեզային, ինչպես նաև աղյուսակային պատկերմամբ զետեղվել են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 2018-2022 թվականների վերաբերյալ եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) վիճակագրական ամփոփ տեղեկություն, իսկ «Սկիզբ/Հրապարակումներ/ Ատլասներ» ենթաբաժնում՝ «Ատլաս Հայաստանի Հանրապետությունը մարզերով և քաղաք Երևանով»՝ 2019-2023թթ. եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) քարտեզային վիճակագրական էլեկտրոնային հրապարակումները, ինչպես նաև «Սկիզբ/Հրապարակումներ/ Տարածքային վիճակագրության ժողովածուներ» ենթաբաժնում՝ 2018-2022թթ. կտրվածքով 11 վիճակագրական էլեկտրոնային հրապարակումներ ՀՀ յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի վերաբերյալ:

Այդ համատեքստում պարբերաբար համալրվել է նաև Արմստատի բաց գրադարանի գրադարանային ֆոնդը (01.01.2020թ. դրությամբ՝ 13 055 միավոր, 01.01.2021թ. դրությամբ՝ 13 271 միավոր, 01.01.2022թ. դրությամբ՝ 13 409, 01.01.2023թ. դրությամբ՝ 13 505 և 01.01.2024թ. դրությամբ՝ 10 384 միավոր)[1]:

Վիճակագրական գրականության ֆոնդը համալրվել է ինչպես Արմստատի վիճակագրական հրապարակումների, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (մասնավորապես՝ ՄԱԿ-ի, ԱՄՀ-ի, Համաշխարհային Բանկի, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի և այլն) ստացված գրականության հաշվին:

Արմստատի բաց գրադարանում զետեղվել են նաև վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր և զեկույցներ) օրինակները:

[1] Նվազումը պայմանավորված է 2023թ.-ին իրականացված արխիվացման գործընթացով:

ՄԱՍ 7. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում պաշտոնական վիճակագրության ոլորտում իրականացված՝ Հնգամյա և տարեկան ծրագրերով նախանշված և այլ միջոցառումները ֆինանսավորվել են հետևյալ հիմնական աղբյուրներից.

1. ***ՀՀ պետական բյուջե***. նախատեսվել է ընդամենը 11 694 415.58 հազար դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2019 թվականին՝ 2 130 144.78 հազար դրամ, 2020 թվականին՝ 2 283 672.5 հազար դրամ, 2021 թվականին՝ 2 128 428.9 հազար դրամ, 2022 թվականին՝ 2 990 270.4 հազար դրամ և 2023 թվականին՝ 2 161 899.0 հազար դրամ: Փաստացի ծախսը կազմել է ընդամենը՝ 11 053 558.4 հազար դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2019 թվականին՝ 2 042 667.95 հազար դրամ, 2020 թվականին՝ 1 964 313.97 հազար դրամ, 2021 թվականին՝ 2 056 599.47 հազար դրամ, 2022 թվականին՝ 2 854 241.56 հազար դրամ և 2023 թվականին՝ 2 135 735.45 հազար դրամ: Ծախսը նախատեսվածի նկատմամբ կազմել է 94.5%, այդ թվում ըստ տարիների՝ 2019 թվականին՝ 95.9%, 2020 թվականին՝ 86.0%, 2021 թվականին՝ 96.6%, 2022 թվականին՝ 95.5% և 2023 թվականին՝ 98.8%:

2. ***Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհներ***. Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է ընդամենը՝ 1 234 691.51 հազար դրամի չափով, այդ թվում՝ ըստ տարիների՝ 2019 թվականին ֆինանսական հոսքեր չեն արձանագրվել, 2020 թվականին՝ 335 514.49 հազար դրամի, 2021 թվականին՝ 482 663.85 հազար դրամի, 2022 թվականին՝ 384 950.32 հազար դրամի, 2023 թվականին՝ 31 562.85 հազար դրամի չափով:

ԱՐՄՍՏԱՏ

Հայաստանի Հանրապետության
վիճակագրական կոմիտե



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Ա Կ Ն Ա Ր Կ

Նախագահ՝ Ստեփան Մնացականյան

Ընդհանուր տեղեկություն

Հայաստանի Հանրապետությունում **պաշտոնական** վիճակագրությունը, օրենքով լիազորված մարմինների կողմից **պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան**, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ մշակված, արտադրված և տարածված, **բացառապես վիճակագրական ծրագրերում արտացոլված վիճակագրությունն է**, որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները:

ՀՀ պաշտոնական վիճակագրության արտադրողներից բաղկացած ազգային վիճակագրական համակարգը ներառում է Արմստատը, որը ՀՀ վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմինն է, ՀՀ կենտրոնական բանկը և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողներ:

Արմստատը բաղկացած է կենտրոնական գրասենյակից և 10 մարզային ու Երևան քաղաքի վարչություններից և ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից:

Անվանումը՝	Արմստատ (ՀՀ վիճակագրական կոմիտե)
Կառավարման բարձրագույն մարմինը	ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ (ՀՀ ՎՊԽ)
Ղեկավարը՝	Արմստատի նախագահը միաժամանակ հանդիսանում է ՀՀ ՎՊԽ նախագահ

Ղեկավարը և ՀՀ ՎՊԽ-ի մնացած 6 անդամները նշանակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ 6 տարի ժամկետով:

Դիրքը պետական կառավարման համակարգում

Վարչական դիրքը. Արմստատը ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

Արմստատը որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող պետական մարմին է: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով:


Արմստատի աշխատակազմը միասնական համակարգ է, որն իր մեջ ներառում է գործառնական և տարածքային միավորներ: Անձնակազմի անդամները հիմնականում քաղաքացիական ծառայողներ են:

ՀՀ-ում պաշտոնական վիճակագրության **հիմքը** վիճակագրական ծրագրերն են: **Հնգամյա և տարեկան** ծրագրերը հաստատվում են ՀՀ ՎՊԽ կողմից և ֆինանսավորվում՝ ՀՀ պետական բյուջեից:

Արմստատի կառավարման բարձրագույն մարմինը 7 անդամից բաղկացած ՀՀ ՎՊԽ-ն է, որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ուժ ունեցող ակտեր:

ՀՀ ՎՊԽ-ի, Արմստատի նախագահի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների պաշտոնական վիճակագրության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի մասով՝ հասարակական հիմունքներով գործող հիմնական խորհրդատվական մարմինը **Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհուրդն է**:

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք Ը



Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ կետի՝ Վիճակագրության պետական խորհրդի անդամներն իրականացնում են համապատասխան բնագավառի համակարգումը:

Համառոտ պատմություն

1921թ. հոկտեմբերի 5-ին խորհրդային կարգերի հաստատումից գրեթե անմիջապես հետո, ՀԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշմամբ, ձևավորվել է Հայաստանի **պաշտոնական վիճակագրությունը**, իսկ 1922թ. հունվարի 7-ից սկսել է ծավալվել առաջին վիճակագրական մարմնի՝ ՀԽՍՀ վիճակագրական վարչության հիմնական գործունեությունը:

Մինչ 1990թ. Հայաստանի կենտրոնական վիճակագրության վարչության վիճակագրական աշխատանքն իրականացվել է ԽՍՀՄ կենտրոնական վիճակագրության վարչության անմիջական ղեկավարության ներքո:

ԽՍՀՄ փլուզումից հետո Արմստատի գործունեությունն անմիջականորեն իրականացվում էր ՀՀ կառավարության ուղղորդմամբ:

2000թ. Արմստատը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 2018թ. ապրիլի 9-ից ուժի մեջ մտած «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի համաձայն՝ որպես ՀՀ կառավարությանը ենթակա, սակայն իր լիազորություններն իրականացնելիս անկախ պետական մարմնի կարգավիճակ: Սկսած 2009թ. հունվարի 1-ից Հայաստանն ընտրվել է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի անդամ՝ չորս տարի ժամկետով (Տնտեսական և սոցիալական խորհրդի 2008թ. ապրիլի 29-ի նստաշրջան):

2015թ. հունիսի 15-17-ը Ժնևում տեղի է ունեցել ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 63-րդ հերթական լիակազմ նստաշրջանը: Համաձայն Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի և դրա Բյուրոյի աշխատանքները կառավարող կանոնների՝ Կոնֆերանսը ընտրել է իր Բյուրոն երկու տարի ժամկետով՝ **2015թ. հունիսից 2017թ. հունիսը**: Արմստատի նախագահ՝ Ս. Մնացականյանը ընտրվել է Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի Բյուրոյի փոխնախագահ 2015-2017թթ. համար և վերընտրվել Բյուրոյի փոխնախագահ 2017-2019թթ., 2019-2021թթ. և 2021-2023 թթ. համար:

Իրավական հիմքերը

- «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքն՝
  ընդունված 21.03.2018թ.
- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքն՝
  ընդունված 23.03.2018թ.,
- **Վիճակագրական ծրագրերը**.
  Հնգամյա ծրագիր (նորմատիվ գերատեսչական ակտ),
  Տարեկան ծրագիր (նորմատիվ գերատեսչական ակտ).

- ՀՀ ՎՊԽ որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը:

Վիճակագրական ծրագրի կազմման սկզբունքները

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը,
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին,
- երկարաժամկետ միջակայքում կայուն հաճախականությունը,
- տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը,
- օգտագործողների պահանջարկի ուսումնասիրությունը:


(«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14-րդ հոդված)

Հիմնական գործառույթները

- վիճակագրական ծրագրերին համապատասխան իրականացնում է պաշտոնական **վիճակագրության մշակումը, արտադրությունը և տարածումը.**
- ՀՀ ՎՊԽ կողմից սահմանված մեթոդների, ընտրանքի և անցկացման կարգին համապատասխան **իրականացնում է ընտրանքային հետազոտություններ**.
- օրենքով սահմանված կարգով **իրականացնում է համատարած հաշվառումներ**.
- ՀՀ ՎՊԽ կողմից սահմանված վիճակագրական փաստաթղթերի միջոցով **հավաքում է վիճակագրական տվյալներ** (այդ թվում՝ վարչական ռեգիստրներից).
- **վարում է** վիճակագրական, այդ թվում՝ բիզնես ռեգիստրներ.
- **վարում է** վիճակագրական տվյալների շտեմարաններ.
- **հավաքում է** անհրաժեշտ վիճակագրական տվյալներ քաղաքացիներից՝ նրանց կենսապայմանների, սոցիալ-ժողովրդագրական վիճակի, տնային տնտեսությունների և այլնի վերաբերյալ.

- օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին **իրականացնում է Վիճակագրական տեղեկատվության հավաքման ծրագիրը**.
- **կնքում է** համագործակցության պայմանագրեր, փոխըմբռնման հուշագրեր, **ընդունում է** համատեղ հրամաններ այլ պետությունների պաշտոնական վիճակագրություն իրականացնող մարմինների, միջազգային կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով.
- ՀՀ ՎՊԽ կողմից սահմանված կարգով պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համար **սահմանում է համակարգված տարածման քաղաքականությունը**՝ թափանցիկ ընթացակարգերով ազգային վիճակագրական համակարգում կիրառման համար, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության տարածման համար մեկ ընդհանուր տերմինաբանությունը.
- **համակարգում է** ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ամբողջ գործունեությունը՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի:

Հիմնական փաստաթղթեր



- ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները
- Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրքը
- Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման ձեռնարկը (անգլերեն)
- Պաշտոնական վիճակագրության մոդելային օրենքը Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն)
- Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հռչակագիրը
- Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքները (անգլերեն)
- Միջազգային վիճակագրական ինստիտուտի պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագիրը

Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները

(ընդունված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.94թ. ու ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից՝ Նյու-Յորք, 29.01.2014թ., Բանաձև 68/261)

1. Նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն
2. Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
3. Հաշվետվություն և թափանցիկություն
4. Սխալ օգտագործման կանխում
5. Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
6. Գաղտնիություն
7. Օրենսդրություն
8. Ազգային համակարգում
9. Միջազգային ստանդարտների օգտագործում
10. Միջազգային համագործակցություն

Սկզբունք 1. Պաշտոնական վիճակագրությունը հանդիսանում է անփոխարինելի տարր ժողովրդավարական հասարակութան տեղեկատվական համակարգում՝ տրամադրելով կառավարությանը, տնտեսությանը և հասարակությանը տվյալներ տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և շրջակա միջավայրի իրավիճակի վերաբերյալ: Այդ նպատակով պաշտոնական վիճակագրությունը, որը բավարարում է գործնական օգտակարության չափանիշները, պետք է հավաքագրվի և հասանելի լինի անկողմնակալ սկզբունքով պաշտոնական վիճակագրական գործակալությունների կողմից՝ հարգելով քաղաքացիների իրավունքը հանրային տեղեկատվության հանդեպ:

Սկզբունք 2. Պաշտոնական վիճակագրության հանդեպ վստահության պահպանման համար վիճակագրական գործակալությունները, համաձայն խիստ պրոֆեսիոնալ նկատառումների, ներառյալ գիտական սկզբունքները և պրոֆեսիոնալ էթիկան, պետք է որոշեն վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և ներկայացման մեթոդները և ընթացակարգերը:

Սկզբունք 3. Տվյալների ճիշտ մեկնաբանումը դյուրացնելու նպատակով, վիճակագրական գործակալությունները պետք է ներկայացնեն տեղեկատվություն համաձայն գիտական ստանդարտների՝ վիճակագրության աղբյուրների, մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ:

Սկզբունք 4. Վիճակագրական գործակալություններն իրավունք ունեն լուսաբանելու վիճակագրության սխալ մեկնաբանումը և սխալ օգտագործումը:

Սկզբունք 5. Վիճակագրական նպատակների համար տվյալները կարող են կազմվել բոլոր տեսակի աղբյուրներից՝ լինեն դրանք վիճակագրական հետազոտություններ թե վարչական գրանցումներ: Վիճակագրական գործակալություններն ընտրում են աղբյուրը՝ կապված որակի, յուրաժամանակության, ծախսերի և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետ:

Սկզբունք 6. Վիճակագրական մշակման համար վիճակագրական գործակալությունների կողմից հավաքագրված անհատական տվյալները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք վերաբերում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, խիստ գաղտնի են և պետք է օգտագործվեն բացառապես վիճակագրական նպատակների համար:

Սկզբունք 7. Օրենքները, կանոնակարգերը և միջոցառումները, որոնց ներքո գործում են վիճակագրական համակարգերը, պետք է հրապարակվեն:

Սկզբունք 8. Երկրներում վիճակագրական գործակալությունների միջև համակարգումը շատ կարևոր է վիճակագրական համակարգում հետևողականության և արդյունավետության հասնելու համար:

Սկզբունք 9. Միջազգային հիմնադրույթների, դասակարգումների և մեթոդների օգտագործումը վիճակագրական գործակալությունների կողմից յուրաքանչյուր երկրում նպաստում է վիճակագրական համակարգերի հետևողականությանը և արդյունավետությանը բոլոր պաշտոնական մակարդակներում:


Սկզբունք 10. Երկկողմ և բազմակողմ համագործակցությունը վիճակագրությունում նպաստում է պաշտոնական վիճակագրության համակարգերի բարելավմանը բոլոր երկրներում:

Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքով սահմանված սկզբունքները

(ընդունված է Վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ., Եվրոպական վիճակագրական համակարգի կոմիտեի կողմից՝ 28.09.2011թ. և 16.11.2017թ.՝ տե՛ս https://www.armstat.am/file/doc/99508963.pdf հղումը)


1. Պրոֆեսիոնալ անկախություն
2. Համակարգում և համագործակցություն
3. Մանդատ տվյալների հավաքման համար
4. Ռեսուրսների համապատասխանություն
5. Որակի հանձնառություն
6. Վիճակագրական գաղտնիություն
7. Անկողմնակալություն և օբյեկտիվություն
8. Հիմնավորված մեթոդաբանություն
9. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր
10. Ռեսպոնդենտների չափավոր ծանրաբեռնվածություն
11. Ծախսերի արդյունավետություն
12. Համապատասխանություն
13. Ճշգրտություն և արժանահավատություն
14. Յուրաժամանակություն և ճշտապահություն
15. Համաձայնեցվածություն և համադրելիություն
16. Մատչելիություն և պարզություն

Անձնակազմն ըստ մասնագիտությունների (որակավորման), 2023թ.




Անձնակազմն ըստ կրթական մակարդակի, 2023թ.


*Ընդհանուր թվաքանակը 2023թ. կազմել է **305** անձ:*



Իրականացված բյուջետային փաստացի ծախսերի կառուցվածքը, 2023թ.



Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքը (Ցանցեր, Կայքեր և Աշխատանքային կայաններ)



Պարբերաբար իրականացվող վիճակագրական հետազոտություններ

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ.



1. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն

2. Տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտություն

Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի շրջանակում՝ ՄԱԿ Կանայք-ի ֆինանսավորմամբ.

3.Ժամանակի օգտագործման հետազոտություն

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

- Հայաստանի Հանրապետությունում **առաջին ազգային** մարդահամարն անց է կացվել **2001թ. հոկտեմբերի 10-ից 19-ը**:

			քաղաքային	գյուղական	տղամարդ	կին
Մշտական բնակչություն	3 213 011	որից՝	2 066 153	1 146 858	1 541 999	1 671 012
Առկա բնակչություն	3 002 594		1 945 514	1 057 080	1 407 220	1 595 374

- Հայաստանի Հանրապետությունում երկրորդ մարդահամարն անց է կացվել 2011թ. հոկտեմբերի 12-ից 21-ը:

			քաղաքային	գյուղական	տղամարդ	կին
Մշտական բնակչություն	3 018 854	որից՝	1 911 287	1 107 567	1 448 052	1 570 802
Առկա բնակչություն	2 871 771		1 847 134	1 024 647	1 346 729	1 525 042

- Հայաստանի Հանրապետությունում **երրորդ** Մարդահամարն անց է կացվել

2022թ. հոկտեմբերի 13-22-ը,

համակցված եղանակով (բնակչության պետական ռեգիստրի գրանցումների հիման վրա և 25 % ընտրանքի հարցումներով)

			քաղաքային	գյուղական	տղամարդ	կին
Մշտական բնակչություն	2 932 731	**որից՝**	1 871 913	1 060 818	1 384 481	1 548 250
Առկա բնակչություն	2 689 438		1 764 551	924 887	1 251 496	1 437 942

Հայաստանի Հանրապետության Մարդահամարների արդյունքներն ըստ հանրապետության և ք.Երևանի ու ՀՀ մարզերի ցուցանիշներով հրապարակումները զետեղված են Արմստատի պաշտոնական կայքում (տես՝ **https://armstat.am/am/?nid=743** *հղումը):*

Գյուղատնտեսական համատարած հաշվառում

Հայաստանի Հանրապետությունում առաջին գյուղատնտեսական համատարած հաշվառումն անց է կացվել 2014 թ. հոկտեմբերի 11-31-ը ներառյալ:

2016թ. հոկտեմբեր-դեկտեմբերին իրականացվել են ԳՀՀ արդյունքների ամփոփման, ելքային աղյուսակների կազմման աշխատանքները, հրապարակվել, ինչպես նաև Արմստատի պաշտոնական կայքում զետեղվել է «Հայաստանի Հանրապետությունում 2014 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուն (հայերեն, ռուսերեն և անգլերեն), որի շնորհանդեսը տեղի է ունեցել 2016թ. դեկտեմբերի 23-ին՝ Կոնգրես հյուրանոցի Շքասրահում:

Արմստատի պաշտոնական կայքում զետեղվել են նաև Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի (առանձին) «2014 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուները (հայերեն, անգլերեն):


Պաշտոնական կայք՝ **https://armstat.am/am/**

Հայաստանի Հանրապետությունում *2023թ. հոկտեմբերի 11-31-ը* ներառյալ անց է կացվել փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում

Փորձնական ԳՀՀ-ն անց է կացվել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթափ և ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բամբակաշատ ու Նոր Արմավիր բնակավայրերում, համապատասխանաբար, շուրջ 2 325, 1 040 և 340 անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններում՝ ընդամենը 3 705 տնտեսություն


*Հայաստանի Հանրապետությունում երկրորդ գյուղատնտեսական համատարած հաշվառումն Արմստատը նախատեսել է իրականացնել **2024 թ. հոկտեմբերի 11-31-ը:***

ԿԱՊԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՀԵՏ



ՏԵՍԼԱԿԱՆ

Ինտեգրված պետական վարչական ռեգիստրների համակարգի մոդելը* ՀՀ համար



*Մգացված օղակները ներկայացնում են ինտեգրված պետական վարչական ռեգիստրների համակարգի տեղեկատվական հոսքերի վերջին ամփոփման ապրանները:

Տեղեկատվության տարածում և հաղորդակցություն

- Տեղեկատվության տարածման և հաղորդակցության քաղաքականություն
  https://www.armstat.am/file/doc/99509633.pdf
- Տեղեկատվության տարածման և հաղորդակցության ռազմավարություն
  https://www.armstat.am/file/doc/99509643.pdf
- Հաղորդակցության ռազմավարություն
  https://www.armstat.am/file/doc/99520098.pdf
- Հայաստանի ազգային հաշիվների ցուցանիշների վերանայման քաղաքականությունը և վերանայման ժամանակացույցը
  https://armstat.am/am/?nid=368

Վիճակագրական հրապարակումներ

- Վիճակագրական հրապարակումների համացանկ
- Ազգային ամփոփ տվյալների էջ
- «Ատլաս»՝ ՀՀ-նն ըստ մարզերի և Երևան քաղաքի
- Հայաստանի վիճակագրական տարեգիրք
- Վիճակագրական ժողովածուներ
- Վիճակագրական տեղեկագրեր
- Վիճակագրական զեկույցներ
- Տեղեկատվական ամսական զեկույցներ
- Մամուլի հաղորդագրություններ
- Տվյալների բազաներ
- Սոցիալական մեդիա https://www.facebook.com/armstat.am




Տվյալների բազաներ

- ԱՐՄՍՏԱՏԲԱՆԿ
https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
- ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆԵՐ
https://www.armstat.am/am/?nid=160

- ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆԵՐ
https://www.armstat.am/am/?nid=14

- ՄԻԿՐՈՏՎՅԱԼՆԵՐ
https://www.armstat.am/am/?nid=15

- ՄԻԿՐՈՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ (անգլերեն)
http://microdata.armstat.am/index.php/home



Միկրոտվյալներ

https://www.armstat.am/am/?nid=15

- Տնային տնտեսությունների հետազոտություն
- Մարդահամար և ժողովրդագրություն
- Աշխատանքի շուկա
- Գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2014թ.

Համաշխարհային Բանկի միկրոտվյալների գրադարան

- Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (ILCS)
- Աշխատուժի հետազոտություն (LFS)

Տարածման գործիքներ


Ազգային Հաշվետվողականության Հարթակ
«Հայաստանի տվյալները Կայուն Զարգացման Նպատակների համար»
http://sdg.armstat.am/am/



ԿԶՆ-ի ցուցանիշների միտումների գնահատման վահանակ

https://sdg.armstat.am/dashboard/

Գործարկվել է որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտների կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներին օժանդակելու նպատակով



Միջազգային համագործակցություն

Գնահատումներ

- 2008թ. տեղի է ունեցել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից Արմստատի Գնահատումը, որի արդյունքում 2009թ. հրապարակվել է զեկույց «Հայաստանի Հանրապետություն. ստանդարտների և կանոնների կատարման վերաբերյալ զեկույց - տվյալների մոդուլ, իշխանությունների կողմից պատասխան և մանրամասն գնահատում՝ օգտագործելով տվյալների որակի գնահատման շրջանակը», ԱՄՀ-ի երկրի վերաբերյալ No. 09/50 զեկույց (http://www.armstat.am/file/doc/99457343.pdf):

- 2009թ. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետների կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության ազգային համակարգի Գլոբալ Գնահատումը (http://www.armstat.am/file/doc/99457348.pdf):

- 2014թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատումը (http://www.armstat.am/file/doc/99487953.pdf):

- 2018թ. Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի փորձագետների կողմից իրականացվել է Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումը (http://www.armstat.am/file/doc/99513323.pdf):

Ոլորտային գնահատումներ

- 2014թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է միգրացիայի վիճակագրության ոլորտային գնահատումը Հայաստանի Հանրապետությունում (http://www.armstat.am/file/doc/99492303.pdf):

- 2016թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է զբոսաշրջության վիճակագրության ոլորտային գնահատումը Հայաստանում (http://www.armstat.am/file/doc/99501893.pdf):

- 2017թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է Հայաստանում Աշխատուժի հետազոտության ոլորտային գնահատումը (http://www.armstat.am/file/doc/99507373.pdf):

- 2019թ. Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական
- հանձնաժողովի փորձագետների կողմից **իրականացվել է Հայաստանում պաշտոնական վիճակագրության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտային գնահատումը** (https://armstat.am/file/doc/99517668.pdf):

- 2022թ. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Իտալիայի և Հունգարիայի փորձագետների կողմից իրականացվել է Հայաստանում Վիճակագրական կազմակերպությունների ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ներդրման ոլորտային գնահատումը (https://armstat.am/file/doc/99533528.pdf): Մոլդովայի վիճակագրության ազգային բյուրոյի ներկայացուցիչը միացել էր գնահատման թիմին որպես դիտորդ:

- 2022թ. Եվրոստատի փորձագետների կողմից իրականացվել է Հայաստանի շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտային գնահատումը (https://armstat.am/file/doc/99535193.pdf):

Միջազգային համագործակցության ընթացիկ և իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկությունը զետեղված է կայքում **(https://armstat.am/am/?nid=72)**

Երիտասարդ վիճակագիրների վերապատրաստում

2017 – 2019թթ. ընթացքում Արմստատի 12 երիտասարդ վիճակագիր վերապատրաստվել են Բուլղարիայի ազգային վիճակագրական ինստիտուտում:



Դասակարգիչներ

- Հայաստանի Հանրապետության «Կրթության ազգային դասակարգիչ»
- Ֆինանսական ակտիվների Հայաստանի Հանրապետության դասակարգիչ
- Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչ
- Վարչատարածքային բաժանման միավորների» դասակարգիչ (ուժի մեջ է 12.02.2023թ.)
- Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ
- Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգիչ (6-նիշ մակարդակ)
- Զբաղմունքների դասակարգիչ
- Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ
- Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչ
- Հիմնական ֆոնդերի վիճակագրական դասակարգիչ
- Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ռուս. 2002թ) (ռուս. 2007թ)
- (ռուս. 2012թ) (հայերեն. 2015թ) (ռուս. 2017) (ռուս. 2021թ)
- Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակ)
- Մեծածախ և մանրածախ առևտրի ծառայությունների, ավտոտրանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգման ծառայությունների դասակարգիչ (9 նիշ մակարդակ)
- Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչ

Դասակարգիչների անցումային բանալիներ

- Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ-2017) 4-րդ նիշ, Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ-2008) 6-րդ նիշ և Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ.2) 4-րդ նիշ մակարդակների միջև անցումային բանալիների համեմատական աղյուսակ
- Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 1-ին և 2-րդ խմբագրությունների տնտեսական գործունեության տեսակների ու դրանց ծածկագրերի անցումային բանալիների համեմատական աղյուսակ
- Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգչի անցումային բանալիներ, 2017-2023թթ.

Դասակարգչային հավաքական խմբավորումներ

- Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորումն՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏԴ խմբ.2)
- Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորումն՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏԴ խմբ.2)
- Զանգվածային տեղեկատվության միջոցների ու կոնտենտի ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորումն՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏԴ խմբ.2)
- Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի դասակարգչային հավաքական խմբավորումը՝ համաձայն «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգչի» (ԱԴԳՏ-2008) և «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի» (ԱՏԳ ԱԱ)
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտի հավաքական խմբավորումներ

Միջազգային ստանդարտներ

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (ՏՏՀՍ) 2003թ. նոյեմբերի 7-ից՝ դառնալով այդ ստանդարտին անդամագրված 54-րդ երկիրը:

«…Երկրները, որոնք մասնակցում են Տվյալների տարածման ընդհանուր համակարգին (ԱՄՀ ՏՏԸՀ), կարող են դիտարկվել որպես երկրներ, որոնք պարտավորություն են ստանձնում բարելավել համապատասխան վիճակագրական ցուցանիշների որակը, մինչդեռ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (ԱՄՀ ՏՏՀՍ) մասնակցող երկրները կարող են դիտարկվել որպես ավելի զարգացած վիճակագրական կարողություն ունեցողներ՝ ՏՏԸՀ մասնակցող և ընդհանրապես համակարգին չմասնակցող երկրների համեմատ:»

(Regional development of statistics in Asia and the Pacific, Note by the Secretary-General, paragraph 37. UN, Economic and Social Council, Statistical Commission, 40th session, 24-27 February 2009. document E/CN.3/2009/15)

ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐ

- Մեթատվյալների մշակման ծրագիր 2021-2023 թթ. https://www.armstat.am/file/doc/99537463.pdf

- Հղման մեթատվյալներ
https://www.armstat.am/am/?nid=836
Մեթատվյալներ (ESMS)

- Որակի հաշվետվություններ (ESQRS)
https://armstat.am/am/?nid=837

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

- Վիճակագրական բառարան՝ https://www.armstat.am/am/?nid=29
- Որակի բառարան՝ https://www.armstat.am/am/?nid=751
- GSBPM բառարան՝ https://www.armstat.am/am/?nid=880
- Գործելակերպի կանոնագրքի բառարան՝ https://armstat.am/am/?nid=786

ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՈՐԱԿ

- Որակի քաղաքականություն (հաստատված՝ ՀՀ ՎՊԽ 20.06.2016թ. N 17-Ա որոշմամբ)՝ https://www.armstat.am/am/?nid=25,
- Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ՝ https://www.armstat.am/am/?nid=372,
- Որակի հռչակագրեր՝ https://www.armstat.am/am/?nid=545,
- Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդել (GSBPM)՝ https://www.armstat.am/am/?nid=373,
- Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդել GAMSO)՝ https://www.armstat.am/am/?nid=909

Միջազգային մեթոդաբանական ուղեցույցներ և ձեռնարկներ

https://www.armstat.am/am/?nid=371

Մեթատվյալներ և ստանդարտներ

- Որակի և մեթատվյալների հաշվետվությունների եվրոպական վիճակագրական համակարգի ձեռնարկ, 2020 թ. հրատարակություն (անգլերեն)
- Ընդհանուր վիճակագրական բիզնես գործընթացի մոդել (GSBPM), տարբերակ 5.1 (անգլերեն , ռուսերեն)
- Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդել (GAMSO), տարբերակ 1.2 (անգլերեն), տարբերակ 1.1 (ռուսերեն)
- Վիճակագրական արտադրության ընդհանուր ճարտարապետություն (CSPA), տարբերակ 2.0 (անգլերեն)
- Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդել (GSIM), տարբերակ 1.1 (անգլերեն)
- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Մեծ տվյալների գրապահոց (անգլերեն)

Ազգային հաշիվների համակարգ

- Ազգային հաշիվների համակարգ, 1993 (անգլերեն,)
- Ազգային հաշիվների համակարգ, 2008 (անգլերեն, ռուսերեն)
- Ազգային հաշիվներում գների և ծավալների չափման ձեռնարկ, 2001 (անգլերեն)
- Եռամսյակային ազգային հաշիվներ, 2001 (անգլերեն, ռուսերեն)
- Եվրոպական հաշիվների համակարգ, 1995 (անգլերեն)
- Մշտական գներով համախառն ներքին արդյունքի գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղեցույց, 2000 (ռուսերեն)
- Մշտական գներով համախառն ներքին արդյունքի գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղեցույց, 2005 (ռուսերեն)
- Չդիտարկվող տնտեսության չափման ուղեցույց, 2002 (անգլերեն, ռուսերեն)

Արդյունաբերություն (ներառյալ՝ էներգետիկա)

- Արդյունաբերության վիճակագրության միջազգային ուղեցույց, 2008 (անգլերեն, ռուսերեն)
- Էներգետիկայի վիճակագրության վերաբերյալ ուղեցույց (անգլերեն, ռուսերեն)
- Էներգետիկ վիճակագրության վերաբերյալ ձեռնարկ (անգլերեն, ռուսերեն)



Գյուղատնտեսություն

- Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության ձեռնարկ (անգլերեն)

Արտաքին տնտեսական գործունեություն

- Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն. հիմնադրույթներ և սահմանումներ, 2010 (անգլերեն, ռուսերեն)
- Զբոսաշրջության սատելիտային հաշիվ, 2008 (անգլերեն, ռուսերեն)
- Զբոսաշրջության վիճակագրության միջազգային ուղեցույց, 2008 (անգլերեն, ռուսերեն)
- Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրության ձեռնարկ, 2010 (անգլերեն, ռուսերեն)
- Վճարային հաշվեկշռի ձեռնարկ, 5-րդ խմբ. (անգլերեն)
- Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ, 6-րդ խմբ. (անգլերեն, ռուսերեն)
- Օտարերկրյա ուղղակի ներդրումների ՏՋՀԿ ստանդարտ սահմանում, 4-րդ խմբ., 2008 (անգլերեն , ռուսերեն)
- Արտաքին պարտքի վիճակագրություն, Ուղեցույց կազմողների և օգտագործողների համար, 2014 (անգլերեն)

Ժողովրդագրություն

- Միջազգային միգրացիայի վիճակագրության ուղեցույց, 1998 (անգլերեն, ռուսերեն)
- «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ», 2006 (անգլերեն, ռուսերեն)
- 2020թ. շրջափուլի մարդահամարների և կացարանների հաշվառման ուղեցույցեր և հանձնարարականներ, (անգլերեն , ռուսերեն)
- «2020թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ»,
  ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2015, (անգլերեն , ռուսերեն)

Ֆինանսներ

- Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ, 2001 (անգլերեն, ռուսերեն)
- Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ, 2014 (անգլերեն)

Բիզնես-ռեգիստրի

- Կարճաժամկետ բիզնես վիճակագրության մեթոդաբանություն, 2006 (անգլերեն)
- Հետազոտության ընտրանքի ուղեցույց (անգլերեն)
- Վիիճակագրական բիզնես ռեգիստրների ուղեցույց, 2015 (անգլերեն, ռուսերեն)

Գներ և սակագներ

- Սպառողական գների ինդեքսների հաշվարկման կիրառական ուղեցույց, 2009 (անգլերեն)
- «Սպառողական գների ինդեքսի ձեռնարկ. տեսություն և կիրառում, 2004» (ԱՄԿ/ԱՄՀ/ՏՀԶԿ/ՄԱԿ ԵՏԽ/ Եվրոստատ/ՀԲ) ձեռնարկ (անգլերեն, ռուսերեն)
- Արդյունաբերողների գների ինդեքսի ձեռնարկ, (անգլերեն)
- Արտահանման և ներմուծման գների ինդեքսի ձեռնարկ, 2009 (անգլերեն)

Սոցիալական վիճակագրություն

- Մեթոդաբանական նշումներ ինովացիայի վիճակագրության վերաբերյալ

Առևտուր և այլ ծառայություններ

- Տեղեկատվական տնտեսության վերաբերյալ վիճակագրության արտադրման ուղեցույց, Միավորված Ազգերի առևտրի և զարգացման գծով կոնֆերանս,Միավորված Ազգերի հրապարակում, 2007 (անգլերեն)

Գենդեր

- Ժամանակի օգտագործման Եվրոպական ներդաշնակեցված հետազոտությունների իրականացման ուղեցույց-2018թ.(2019թ.հրատարակություն) (անգլերեն)
- Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակագրության արտադրության ուղեցույց-վիճակագրական հետազոտություններ, ՄԱԿ 2014թ. (անգլերեն , ռուսերեն)
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության Կանանց առողջության և կենսափորձի վերաբերյալ բազմազգ ուսումնասիրություն (անգլերեն)
- Ժամանակի օգտագործման վիճակագրության համար գործունեության տեսակների միջազգային դասակարգիչ (ICATUS 2016), ուղեցույցներ, ՄԱԿ վիճակագրական դեպարտամենտ(անգլերեն)

Գրադարան

Արմստատում գործում է բաց գրադարան, որտեղ առկա են Արմստատի բոլոր վիճակագրական արտադրանքները, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների վիճակագրական հրապարակումները, մեթոդաբանական ձեռնարկները և դասագրքերը, վիճակագրության ոլորտը կարգավորող ազգային և վերազգային իրավական բնույթի փաստաթղթերը և այլն:

Գրադարանը գործում է՝ երկուշաբթիից - ուրբաթ - 9.00 - 18.00

Հեռախոս: (+ 374 11) 56 03 49

Պաշտոնական կայք՝ http://www.armstat.am

Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010,
Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3,
Արմստատ (ՀՀ վիճակագրական կոմիտե), 731 սեն.



0010, Երևան, Հանրապետության պողոտա,

Կառավարական շենք, 3

☎ *(+374 11) 52-33-56*

Էլեկտրոնային փոստ՝ **info@armstat.am**

Արմստատի կայք՝ **http://www.armstat.am**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ» ԿԱՏԱՐՄԱՆ

Թողարկման պատասխանատու՝

Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին